


ԿԱԼԱՆԱԿԱՅՐԵՐԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ



բանաստեղծություն արձակ
հրապարակախոսություն



Գիրքը հրատարակվել է
Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության
հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի աջակցությամբ՝
«Կալանավորների վերադարձը հասարակություն»
ծրագրի շրջանակում

Իմ մայր Հայաստան,
ասում եմ, որ դու ինձ սիրում ես՝
քո ամբողջ սահմանադրությամբ:

Վահան Հարությունյան

Կալանավայրերի գրականությունը

VERSUS
ս տ ո լ դ ի ա

2001

Առաջարկ

Այս ժողովածուն առաջին փորձն է կալանավայրերում ստեղծված գրականությունը՝ չափածո, արձակ, հրապարակախոսություն, ի մի բերելու։

Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի աջակցությամբ, «Վերսուս Ստուդիայի» կողմից իրականացվող «Կալանավորների վերադարձը հասարակություն» ծրագրի մի մասն է սա, որ նպատակ ունի այս ձեռով եւս հասարակության ուշադրությունը սեւեռել կալանավորների հիմնախնդիրների վրա։

Ժողովածուն պատրաստելիս դիմել էինք ՆԳՆ քրեական պատիժների իրականացման վարչությանը՝ ակնկալելով համագործակցություն կալանավորների ստեղծագործությունները հավաքելու հարցում։ Ցավոք՝ անարդյունք։ Հակված ենք կարծելու, որ դա կալանավորների՝ այդ մարմնի նկատմամբ ունեցած, անվստահության հետեւանք էր, ինչն ինքնին դրական երեւույթ չէ։

Այնուամենայնիվ մեզ հաջողվեց մեր առաջին փորձի ընթացքում ներկայացնել կալանավայրերի 20-ից ավելի հեղինակների, որոնց ստեղծագործությունները տրամադրելու համար շնորհակալություն ենք հայտնում Աշոտ Բլեյանին, «Առավոտ» թերթի թղթակից Ռուզան Մինասյանին, Նախկին կալանավորներ Պավել Սարգսյանին եւ Հարություն Գրիգորյանին։

Ժողովածուն կազմելիս զերծ ենք մնացել խմբագրական միջամտություններից, աշխատելով պահպանել բնագրերի ոճը, շարադասությունը եւ նույնիսկ կետադրությունը։

Կատարվել են միայն ուղղագրական փոփոխություններ:
Ժողովածուում զետեղել ենք հատվածներ Եղիշե Չարենցի
«Երեւանի Ուղղիչ Տնից» հուշագրությունից՝ այն դիտելով
որպես հայ գրականության մեջ կալանավայրերի թեմայով
ստեղծված ամենաարժեքավոր գործերից մեկը:
Վերջին էջերում ներկայացրել ենք ՄԱԿ-ի
«Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն
ստանդարտ կանոնները»:
Հույս ունենք, որ հետագայում եւս հնարավորություն
կունենանք շարունակել կալանավորների գրական գործերի
հրատարակումը:
Ժողովածուի տպաքանակի մի մասը տրամադրվելու է
կալանավորներին, ուստի խնդրում ենք ընթերցողներին
ուղարկել իրենց գործերը՝ «Վերսուս Ստուդիա», Երեւան,
Կորյունի փ. 5 հասցեով:

Օգնեք նրանց վերադառնալ հասարակություն

Փշալարերի այս կողմում մենք ենք, մյուսում՝ նրանք: Մենք օտարել ենք նրանց հասարակությունից: Գրեթե ոչինչ չգիտենք այնտեղի կյանքի մասին, մեզ միայն անհանգստացնում է հանցագործությունների օրեցօր ավելացող թիվը: Ու մեզնից շատերին թվում է, որ մարդկանց փակելով փշալարերով արգելապատված հաստատություններում, կարելի է կանգնեցնել այդ աճը:

Պատժելով հանցագործություն կատարած մարդուն, արդարադատության համակարգը նրան մեկուսացնում է հասարակությունից: Սակայն, եթե նույնիսկ ընդունենք, որ իրականացվել է արդար դատ, միեւնույն է, արդարադատությունն ավարտվում է կալանավայրերի դարպասների մոտ: Փշալարերից այն կողմ ամեն քայլափոխի ոտնահարվում են կալանավորի իրավունքները: Օրենքով նախատեսված պատիժը կրելիս, ազատագրվածը կալանավայրում ենթարկվում է նվաստացուցիչ վերաբերմունքի, ոտնահարվում է նրա արժանապատվությունը, մարդու արժանապատվությունը: Արդարադատությունը պետք է ուղեկցի կալանավորին ամենուր՝ խցում, ճաշարանում, բաղնիքում, տեսակցության սենյակում...

Նրանք մի օր վերադառնալու են: Եւ այնտեղ նրանց արժանապատվության ոտնահարումը, այստեղ մենք զգալու ենք վաղը, երբ նրանք վերադառնան ու տեղ չգտնեն մեր կողքին:

Ազատագրվման վայրերի աշխարհը մարդկային տառապանքների մի սարդոստայն է: Այնտեղ միշտ լույսի կարիք կա: Եւ ամեն մի շող կարող է ոգեւորել, մի քիչ թեթեւացնել նրանց տառապանքները: Մենք պարտավոր ենք օգտագործել այդ լույսը նրանց հասցնելու ամենաչնչին հնարավորությունը: Այս գիրքը այդպիսի մի փորձ է:

Էդիկ Բաղդասարյան
«Կալանավորների վերադարձը հասարակություն»
ծրագրի ղեկավար

Բանտարկյալների հետ վարվեցողության ընթացքում պետք է ընդգծել ոչ թե նրանց բացառումը հասարակությունից, այլ այն հանգամանքը, որ նրանք շարունակում են մնալ նրա անդամները: Ուստի բոլոր այն տեղերում, երբ դա հնարավոր է, հասարակական կազմակերպություններին անհրաժեշտ է ներգրավել հիմնարկների անձնակազմի հետ համագործակցության մեջ՝ նպատակ ունենալով բանտարկյալների վերադարձը հասարակություն:

Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոններ

Չանցանքի համար նրանք արդեն իսկ կրել են իրենց պատիժը եւ վերադարձել են, բայց այստեղ նրանց շարունակում են դիտել որպես հանցագործ: Նրանք ստիպված են լինում ապրել այս հակասության պայմաններում այս հասարակության մեջ եւ շատ հաճախ վերադառնում են կալանավայրեր՝ պատասպարվելու հենց հասարակությունից:

Մենք ունենք շատ կալանավորներ, որովհետեւ մեր հասարակությունը հանդուրժող չէ: Եւ յուրաքանչյուր ոք, ով երբեւիցե հայտնվել է ազատագրվման վայրերում եւ վերադառնում է, հասարակությունը պետք է պատրաստ լինի նրա հետ երկխոսության, նրան իր մեջ ընդունելու եւ ոչ թե ինքը՝ նախկին հանցագործը, պետք է ճանապարհ հարթի իր համար:

Վարդան Չարությունյան Նախկին քաղբանտարկյալ

Բարդ են նախկին կալանավորների եւ իրենց համայնքի ուստիկանության աշխատողների հարաբերությունները, որովհետեւ մեկ անգամ արդեն կալանավայր ընկած անձնավորությունը միշտ լինում է ուստիկանության հսկողության տակ: Չսկողություն՝ բացասական իմաստով: Չամայնքում կատարված ամեն մի դեպքի համար նրանց հավաքում են, հաճախ են թարկում ծեծի, ստիպում խոստովանել այս կամ այն հանցագործությունը, ազատելու համար որոշակի գումար շորթում:

Լավ կլիներ, որ պետական կամ հասարակական մի մարմին ոստիկանության եւ նախկին կալանավորների միջեւ կապող օղակի դեր կատարեր:

Ավետիք Իշխանյան
Հայաստանի Հելսինկյան կոմիտեի նախագահ

Նախեւառաջ մենք պետք է գիտակցենք, որ մենք քրիստոնեական երկիր ենք, եւ ուրեմն «Մի դատիր» պատվիրանը շատ կարեւոր է մեզ համար: Այդ մարդկանց մենք պետք է օգնենք եւ շատ հարցերում աջակցենք:

Նրանք արդեն իսկ հունից դուրս եկած մարդիկ են: Մեր խնդիրը ոչ թե այդ մարդկանց պատժելն է, այլ նրանց կյանքի վերադարձնելը:

Ռաֆայել Պապայան
ՀՀ Սահմանադրական դատարանի անդամ

Հասարակություն վերադառնալուց հետո նրանց բոլորին միավորում է մի շատ տխուր երեւույթ՝ անցանկալի եւ օտար լինելու զգացումը: Մարդիկ մի տեսակ տագնապ եւ վախ ունեն նրանց հետ շփվելու:

Նրանք սոցիալական էակներ են, մարդ են, մեր հասարակության գավակներն են: Հասարակությունը պատասխանատու է նրանց բանտ գնալու, կալանավորվելու համար, բայց վստահ չեմ, որ հասարակությունն իր մեջ կրում է այդ պատասխանատվությունը: Մենք մեր պարտքը չենք կատարում այդ մարդկանց նկատմամբ: Ոչ մեկը մեզ վրա չի դրել, չի գրել, որ սա հասարակության պարտքն է, բայց եթե մենք ուզում ենք մի քիչ բարոյական հասարակությունում ապրել, մեզանից յուրաքանչյուրը, կարծում եմ, ներքուստ, ինքն իր վճռով պարտքի մի այդպիսի բաժին պիտի վերցնի:

Հրանուշ Խառատյան
Ազգագրագետ

Տարիներ այցելել եմ բանտ: Տարիներ հաղորդակցվել եմ նրանց հետ: Ես նրանց հանցագործ չեմ համարում: Օրենքն, իհարկե, իր տեղը, օրենքն, իհարկե, կարող է տարբեր գնահատական տալ, ինձ համար նրանք սխալված մարդիկ են, մարդիկ, որոնք կյանքում սխալվել են: Նրանք մեր եղբայրներն են, նրանք մեր զավակներն են, նրանք մեր հայրերն են, մի խոսքով, մենք ենք:

Հաճախ մենք ենք նրանց ուղարկել այնտեղ:

Հաճախ ասում ենք. «Դու հանցագործ ես»:

Եկեք, հանցագործը ամեն մեկս փնտրենք մեր մեջ: Մենք ամեն մեկս էլ մեղավոր ենք, եւ ինչ-որ տեղ այդ պիտակը կարող ենք կպցնել ամեն մեկիս:

Վստահաբար կասեմ, որ հանցագործների մեծ մասի այնտեղ գտնվելու պատճառը ինքը հասարակությունն է՝ վերելից ներքեւ:

Կարապետ ավագ քահանա Գըլնճյան
Կոչի գաղութի հոգեւոր հովիվ



բանաստեղծություններ արձակ

Ես ինչքա՞ն ձեզ ասեմ,
որ մենությունը
վիտամինների պակասությունից չէ:

Ինչո՞ւ եք ինձ գրկել ազատությունից,
ինձ հետ ձեզ ազատ չեք զգո՞ւմ:
Բա չե՞ք վախենում,
որ բանաստեղծություն կգրեմ բանտում:

Իմ սիրտը թակարդն ընկած մկան պես
ազատություն է երգում:

Բերեք տարվա բոլոր եղանակները
խառնենք իրար
ու ստանանք բարեխառն մի բան
եւ խմենք՝ հենց այս պատի տակ:

Երբ մի օր ինքս ինձ հետ՝
առանց վկայի, գրուցում էի,
հասկացա, որ խոսել եմ լռությամբ,
մնացածը նրա համար,
մեղմ ասած,
կճուճ է եղել:

Իմ մեղքերը որ խոստովանեմ,
ո՞վ կհավատա նրանց
ճշմարտությանը:

Ես իմ փոքրիկ գողգոթայում
նահատակվեցի միայն ինձ համար
ու ինքս իմ խորհրդանշանը դարձա:

Օրական մի քիչ մեռնում եմք,
այդպե՞ս են ապրում:

Ինչո՞ւ ուրախ չեք երգում:
- Դա ավելի տխուր կլինի:

Մեր երկրում մեռնելու համար
դիմում են գրում:
Ապրելն ազատ է,
ինչքան ուզենաս,
բայց միայն մեռնելուց հետո:

Իմ մայր Զայաստան,
ասում են, որ դու ինձ սիրում ես՝
քո ամբողջ սահմանադրությամբ:

Մի գողացիր,
այսինքն՝ կարողացիր վերցնել,
այնժամ կհարստանաս:

Ես քեզ տեսա,
ա՛խ, ի՞նչ անեմ իմ սրտի հետ ...
Ես չգիտեմ ի՞նչ եմ ծնվել,
բայց կմեռնեմ որպես պոետ:

Գործ N

Ապօրինաբար ծնվեց,
N հողվածի համաձայն ապրեց,
N հողվածի համաձայն մեռավ,
որչ ժողովուրդը հավաքվեց՝
Նրան թաղելու:

Ինչ ասես տեսել էի,
բայց կինը՝ դատավոր,
դեռ չէի տեսել:

Կարդացի մի գիրք,
- բան չհասկացա,
մի գիրք էլ եւս,
- բան չհասկացա,
ու շատ-շատ գրքեր կարդացի,
- բան չհասկացա:
Աշխարհում ինչքան գիրք կար՝
կարդացի, բան չհասկացա:

Խմեցի մի բաժակ,
- բան չհասկացա
մեկն էլ խմեցի - բան չհասկացա,
ու էլի-էլի բաժակներ դատարկեցին
իմ չոր ուղեղին,
- բան չհասկացա:

Երեւի մարդիկ բան չհասկանալուց են
բոլորը մեռնում:

Բաժանվել եմ հիմա կյանքում
Ես շախմատի քարերի
Մի տեղ՝ նավակ մի տեղ՝ զինվոր,
Բարդ է ոճը իմ խաղի:

Մի բազմանիստ հայելի է
Կյանքը կախված իմ առջեւ,
Նրա խորքում արտացոլված
Բազմադեմ եմ ես դարձել:

Ոչ պարտված եմ ուզում լինել,
Ոչ էլ՝ կյանքից դիմադարձ...
Բայց արի տես, որ ինձանից
Յեռացել եմ ես անդարձ:

Բաժանվել եմ արդեն կյանքում
Ես շախմատի քարերի
Ինձանով եմ հաղթում, պարտվում
Խաղացողներն աշխարհի:
Արտացոլվել հայելիներում
Բազմատեսակ, բազմանիստ,
Չեմ ճանաչում. իմ դեմքերից
Ո՞րն է կեղծած, ո՞րն է ճիշտ...

Դու չես մոռանա իմ փոքրիկ Մերի,
Երբ վերջին անգամ տանից դուրս եկա,
Կարծում էիր, թե կգայի էլի,
Երբ երեկոյան ավտոբուսը գար:

Գիշերը հանկարծ գարթնած կլացես,
Մայրդ կերգի քո անկողնու մոտ,
Ինչքան լավ բաներ որ խոստանա քեզ՝
Քունդ չի տանի մինչեւ առավոտ:

Մի օր քեզ կասես, իմ անմեղ Մերի,
Որ հայրդ արդեն աշխարհում չկա,
Բայց քեզ կթվա, որ կգա էլի,
Երբ երեկոյան ավտոբուսը գա:

Շատերին եմ սիրել ես,
Նրանց իմ սիրտը բացել,
Ամենքի մեջ փնտրել քեզ
Եւ հուսախաբ հեռացել:

Անհագ սերը իմ սրտում,
Տեսա մի օր քեզ հանկարծ:
Ախ, իմ սիրած աչքերում
Չկար ծանոթ ոչ մի կայծ:

Գարնան կրծքաբաց գիշեր է դրսում,
Ծառին է գրկել քնքշանքով քամին:
Անքուն աչքերո՞ղ թախի՞ծն է կիսում
Հասմիկի թուփը իմ պատուհանին:

Օրը գիշերվա գինին է ըմպում,
Երկինքն է քամվում գավաթի նման:
Կարոտն է սրտիս խորքերում թնդում,
Ղողանջների մեջ զանգի մենության:

Ես հաշտվել եմ բետոնե
Այս չորս պատի հետ
Ու գոհ եմ նրանց մատուցած
Ծառայությունից:
Որ պահում են կախված,
Ինքնասպան եղած
Իմ խեղճ շորերին:
Ես անչափ գոհ եմ,
Որ բաժանում են նրանք նաեւ
Ինձ այն աշխարհից,
Որի օրինական կալանավորն եմ:
Ես անչափ գոհ եմ ու շնորհակալ
Ճաղերից այս պինդ՝
Նրանք իմ մեջ թարմ են պահում
Լույսի կարոտը,
Ինչպես սառնարանն է
Մթերքները պահում:
Սակայն դժգոհ եմ
Ու բողոքում եմ մարդու ցեղիդ
Մարդու մտքի դեմ...
Ամեն ինչ արեց աստղերին
Չամսելու համար,
Բայց հասարակ մի բան
Ի բարօրություն,
Չանուն բարեկեցության
Իր նմանների,
Նա չի հնարել մի որեւէ բան,
Որեւէ հնարք,
Որ խուզարկողը
Առգրավեր իմ ուղեղից
Բոլոր մղձավանջերը,

Քնելուց առաջ
Քնած ժամանակ
Մղձավանջները, որոնք
Հենց նույն աշխարհի պատկերն են կազմում
Որի օրինական կալանավորն եմ
Բարեբախտաբար...

Այս աշխարհը իմը եղավ
Ու ես՝ ոչինչ նրա համար,
Մերթ պարտվեց, մերթ թալկացավ,
Կյանքը ինչպես գինու խումհար:

Այս աշխարհը իմը եղավ
Ու ապրեցի ես նրանում
Մեկը տվեց, մյուսը առավ
Ո՞վ է կյանքից գլուխ հանում:

Այս աշխարհը իմը եղավ,
Ինչէր տեսա ես նրանում:
Թեկուզ եղավ Տերը շռայլ
Բայց ... տվածն է արդեն տանում:

Դատավոր,
դատախազ,
ամբաստանյալ,
եւ բոլորը հայ ...
Բերմուդյան եռանկյունի ...
Երեք քար ընկավ
վերից՝ որպես դատավճիռ.
մեկը՝ դատավորի,
մեկը՝ դատախազի,
մեկն էլ՝ ամբաստանյալի գլխին:

Մի շուն հաջելուց հոգևած,
գլուխն առած գնում էր՝
հեռու մի տեղ սատկելու -
Նրա մեջ արթնացել էր գայլը:
Մի ավանակ հիշում էր մանկությունը,
երբ քումակ էր տակավին
ու տրտինգ էր տալիս:
Դե նա էլ էջ էր:
Մի մարդ գիրք էր կարդում
ու պատմություն գրում՝
աստղերի ու ծաղիկների մասին -
Նրա մեջ մեռել էր մարդը:

Դատարանի ճանապարհին

Ուրբվում է ճամփան խոր
Պոետների կյանքի պես
Եւ այն կյանքի որ հնչեց
Չին, հուսահատ զանգի պես
Որ ճաղերով երկաթյա
Շրջանակվում է հիմա
Որ հոծ մրուր է դարձել
Պոտոր ջրում ժանգի պես
Ուրբվում է ճամփան խոր
Պոետների կյանքի պես:

Շան հայցը

առակ

Իր տերերից հալածված,
Դատարանին գերագույն
Գանգատվում էր վրդովված
Թոշակառու մի խեղճ շուն:
Շունը հաչեց փաստարկեց
Իր ապերախտ տիրոջ դեմ,
Պահանջները բեկանեց
դատավորը խստադեմ:
Եւ գրանցեց իր գրքում
Թե ի՞նչ ասաց անոթին,
Որոշելով իր մտքում
Ինչքա՞ն արժե շան մորթին:

Ամեն տեղ, ամեն օր
Հուդայի դրամների
ծայնն եմ լսում՝
պաշտելի զնգզընգոցը,
եւ մաշում է հոգիս
Գողգոթայի տոթն հավիտենական:

Ինձ մի բուռ կրակ տվեք,
կրակ,
անգույն կրակ,
անբոց, անծուխ,
անփա՛յլ կրակ,
որ չծխեմ այսքան երկար,
որ չմնամ ես՝ չքաղված
պտղի նման, ծառի ճյուղին:
Հազար երանի, միլիոն երանի
եւ միշտ երանի
լուռ բորբոքվող փայտածուխին:

Չարենցի դիմանկարի առջեւ

Կանգնել եմ լուսե կտավի առջեւ,
Օ՛, դու նաիրյան իմ հրե պոետ:
Սիրտս այս դարի ու դավի առջեւ,
Ուզում է այսօր արբենալ քեզ հետ:

Ախ, սիրավեպ ես դու ասպետական,
Ոգիդ հրթիռ է սլացքով անդող,
Բյուրեղ ադամանդ դու անապական,
Դարերի տամուկ փողոց չխամրող:

Յոգնել եմ ես ճղճիմ օրերից,
Շան կաղկանձանքից՝ երգի տեղ հնչող...
Վառիր իմ հոգին դու հրով նորից,
Երգով թռիչքի, մաքառման շնչով:

1700 տարի քեզ նկարել ենք
ու քանդակել ենք
որմերին քարե
տաճարների՝ երկնածոց:
1700 տարի քո տառապանքը
մենք խաչ ենք սարքել՝
մարդակերպ ու ոսկեզօծ:
1700 տարի հալածվածի
մեր ապերջանկությամբ.
քեզ մոմ ենք վառել:
1700 տարի դատել ենք նրան,
ով հլու չի եղել քո մեծ պատգամին:
1700 տարի մարդկային մեր անհուն սիրով
մենք քեզ թաղել ենք՝
անունդ հուշարձան դարձնելով քո գերեզմանին:

Չայրենիքիս

Դու մի օր դարձար արքունքի սեղան,
Դավադիր որդոց գրպանի ցողուն,
Ինչքա՞ն կաղնիներ հողմածե՞ծ եղան,
Ինչքա՞ն ծաղիկներ տրորվեց հողում:

Մեկն աշխարհում վիշտդ չկիսեց,
Չդրեց վերքիդ մի սպեղանի:
Քո մենությունը աստվածահե՞ծ
Քեզ նյութի դարում անդունդ կտանի:

Եւ բրոնզահուշ քո պատմության ճոճքում,
Մի քնիր խաբված երազներով փուչ,
Թե որդիներդ չտրվեն ոսկուն,
Կգան օրերդ հուր վահագնաշունչ:

Հայրենի գյուղ

Լիճը Սեւանա՝
Քող լեռնադասեր,
Ամպերը ճերմակ
Լազուր բարձրունքում
Չվող կարապներ,
Մասուրի բույրով
Աշունքվա ցրտում
Օծված քարափներ
Ցածրիկ, մամռազօծ
Ցանկապատ քարե,
Դեղնավուն բոցով
Բռնկված ծառեր,
Կտուրներ հողե,
Ծուխը՝ հացաբույր,
Քարերից հոսող
Փոքրիկ մի աղբյուր,
Սրտիս հետ խոսող
Խղճի պես մաքուր ...

Երգ հրաժեշտի

Մութն է լույսին խեղդում,
Լուսամուտդ չեմ թակում,
Քունդ թող լինի անխռով՝
Ներիր եւ մնաս բարով:

Քսան տարիս չեմ բուրբում,
Պապիս ճամփան է սպասում,
Պանդուխտիս երգն եմ լսում,
Գնում եմ արյուն լալով՝
Ներիր ու մնաս բարով:

Ռոբերտն ու Սերժը երկիրս քանդեցին
Մեր ու մանուկ իրարից գատեցին
Սուրբ աշխարհս սեւով պատեցին
Հայը դարձյալ գնում է լալով՝
Ներիր ու մնաս բարով:

Չորս կողմ մուրացիկ մայր ու մանուկ
Փշոտվել է անկողինս փափուկ,
Խիստ ցրտել է երկիրս տաքուկ,
Գնում եմ երկար ժամանակով՝
Ներիր եւ մնաս բարով:

Թո՛ւրք են թե հայ՝ չեմ իմանում
Երկրից հային դուրս են անում
Նորից օտար ափ ենք գնում,
Բռնած ճամփան է անապահով՝
Ներիր եւ մնաս բարով:

Մեր սերը մեզ հարամ կլինի,
Թե երկիրս միշտ այսպես լինի,
Լավ է մեռնել՝ կարոտ լալով,

Օտար ավիում հայ մնալով,
Քան ապրել հողը սգալով
Ներիր եւ մնաս բարով:

Թե հայ որդին թշվառ լինի
Դուստրը միշտ հայ որունի,
Մայրը մանկան սոված տեսնի,
Ինչի՞ն է պետք կյանքն այսպիսի,
Գնում եմ մոլոր քայլքով՝
Ներիր եւ մնաս բարով:

Արյունս է թշնամիս՝ պիտի գնամ,
Թեկուզ ալեւոր նորից ետ կգամ,
Գնալուս համար պատասխան կտան,
Իրենց արարքով ու ողջ սերունդով,
Չեն փրկվի սին գոշումով՝
Ներիր ու մնաս բարով:

Իմ հարեւանը

Դու բարի մարդ իմ խցին հարեւան
Գնում եք գալիս ամեն օր հոգևած
Իմաստ էլ չունի հարցնել նորից
Թե ինչպես անցավ դատը այսօրվա:

Քանի որ գիտեմ որ նույնը կասեք
Գնացիք այսօր ուղեկցող վաշտի
Ճաղապատ մեքենայով մի ոտքի վրա
Ուղեկցին նրանք, ինձ տարածքը ամբաստանյալի:

Եւ նորից նույնը նույն դատավորը
Եւ ինքը նույնը նույն մեղադրողը
Դահլիճում նորից իմ ազգականները
Մի խոսքով նույնը ինչպես որ միշտ:

Մի քանի ժամ հարց ու պատասխան
Մի քանի վկա նորից կեղծավոր
Մի փոքրիկ վեճ ի օգուտ ձեզ
Մի փաստաբան քսերոքս արված:

Մի փոքրիկ ընդմիջում եթե կամենան
Մի կտոր աղ ու հաց որպեսզի դիմանան
Մի թե դժվար է այդքան այդ դատը
Պատասխանը նույնն է, ուսով ենք անում:

Եւ կրկին անցնում ձեր խուցը հարազատ
Ու կրկին նստում ու գտնում մի նոր բնույթ
Որ վաղը լինի խոսալու թեմա
Եւ նորից նույնը ինչպես որ միշտ
Տարի շարունակ չհաշված ամիս ու օրեր:

Արգելակում կամ շեղում

Դու մարդ ես մարդ, մարդ իրականում
Որ պետք ես այսօր կործանվող մեր երկրին
Ետ բերես տանող անդունդի եզրից
Եւ պահես հեռու որքան որ պետք է:

Բայց չկա մի մարդ որ ասի դե լավ
Ինչու եմք շեղում այս մարդուն ճամփից
Եւ ոչ թե շեղում այլ արգելակում
Մի՞թե այդպես չէ իրականում:

Բավական է մնաք դուք այդպես անգոր
Դե ճեղքեք ամպը արեւին պատած
Եւ բացեք լույսը ձեր կրթահամալիրի
Վստահիր խելքիդ հավատա մտքիդ:

Չունեմ մոտիկ ու հարազատ
Մնացել եմ անօգնական
Եթե կանչեն ինձ այցի գան
Վախենում եմ երեսով տան:

Մարտ ամսին ծնված եմ մորից
Ես անբախտ եմ հենց այդ օրից
Մեղավոր ճանաչեմ հորս
Թող չհղիացներ մորս:

65 թվի ծնված եմ
Ազգս Գեւորգյան գրված եմ
Քրօրի 86 հողվածով
Այսօր ես քեզ բախտակից եմ:

Ախ ծխախոտ վայ ծխախոտ
Քեզ թարգ տալը անհնար է,
Ատամներս սեւացել է,
Բերանս դառնացել է:
Ֆիլտր ունես տարբեր գույնի
Սեւ, սպիտակ, դեղնավունի
Մեջդ թուրուն, վայ էն մարդուն
Ով թարգ տալու հնար չունի:
Կրակ տալիս այրում եմ քեզ
Դուլաբ-դուլաբ քաշում եմ ներս
Նիկոտինդ քուլա-քուլա
Նստում է թոքերիս վրա:

Չինվոր էի ես Վայքում,
Մի դեպք եղավ մոտերքում,
Մի տղա էր մահացել,
Կյանքից դժգոհ գնացել:

Մեղավոր չեմ ես եղել,
Դրդապատճառ չեմ եղել,
Ու ոչ մի մեղք չեմ գործել,
Ինձ անմեղ տեղն են դատել:

Դատավորն ինձ դատեց,
Նրա մեջ խիղճ չգարթնեց
Անմեղ տեղը ինձ դատեց,
Նա ինձ գաղութ ուղարկեց:

Կալանքս էր վեց տարի,
Դեռ չէր անցել մեկ տարի,
Ռասկոռուտկա բերեցին,
Նորից բերդում փակեցին:

Այդ ժամանակ գգացի,
Ու երագով գնացի,
Չասա սիրածս աղջկան,
Բայց ավաղ նա էլ չկար:

Դավաճանել էր ուժգին,
Վերք թողեց նա իմ սրտին,
Չէր մտածել նա խորը,
Որ կգա էլի լավ օրը:

Չիմա չունեմ ոչ մեկին,
Մայրս է միայն թանկագին,

Տեսակցության է գալիս,
Ու արցունքով նա լալիս:

Յեռու տեղից եմ եկել,
Քեզ ուտելիք եմ բերել,
Լենինականից եմ եկել,
Քեզ շատ բաներ բերել:

Կալանավոր եմ եղբայր ջան իմացիր
Փակ են դռները, ոչինչ կդիմանամ,
Օրերն են անցնում դանդաղ ու հանգիստ,
Ինչ արած ունեմ ես շատ ցավ ու դարդ:

Կարոտել եմ եղբայրներիս,
Քույրերիս ու ընտանիքիս,
Բայց ինչ արած դիմանում եմ,
Երբ գալիս են նրանք աչքիս:

Եթե կուզես իմանալ քո լավն ու վատը,
Դաս է տալիս դրա համար միայն բանտը,
Արդեն գիտես, ով է քեզ լավ ցանկացողը
Յիմնականում քեզ մոտ կգա քո ծնողը:

Փակ են դռները իմ առջեւ,
Տառապում եմ ես անվերջ,
Լավ իմացեք ժողովուրդ,
Անխիղճ մարդ կա ու անգուրթ:

Ջահել կյանքս խորտակվեց,
Իմ մեջ սերը կոտրվեց,
Շատ տարիներ անցկացան,
Ջահելներն էլ ծերացան:

Բերդում կար տուն ու տանիք,
Կային լավն ու վատ մարդիկ,
Բայց ումն է պետք այդքանը,
Որ չես լինում քո տանը:

Մտածում եմ ի՞նչ անեմ,
Ոնց եդ դատից ազատվեմ,
Բայց սպասիր ես կգամ,
Որ նորից քեզ բարեւ տամ:

Առանց փողի մարդ ումն է պետք,
Կյանքն է այդպես, դրվածքն անպետք,
Եթե ունես փող լիովին,
Կապացուցես դու բոլորին:

Որ չէ եղբայր որտեղ լինես,
Կարելորդ մաքուր լինես,
Իսկ եթե դու մաքուր լինես,
Առանց փողի էլ ինքդ կապրես:

Իսկ որ ունես դու լավ ընկեր,
Ցամաք հացն էլ նրա հետ կեր,
Լավ ընկերը նա քո կյանքում,
Կփրկի քեզ ցավոտ դարդում:

Նեղ օրերի լավ ախպերներ,
մի օր էլ անցավ օրերից մեր,
Կգան օրեր լավն ու բարի
մենք էլ կանենք մի նոր տարի:

Կհանդիպենք մեկս մեկի,
Աստված նեղ օր թող չբերի,
Ախ ինչ լավ է դրսում լինել,
Ախպերներին միշտ հանդիպել:

Նեղյալներին ազատություն,
Ցանկանում եմ համբերություն,
Կգան օրեր լավս ու բարի,
Դուք էլ կանեք մի նոր տարի:

Մի ընկճվեք իմ եղբայրներ,
դրսում էլ ունեք լավ ախպերներ,
Ունեք նաեւ երեխաներ,
Աղաչում եմ Աստված իմ տեր:

Ազատություն տուր բոլորիս,
Որ մենք իրար հանդիպենք
Կհիշենք մենք միշտ լավ բաներ,
Նեղ օրերի լավ ախպերներ:

Ձանձրացել եմ այս աշխարհից,
Նեղն եմ Աստված օգնիր դու ինձ,
Դարդս պատմեմ չգիտեմ ում,
Որ հասկանա նա ինձ կյանքում:

Լսեք մարդիկ կարդամ գիրս
Կորեկ դարձած ցավոտ սիրտս
Զգիտեմ ես ինչքան սպասեմ
Որ ձեր վերջին խոսքը լսեմ:

Լսում եմ ձեզ սրտատրոփ
Ալեկոծված է սիրտս մորմոք
Զգիտեք իմ, վատ վիճակը
Գցել եք ինձ փակ ծուղակը:

Դուք ժողովուրդ, ախ ինչու
խառնվել եք իրարու
Բողոք-բողոքի հետեւից
Բաժանում եք ինձ կյանքից:

Իրոք չկա ճշտություն
Եթե լիներ ճշտություն
Կլիներ նաեւ փրկություն:

Կան շատ մարդիկ շատ ու շատ
Թշնամիներ անքանակ
Առանց ճիշտը լսելու
Ու սխալ դատ վարելու:

Արդյոք չունեն նման մարդիկ
Խիղճ ու Աստված զարմանալի
Նրանք ինձնից ինչ են ուզում
Ինձ նման անմեղ մարդուն դատում:

Դուք դատարան լավ լսեք
Որ Աստված ձեզ երբեք
Չի ների ձեզ կյանքում
Որ ինձ անմեղ տեղն եք դատում:

Իմ սիրելի Մարիամիկս

Մայիսյան ծաղիկ ես դու
Աստծո տված զարդ ես դու
Իմ հոգին ես իմ աստղիկ
Րոպեն ես, սրտիս զարկն ես
Ախր ինչպես քեզ գովեմ
Մարիամիկ իմ քաղցր բալիկ
Իմ հոգին ես, հոգուս զարդն ես
Կյանքիս թելն ես իմ բալիկ:

Աշոտ Բլեյանին

Քնքուշ բալիկ ձեր տան շեմին,
րոպե-րոպե ձեզ սպասող բալիկ,
հնչու են ախ բերդ բերել,
Բալիկիցս ինձ հեռու տարել,
Տեսնում եմ բալիկիս երազներում,
Իրիկնային լուսնի շողքում,
Նվիրական տողերն այս,
Եղավ կյանքի կարոտ ուղին:

Միշտ մեզ հետ Աշոտ Բլեյան

Աշոտ Բլեյան, հոգու ճեմարան:
Չգացմունքներս մտել են դարան:
Ճիգն է մեր հոգու ձայնից գրկվել:
Ճանապարհներն են մեր առաջ փակվել:

Այսօրվա օրով կալանված ենք մենք:
Ֆիզիկապես եւ հոգեպես:
Տանջված գազան ենք անելք թակարդում:
Սատանան վերջին օրերն է թերթում:

Աշոտ Բլեյան, վստահ ենք, անգամ համոզված:
Որ համարում ենք, մեր ցավը կիսած:
Գիտենք մեզ հետ ես դու հոգով անվերջ:
Թեկուզ դու էլ ես կալանված մեզ պես:

Յասկանում ես դու մեզ, կալանավորներիս:
Չկա սկիզբ ու վերջ դառն օրերին:
Յոգիներս թեւ առել թռչել են ուզում:
Խշոցն է ծառի հեռվից մեզ հուզում:

Ներկան կալանք է, ապագան անհույս:
Ներկան կարիճ է, թունավոր մի խայթ:
Ներկան մթնած է, նման մի լուսնի:
Ներկան ստվեր է, մոռացված հույսի:

Ձավակ սրբության եւ իմաստ կյանքի:
Կենդանի վկա, իմ շքեղ փառքի:
Մասնիկն իմ հոգու, եւ կաթիլն արյան:
Հայացքով անմեղ, էակ իրական:

Կարոտալի ցավ, իմ հոգին տանջող:
Հավերժ մտածմունք ինձ քեզ մոտ կանչող:
Դու ժպիտ ես, իմ դեմքին դառնացած:
Հարազատ շունչ ես, ինձ չմոռացած:

Հավերժ պատճառն ես, իմ արցունքների:
Մշտական հյուրն ես, իմ երազների:
Փշեր են աճել այսօր իմ ճամփին:
Չոր խոտ եմ դարձել աճող քարափին:

Ես անպատասխան հարց եմ քեզ տանջող:
Կյանքիս օրերն են այսօր անհաջող:
Սառցաբեկոր եմ, ես օվկիանոսի:
Փոթորկված ծով եմ, առանց փարոսի:

Չայրդ սիրում է քեզ իմ բալիկ
Աստված վկա թող լինի
Յոթ սար ու ծով ես կանցնեմ միայն կարոտդ առնեմ
Կարոտդ առնեմ դու իմ բալիկ:

Լուսնի պես շող ես տալիս դու իմ կյանքին խավարած
Ու կանչում ես ինձ դեպ առաջ դեպի կյանքը լուսավոր
Սիրում եմ քեզ իմ սուրբ էակ
Իշխանուհի իմ թագուհի
Նորածնիս դու սուրբ մայր
Եռանդդ թող անմար լինի:

Խրատներով լի այս մեծ աշխարհում
Չեմ ուզում կարդալ նորից քեզ խրատ
Ուզում եմ պահես հավատն անմարում
Շողումը մարդու պահես անարատ:

Աշխարհը լավն է, չարությունդ թող
Եւ հոգուդ խորքում եղիր միշտ բարի
Չարերի ձեռքին արեւ կա մթնող
Մի լինի չար, որ ոտքդ չգա քարին:

Լավ մարդիկ շատ կան մի սիրիր լոկ քեզ
Եւ կուչ մի եկ քո կաշվի մեջ լռին
Քիչ է թե միայն աշխարհից ամենս
Ինչ-որ մի լավ բան տուր աշխարհին:

Սիրիր դու միայն մեկ անգամ
Սերը գիտեիր բարձր պարգեւ է
Թե հույզեր չունես սիրել չես կարող
Գոնե մի ասիր ամանց պատճառի:

Մարդ եղիր, թե չէ գալիք օրերում
Երբ մի օր կյանքից գնաս, հավատա
Անուններով լի այս մեծ աշխարհում
Մարդիկ ոչ մի տեղ անունդ չեն տա:

Սիրո գիշերներ անմոռաց, անքուն
Լուռ ու երկար անեզր մի վիհ
Տանջանքի պահեր հուշերով լեցուն
Սիրո երազներ, ավաղ խաբկանքով:

Ապրել եմ ես ձեզ սիրո գիշերներ
Չգացել հաճույքը ձեր վսեմ
Կարոտի շողով միշտ սիրտս է լացել
Ու այդպես թաքուն ես շատ եմ տանջվել:

Սակայն ասացեք մարդիկ ինձ բարի
Ապրելով այդպես, սիրելով այդպես
Ինչ օգուտ ունեցա մարդիկ
Բացի տանջանքից ու մեկ էլ ցավից:

Արարատին

Հայոց Պատմական Սարին Դարավոր
Քամին բերում էր բքախառ ձյունը:
Արարատ սարին տխուր մենավոր
Քո նախնիներից սրտագին ողջույն:

Քո անվանդ հետ թուրքերն արին խաղ
Փոխին անունդ դրին քեմալ դաղ:
Քո զավակներն ունեն արդեն տուն
Կապույտ Սեւանից սրտագին ողջույն:

Ես բանաստեղծ չեմ եւ ոչ էլ գրող,
Բայց գրելու մեջ ունեմ հմտություն
Գրում եմ ես քեզ, ես մի քանի տող
Գրածս տողերով քեզ ողջույն, ողջույն:

Մի կապույտ լեռ կա աշխարհում
ամպերի մեջ սուզված,
Մի Հայաստան կա աշխարհում
Նրա դիմաց փռված:

Մի ժողովուրդ կա աշխարհում
Սիրտը ջինջ ու մաքուր,
Նրա կյանքը մի լեզուն է
անցած կյանքը տխուր:

Հինավուրց է ժողովուրդն այդ
սակայն այնքան ջահել,
Նա իր կյանքում լացել է այդ
թե արցունք է պահել:

Կանցնեն շատ օրեր գուցե տարիներ
Եւ երբ ետ նայեմ անցած օրերիս
Կհիշեմ դարձյալ դժվար ճամփան
որ անցավ մութ ու խոնավ բանտի մեջ:

Դժոխք ինձ իր գիրկն առավ
Ինչպես մի հրեշ ծարաված
Եւ բերդի խցին ինձ փայ դառավ
Ախ ջահելությունս փուչ անցավ:

Դժվար է կյանքը դժոխքի նման
ամեն տեղ բուն է դրել սատանան
խեղճ ու կրակ, միամիտ
մարդիկ դարձել են սրա
ծեռքի չար գործիք:

Ես ոչ գրող եմ ոչ էլ բանաստեղծ
Բոլորի հանդեպ եղել եմ անկեղծ
Կարոտ եմ սիրո հմայքին
Խլեցիր կյանքս տվիր փականքին:

**Ասպարեզ ելած դարիս չարքերը,
Շրջապատեցին մարդկային ոգին,
Ոճրագործ դառած անմիտ տարրերը,
Տիրակալ դարձան ազգիս դրոշին**

Դատ դատաստան

Դատարանը իրեն համար դատ է անում Հայաստանում
Կամ դատում է կամ էլ ներում, գոյությունն է իր
պաշտպանում,
Ցույց է տալիս հանրությանը եռությունը իր անգութ,
Նպատակը իր չար ու բութ, անմեղ մարդկանց տանում
գաղութ:

Ամեն մի ոք մեղավոր է, բայց չի դատված երբեք ստորը,
Չի փրկվում ժողովուրդը ու չի լքում իր փոսն ու հորը,
Ո՞վ կարող է ինքն իրեն դատել եւ գիտակցելով այս բոլորը,
Աստծո պատգամ կկատարի եւ կհարգի իր հորն ու մորը:

Մի՞թե այդպես պարտադիր է սկզբում դատել հետո ներել,
Որից հետո պարգեւատրել, լավ պաշտոնի նշանակել,
Սա՞ է հայոց բանաձեւը, որ չի կարող ձերբակալել եւ կալանել
Մեր հանցավոր համակարգը, այն կարող է մեզ կործանել:

Չե՞նք կամենում, թե չե՞նք կարող մենք փոփոխել այս ամենը,
Եւ սուլում է գլխուղեղում. «Ոտքի գալիս է դատարանը»,
Դու ներված ես ու մեղավոր եւ կտեսնես դատաստանը,
Թեկուզ արդեն նրա համար, որ քո բախտը Հայաստանն է...

Դատարանը իրեն համար մեկ դռնբաց, մեկ դռնփակ,
Մեղադրում է Բլեյանին, բայց չգիտի ոչինչ հստակ,
Մեղքը նրա չապացուցած համարում է նրան դատված,
Դատաստան է սա անաստված, թե՞ մեղավորության
կանխավարկած:

Армения рынок ...
Что и говорить,
Коль деньги есть, то можно всё купить
И суд, и следствие, и даже справедливость.

Ես սիրում եմ Յայրենիքս
Ես սիրում եմ հողն ու ջուրս
Ես չեմ կարող հայերենս
փոխել ուրիշ լեզուներով:

Բայց իմ կյանքս Յայաստանում
որ ես հայ եմ ծնվել այստեղ
եւ ուզում եմ որ իմ կյանքում
հայ անունով հպարտ լինեմ:

Բայց կան մարդիկ որոնք կեղծ են
ցավ են տալիս մեզ շատերին
չարացել է նրանց ոգին
<անընթ. > դարձել Աստված գիտի:

Կուզեմ անկեղծ ասել ես ձեզ
մենք լավ ազգ ենք հավատացեք
միայն կուզեմ որ չլինեն
այդ դեւերը մեզ կուլ տվող:

Աչք են դրել ոսկուն փողին
կուզեն մեզնով հարստանան
բայց ինչ ունենք աղքատներս
Աստված գիտի եւ մենք գիտենք:

Յիմա այսպես չորս պատի մեջ
հարց եմ տալիս ես ինքս ինձ
Ինչ հոգով եք դուք աշխատում
չեղած բանը հիմք համարում:

Ինչը գիտեք այսպես կանցնի
կասեի ոչ լավ իմացեք
սուտ խոսելով ցուցմունքներով
դուք չկարծեք կմոռացվի:

Դրա համար խնդրում եմ ձեզ
բարի եղեք ասեք ճիշտը
մի մտածեք կեղծ գործերով
որովհետեւ կա վերջնաբան:

Միայն կուզեմ անկեղծ ասել
թող ձեզանից մի քանիսը
առանց բանի թող գան նստեն
որ իրենք էլ լավ հասկանան,

որ ապրում են այս աշխարհում
պատկերացում նրանք չունեն
միայն անեն կեղծ գործերը
եւ միշտ ուտեն կեղծ փողերը:

Ուզում եմ որ դուք իմանաք
մենք լավ գիտենք ձեր գործերը
եթե մենք էլ չլինեինք
ինչպես պլան դուք կտաիք:

Դարձրել եք հաշիվ դուք մեզ
հեռացրել եք տնից տեղից
հարուստ մարդկանց հանցանքները
մուռ եք հանում Աղքատներից:

**Բոլորի մասին ես մտածում
Լուռ ու մունջ նստած քո խցում,
Երազում ես դրսում լինենք,
Յուրաքանչյուրի համար տանջվելով,
Անկախ նրանից, թե ինչքան կտանջվես
Նոր աշխարհը դու պիտի որ կառուցես:**

**Առաջին անգամ, երբ լսեցի քո մասին
Շատ ցանկացա, որ գործենք միասին,
Որ դու հասնես քո երազած գործերին
Տոն կդառնա այդ օրը մեր հայ ազգին:**

**Սովետաշենի բերդի ռեժի տակ
Գրում եմ քեզ հիշատակ,
Որ դու կարդաս, իմանաս,
Ու դարդերին դիմանաս:**

Ծեր կալանավորը

Սիրով նվիրում եմ
Կոշի կալանավոր Մախարաշվիլուն

1

Ծեր կալանավորի մարող աչքերում
Էլ չի երեւում տենչը
Անգամ հարազատ կնոջ նկատմամբ:

Նա երազում է
Վերադարձը կորսված գգվանքների
Եւ հուշերը նրան տանում են
Սպասվելիք հանդիպմանն ընդառաջ:

Հիմա նրան հիշում են քչերը,
Շատ քչերը հատուկենտ մնացած
Հավատարիմ մերձավորներից,
Եւ այդ քչերի խումբը փոքրիկ
Ղեկավարում է կինը ծերացած:

Ասում են սերը չի ճանաչում տարիք:
Ծեր կալանավորը ճաղերից ներս
Ամենից շատ ունի սիրող սրտի
Ու գուրգուրող ձեռքերի կարիք:

2

Նրա մշուշված հիշողության մեջ
Որբացած կարոտները շատ են,
Ու նա կառչելով անգամ
Պատահական շուկներից
Որոնում է վերադարձի ճամփա:

Նրա հայացքը զուրկ է արցունքից
Ու նա հեռվից հեռու
Անգամ զգալով
Անձայն հոգոցը անգո հարազատների
Որոնում է վերադարձի ճամփա:

Նա վերադառնալ է ուզում,
Թեկուզ կանխազգալով
Որ այլևս չկա ոչ մեկի հուշերում,
Որ այլևս չկան նրանք,
Ում հուշերում պետք է մնար:

Նա որոնում է վերադարձի ճամփա,
Որովհետեւ ապրել է ուզում:

3

Նա ապրել է ուզում,
Քանզի, ինչպես ինքն է ասում,
Սեւ հավի թեւերին գրված երազը նրա
Մնացել է դրսում:

Ու հիմա ճաղերից ներս
Կարկառելով ձեռքերը վեր
Նա գնում է չիմանալով
Աստծո կանչին
Թե իր բախտին ընդառաջ:

Իսկ հեռվում,
Սարերից այն կողմ, հեռու հեռվում,
Հարազատ գյուղի եզրին
Դեռ խրխնջում է Թառլանը կապտավուն,
Կարոտի պես դոփյունը

Խրելով ընդերքը երկրի:
Նա մերթ հիշում է իր հեծյալին,
Մերթ էլ դոփում դրվածքին աշխարհի:

Ծեր կալանավորը չի հանձնվի հոգսին,
Քանզի հույսի թելերին հեծած
Նա արդեն հասել է
Սեւ հավի թելերին գրված իր երազի կեսին:

Ծեր կալանավորի մենախոսությունը

Թառլանս թել առած երազիս եկավ,
Խեղճը խրինջում էր արցունքն աչքերին:
Բախտս սեւ հավի արյունով է գրված,
Չար աչքը կպել
Ու չի թողնում իմ երազներին:

Ես որոնում եմ իմ կորցրած հավատի ծառը,
Արմատները նրա անցնում են իմ միջով:
Այն ո՞վ է հրդեհել երազներիս անտառը,
Այսուհետ ապրելու եմ ինչ երազներով:

Թառլանս թել առած երազիս եկավ,
Խրինջոցը նրա աշխարհ էր ընկել:
Տեսնես ո՞ւմ անեծքն էր, խեղճին կպավ,
Որ սա էլ այլեւս չի կարող համբերել:

Քրտնահոտով լեցուն բանտախցում
Հայիոյանքը գայրույթի հետ շաղախված
Ճաղերի արանքից դուրս է նետվում:

Ո՞ւր է ուղղված գայրույթը տղերքի:
Տղերքի հայիոյանքն ո՞ւմ է հասցեգրված:
Բանտի կողքին
Վայելքների մեջ լողացող քաղաքի
Ճակատին տես տղերքի
«Զսիֆ» արված հայիոյանքն է գրված:

Այս է իրականությունն այս կողմերի,
Քաղաքի անգուսպ աղմուկը փշրվում է
Բախվելով օղակաձեւ բանտի պատերին:
Իսկ քրտնահոտով լեցուն բանտախցում
Տղերքը նստած սեղանի շուրջ «չեֆիրի»
Գալիքին մի նոր «քսիֆ» են գրում:

Երբ կալանավորը քնած է,
Նա կալանավայրում չէ:
Երազները նրան տանում են տուն,
Ուր նրան կարոտով
Սպասում են մերձավորներն արթուն:

Երբ կալանավորը քնած է,
Միք խանգարի քունը նրա,
Զանգի կարոտը մթության պես
Իջնում է նրա մտորումների վրա:

Կարոտը մութի պես
Իջնում է նրա մտորումների վրա
Ու անուշ երազներ հյուսում:

Երբ կալանավորն է քնում,
Փշալարերը փափուկ,
Իսկ ճաղերը փխրուն են թվում:

Գյուղամիջից փախած քամին
Մանկան ծիծաղ է գաղութ բերում:
Մի աղջիկ երգը շուրթերին
Այս կողմի վրա է ձայնը երկարում:

Ու հաշվում է հսկիչը մեզ,
Բայց մենք գրեթե չկանք շարքում:
Աղջկա երգը կարոտի պես
Մեզ ճաղերից այն կողմ է տանում:

Գյուղամիջից փախած քամին
Գաղութում տրտինգ է տալիս:
Ամեն օր ստուգման պահին
Կոշեցի աղջկա երգը այս կողմ է գալիս:

Այս երկաթ-բետոնի մեջ,
Այս բանտ-զնդանում՝
Գրեմ սիրուն մի երգ
Ծաղիկների մասին,
-Առ քեզ, որ կգրես:
Ճաղից կուկիչ տնկեց
Դաշտում վխտող քամին:

Հավի ճիչ հասավ
Բանտախուց,
Նախ՝ հա՞վը,
Թե՛ ձուն է եղել.
Ազատ ճիչը եղել է
Ավելի վաղուց:

Բանտախուց է լուսամուտին վանդակաճաղ.
Դուռը երկաթե, հատակ, պատ, առաստաղ՝
Բետոնե:
Իմ թագավորությունն է սա,
Կուզե՞ք, զիջում եմ կամով,
Բոբիկ ու ազատ
Հետ ու առաջ եմ քայլում
Երկաթբետոնե իմ թագավորությունով:

Կարողացա՞ն կաշառել,
Թե՞ ազդեցիկ մարդ գտան,
Անցավ եւս մի ողջ օր՝
Մերոնցից ինձ լուր չեկավ:
Էլ չեմ կարող սպասեմ,
Լուր եմ ուզում ես դրսից,
Մի նորույթն է լոկ հաստատ,
Որ պակասեց մի ողջ օր
Իմ կալանքի ժամկետից:

Ձյուն նստեց բանտի
Երկաթալարին
Երկաթասալին
Երկաթասյունին
Երկաթակույտին
Երկաթածողին
Երկաթաճաղին
Ամեն մի փաթիլ
Մի գոհ
Մի ծաղիկ:

Սեւ ու ծանր այս ձյունը վեր կենար,
Թեւեի՞ն այս ամպերը ծանր ու սեւ,
Հորիզոնը հորիզոնից հեռանար,
Խաղար մանուկ արեւ:

Լիներ մի դրախտային պարտեզ,
Մարդ խլանար ժխորից թռչունների,
Թաղեի դեմքս ցողաթաթախ վարդերի մեջ,
Ինչպես ջայլամն՝ անապատի տաք ավազների:

Սենյակիս մեջ ոչինչ իր տեղում չէ:
Եկող գնացող չկա: Ու լուռ է: Լավ է:
Կյսօր ինձ համար սգի օր է:
Կոպերս իջել ու չեն բարձրանում:
Երկինքն, ասես, մթնեցված է,
Սեւ ու երկար ամպեր են կախել
Ինչպես պաստառ ու վարագույր:

Հագով կոկորդս եմ մաքրում:

Պատժախցի երկաթե դռան վրա
Երկու դիտանցք, նման մարդու աչքերի,
Եզրագիծը թիթեղների միացման
Քիթ է, որ իջնում, հասնում է բերանին,
Որ ծուռ է, ձախ թիթեղին
Անցք է թեթեւ փականով,
Իսկ պատի կոպիտ սվաղին՝
Դեմքեր ֆանտաստիկ դիմագծերով.
Ածուխ լիներ,
Ինչպես նախամարդն իր քարայրը
Կլցնեի խուցն իմ ժայռապատկերով:

Մեկուսանում էի, որ գրեմ,
Մեկուսանալու համար ձմռանը ծովափ էի գնում.
Հիմա քննչական մեկուսարանում եմ,
Որտե՞ղ է հղացումն ավելի բեղուն:
Խեղճ փոթորկի ալիք՝
Երկաթ-բետոնե հաստ պատերի համեմատ.
Երեւակայության խթանիչներ են,
Եւ այնպես ուժեղ են ճնշում,
Որ օղն էլ սեղմելով կդարձնեն աղամանդ:

Ոչ էլ հաշվեցին իմ անցած ուղին եւ 74 տարին
Ես թռներ ունեմ, հայրենյաց գինձոր
Նաեւ վախ ունեմ, որ չեմ տեսնի նրանց
Կարոտս ամենեմ, նոր հետո մեռնեմ
Ես շատ ցավում եմ եւ վախենում
Որ կարող է մեռնեմ, Կոշի գաղութում
Առանց թռներիս աչքով տեսնելու
Սրտիս կսկիծը եւ անհուն կարոտը մեղմելու
Արդեն չորս տարի նստած եմ այստեղ
Եւ դեռ հինգ էլ ունեմ նստելու
Բայց ես հույս չունեմ թե կապրեմ այդքան
Սրտիս կսկիծը եւ կարոտը մեծ հաղթում են արդեն
Ուստի ինդրում եմ ձեզանից տղամարդ մարդիկ
Պատվի ինդիրը հեչ միք համարի
Պատվի հարամողը մեղավոր է ավելի
Ես հանցագործ եմ վերացրել, ոչինչ ավելի
Եթե կան հիմա տղամարդ մարդիկ
Հաշվի առեք այդքանը մարդիկ
Ինձ տուն ուղարկեք, բավ է ինձ տանջեք
Թե չէ վաղը արդեն ուշ կլինի, էլ ես չեմ լինի
Թույլ տվեք տեսնեմ իմ նոր օջախը, թռներիս ջահել
Կարոտս ամենեմ, նոր տանս մեռնեմ:

Փշալար

Փշալար, որպես անուն լսել էի
Էկրաններից տեսել միայն
Սակայն բախտը դաժան եղավ
Եւ իմ կյանքի այս հատվածում
Ծանոթացանք, իրար տեսանք
Փշալար եւ ես նայինք իրար
Նա ժպտում էր ուրախ, զվարթ
Եւ մտորում իրեն համար
Որ նոր զոհ են բերել հարմար
Որ իր ներկա գոյությունով
Ամեն Աստծո լուսաբացին
Աչքեր ծակի եւ սիրտ խոցի
Գոյությունով իր դժնդակ
Բայց մի ժպտա եւ մի թնդա
Ես քոնը չեմ, դու էլ իմը
Կգա ժամը, բարին հետը
Ճիշտը կեղծից կբաժանվի
Եւ մենք իրար էլ չենք տեսնի:

Բանտախուց

Եկեկոյան, անլույս ժամին
Ինձ բերեցին գրանցեցին եւ ներս արին
Ներսում կային էլի մարդիկ
Որոնց էլ էին բերել ու ներս արել
Դուռն ետեւից դրել ծածկել
Մարդիկ էին, տարով տարբեր
Եւ ջահել կար եւ ալեհեր
Ամեն մեկը ուներ մի վիշտ
Ուներ մի գործ իրեն կպած

Տարբեր չափով մեղադրված
Ծանոթացանք, ընկեր դարձանք
Եւ վշտերը կիսինք իրար
Եւ իմացանք ամեն մեկս
Թե ինչ գործով մեղադրված
Ինչի համար էինք այստեղ բերված
Եւ խմբովի մենք դատ արինք
Մենք ինքներս մեզ դատեցինք
Եւ պարզվեց, որ շատ դեպքում
Որոշ մարդկանց տնից կտրած
Խուց են բերել ու ներս արել
Բանի համար շատ աննշան
Այնպիսի բան, որի համար
Նորմալ երկրում կալանք չկա
Այլ կա տուգանք, կամ էլ հարկում
Եւ այս մարդիկ տնից գրկված
Իրենց կյանքից բռնի հանված
Տառապում են այս նեղ խցում
Եւ անիծում չինովնիկին, դատավորին
Որ պետական շահի անվամբ
Իրենց շահի գիտակցումով
Միտումնավոր եւ տմարդի
Եթե լու է գործը խեղճի, ապա
Դավա են սարքել նրանք
Որ ստիպված լվի տերը ուղտի
Չամար փողը բերի եւ իր
Լվի տերը դառնա ամեն դեպքում
Կդատվի նա բայց ոչ ուղտի
Այլ շատ փոքր եւ հարազատ լվի համար:

Չինովնիկը

Ինձ իր մոտ կանչեց եւ ազդարարեց
Յանցանք եւ գործել դու այս կամ այն
Ճիշտ չես եղել դու, քո աշխատանքից
Եւ արած գործից տուժել ես մարդիկ
Կամ հիմնարկը պետության հետ մեկտեղ
Դու սա ես արել եւ նա ես արել եւ այս մեկը
Տես գրված է այստեղ, ես չեմ հորինել
Յորինել է նա, ով չի աշխատել, այլ միայն
Նստել, տեղ է զբաղեցրել եւ շոր մաշել
Եւ նենգ մտքերը բառի վերածել, թղթին է հանձնել
Եւ քո դեմ ահա այս գործն է սարքել
Ինքն էլ ապահով մաքուր է հիմա
Քանզի չի սխալվում նա, ով չի աշխատում
Ես էլ պաշտոնյա մարդ եմ ի վերուստ
Նման գործերի սպասող, գիտակ օգտվող
Իմ տեղում նստած, դիրքով ուժեղ, ապահով
Նման գործերը իմ դիրքից եւ շահից նայում
Եւ իմ կարծիքը անբեկան, անշեղ
Մատնանշված անձի օձիքից կապում եւ գործը սարքում
Իսկ գործ սարքելը հեշտ չէ տակավին
Եւ ոչ էլ ամեն մարդու խելքի բան
Գործ սարքող մարդը ծնվում է այդպես
Այլ ոչ սովորում կամ դիպլոմավորվում
Եթե անձը իրոք հանցանք է գործել
Գումարներ կորզել, հափշտակել եւ տուն է տարել
Կարդարանա, պատիվս վկա, եթե իր տարածի
մի մասը ինձ տա
Իսկ պետության հերն էլ անիծվի, ինձ ինչ
Չի դատվելու, ինչքան էլ որ վնաս տված լինի
Կամ էլ թե դատվի ձեւի համար է դա աչքակապի
Չի նստելու նա, լավ իմացի դա

Քանզի ճիշտ բաշխել գիտի իր տարածը նա
Իսկ եթե չի տարել, այլ որպես զոհ զրպարտվել միայն
Որ քողարկվեն տանողները մեծ
Չի կարող ուրեմն ինձ չտարածից իր տալ
Եւ ես էլ պատիվս վկա ազատ արձակել եւ տուն
ուղարկել
Չեմ կարող նրան նա ինձ պետք է հիմա
Ինձ ճիշտ հասկացի մեկին դատելու եմ ես
Բայց ոչ տանողին կամ թալանողին մեծ
Այլ փոքրին, անպաշտպանին, անմեղին խելոք
Որ ցույց տամ գործը եւ աշխատանքը իմ
Յամ էլ մեծերին, վեր է իմ ուժից, չեմ կարող դատել
Ինձ ճիշտ հասկացի, բացի նրանից, որ գործ եմ անում ես
Մարդկանց փակում կամ արդարացնում
Ինձ վրա նաեւ պլան է դրված եւ եթե ես այն չկատարեմ
Գործից կզրկվեմ փողոցը կընկնեմ
Քանզի բացի նրանից ինչ անում եմ ես
Ուրիշ բանի պիտանի չեմ ես
Ճիշտ եմ ասում պատիվս վկա, թեեւ այն չկա:

Խափանում

Խափանման միջոց, դու բառ դժոխքի
Կարգադրությունն սեւ-սեւ ուժերի
Երկդիմի դատի կանխակալ արդյունք
Անարժան մարդու թունոտ դու վճիռ
Կյանքեր կործանող որբացնող Յուդա
Փակեցիր դու ինձ, բայց լավ իմացիր
Փակեցիր ոչ միայն ինձ, այլ նաեւ օջախը իմ սուրբ
Բայց լավ իմացիր, ով դատավոր դու պիղծ
Քո դատը նույնպես լինելու է պիղծ
Քո նման մարդու անհագ ծարավի զոհ ես դառնալու
Եւ այդ ծարավը կուտակվում է հեռվում
Աստծուն եմ հանձնել իմ դատը քո դեմ
Ընկնելու ես քո նմանի ձեռքով, կոլեգա կոչված
Քանզի այդ սորտի մեջ սրբություն չկա
Եւ պիղծ հոգու մեջ որոգայթը սաղմ
Պատրաստ է միշտ գործել անխափան
Եւ ջերմացնում է ինձ վախճանը քո այդ
Իմ օջախի ծուխը, դե տես տակավին
Չմարեցիր դու քո ժանգ շնչով
Այդ ծուխը իմ մեջ կրակ բորբոքեց
Այն հույսով լցրեց, պայքարի կոչեց
Եւ հաղթեմ պիտի, քանդեմ պիտի
Որոգայթը քո որ հասնեմ իմ բույն, քուրան բորբոքեմ
Եւ իմ ձագերի թիկունքին կանգնեմ:

Մտորում

Այսօր նստած ես իմ խցում մտորում եմ
Տխուր, տրտում լուսամուտի ճաղերից իմ
Նայում լույսին ու սարերին եւ շենքերին
Ես ստիպված եմ այստեղ մնում
Անխիղճ մարդկանց օձի լեզվի
Եւ ձեռքերի կեղտոտ գրի ու սուտ բառի
Կամ բառերի կեղծ շարանի
Արդյունք է այս կեցությունն իմ
Բայց ես հույսս չեմ կորցնում
Ճիշտը ստից զատելու եմ ես
Եւ այս խցից պրծնելու եմ ես
Շատ մաղձ ունեմ ես իմ սրտում
Բայց կփոխեմ մաղձը իմ ես
Պատժով Աստծո, թող նա պատժի մեղավորին
Քանզի նա է տերը, նա է ստեղծողը, արարողը
Եւ իրեն է պատկանում իրավ
Եւ պատժելը եւ շնորհելը
Լավ, վատ կյանքի արժանացնելը
Եւ նորից իմ ազատվելը
Տիրոջ ձեռքի, մտքի գործն է
Ես գործիք եմ հիմա միայն
Որին ուղղում, ուղորդում է
Լավ կամ վատ ճամփով տանում
Փորձության է ինձ ենթարկում
Որ իմանա թե ինչ կյանքի արժանի եմ ես
Որ այն էլ տա, ազատ կամքով եւ խղճով իր:

Հույս

Առավոտ լուսին եկան ասացին
Որ պատրաստ լինեմ, դատի եմ գնում
Գնում եմ կռվի լույսի եւ մթի, ճշտի ու ստի
Կեղծ, սարքած գործի եւ օջախի պատվի
Սիրոս տրոփեց, նվաղեց մի պահ
Գնում էի դատի, կասկածով սրտում
Մինչ դատի գնալը դատել էի ես ինձ
Եւ պաշտպան եղել եւ մեղադրող
Գիտեի գործի ամեն տառը ես
Արդար էի ես գործին մոտեցել
Եւ դատն էլ արդար ձեւով վերջացրել
Ամեղ էի ես եւ խղճիս եւ Աստծո առաջ
Եւ այդ հույսով էլ դատի գնացի
Եւ կարծում էի ես, որ դատավորը նույնպես
Պատրաստված է եւ գործը լավ գիտի
Հույսով էի ես, որ ինձ դատող մարդը
Նույնպես խիղճ ունի, եւ հոգի նույնպես
Որ չինովնիկն էլ մարդ է վերջապես
Եւ ապա դատող, վճիռ կայացնող
Հույսս Աստծո եւ ինձ վրա դրած
Գնացի դատի, իմ եսի մարտի
Ճամփին Աստծուց նույնպես խնդրեցի
Որ նա եւս դատի եւ իր լուսեղեն հեռվից
Արդար եւ ազնիվ վճիռը հողեղեն մարդու
Ձեռքով կայացնի եւ ինձ որակի:

Կնոջս եմ պարտական

Ես ամուսնացա, օջախ ստեղծեցի,
Տղա ունեցա, օջախիս հաջորդ:
Օջախս մաքուր է կինս միշտ պահում,
Կնոջս եմ պարտական, ամուր թիկունքով:

Եղբորը եղբայր եր պետք, մեկն էլ ունեցանք,
Աստված տղաներիս պահի-պահպանի:
Շնորհակալ եմ կնոջս տղաներիս համար
Կնոջս եմ պարտական, ամուր թիկունքով:

Երբ ես տանը չեմ, մայրս ու կինս են
Տանը պահապան, օջախս պահող:
Իմ զավակներին պահող-պահպանող
Կնոջս եմ պարտական, ամուր թիկունքով:

Կինս է հոգում հարցերը բոլոր,
Կինս է պահում պատիվը իմ տան:
Այստեղ դիմանում եմ կնոջս հույսով
Կնոջս եմ պարտական, ամուր թիկունքով:

Ես իմ բախտի գոհարներին տեր չեղա,
Փոխարենը մթությանը տեր դարձա,
Թող, որ շվայտ ու նենգ մարդիկ կուրանան,
Իրենց որսից երբեք օգուտ չունենան:

Մթության մեջ լույս գտնելը դժվար է,
Ինչպես սոխակն առանց երգի դժվար է,
Թող որ հույսի իմ գորքերը շատանան
Շվայտներին ու նենգերին կրակ տան:

Ճամփան փայլի ու մաքրվի փշերից,
Ինձ էլ օգնի, որ շուտ դուրս գամ հոգսերից,
Յոգուս գորեղ գանձերն առնեմ դասերից,
Որ ազատվեմ ինձի տանջող դավերից:

Սպիտակ վարդեր իմ կյանքի,
Գուցե ասեք ինձ գաղտնի,
Ինչու արցունք պատճառեց,
Թախծոտ էջերն իմ բախտի:

Սպասելու ժամ չմնաց,
Սպիտակ վարդեր իմ կյանքի,
Թե թերթերը ձեր բացվի,
Ինձ էլ հիշեք ինչ կլինի:

Տեր իմ Աստված, ինչ մեղք էի ես գործել,
Թե գործել եմ, ուր է ապրուստն այսօրվա,
Թե քո կամքն է, փորձության եմ արժանի,
Սիրով քոնն եմ, քո ծառան եմ եկթակա:

Քո մեծ կամքով ինչ տանջանք էլ, որ լինի,
Ես կտանեմ անխոնջ սրտով ու արի,
Չեմ տրտնջա, բողոք չունեմ անկասկած,
Միայն չզգամ, որ կլինեմ անիծված:

Ես չեմ փոխի իմ հավատը չարությամբ,
Այլ կդառնամ խոնարհ խոհեմ բարությամբ,
Ձեռք կմեկնեմ ընկած մարդուն կամավոր,
Սերմ կցանեմ հոգու խորքում մաքրությամբ:

Գթա Տեր իմ տառապյալիս ընկճված,
Օգնիր բուժվի վերքերն այսօր, հին խոցված,
Այս մեկ դասը բավ է կարծեմ ինձ համար,
Որ չշեղվեմ արդար ճամփից չարեչար:

Բնության թագուհիներ Յայ աղջիկներ,
Ես հարբած եմ Ձեր քնքուշ բուրմունքից
Յոգով, մտքով, անկեղծ սիրով:
Բայց դուք բոլորդ Ախթամար եք
Դժոխքում գտնվող իմ հոգու համար:

Մարդ կոչյալները

1

Չանելուկային աշխարհ, քո պարզ կապույտ ամպերի տակ, թափառում են մոլորված թշվառ, բայց գոռոզ, ագահ, դաժան, շահամոլ, փառամոլ, դավաճան մարդ կոչյալները, որոնք հանուն անսահման իշխանության հասնելու, ոտնահարում են մարդկանց բոլոր իրավունքները, ձգտելով դեպի աներեւալի բարձունքներին, մի պահ մոռանալով, որ շուտով նմանվելու են խրտվիլակների եւ դառնալու են այս հողի պարարտանյութը: Աստված, մի գուցե դու գիտես ովքեր են այս մոլորված թշվառ, քո հավատքը չարաշահող պիղծ գիշատիչ մարդ կոչյալները:

2

Ես նման եմ հանգչած մոմի, իսկ դու նման ես վառ վառվող մոմի լույսին, որի ջերմությունը հալեցնում է իմ հոգին:

3

Այնպես կուզեի հավերժ քնով ես քուն մտնեի քո գրկում եւ չարթնանայի կյանքում երբեք, որ չտեսնեի մղձավանջները այս կյանքի:

4

Այնպես կուզեի քո սիրած ծաղիկի քնքուշ բուրմունքը ես լինեի, երբ ծաղկեփունջը սեղմեիր կրծքիդ եւ հոտոտեիր ծաղկեփունջից, ես թափանցեի քո հոգու մեջ, հավերժ ապրեի քո հոգու մեջ հագեցնելով քո հոգուն...

5

Ես չեմ տեսել եւ չեմ լսել, չեմ զգացել իմ ծնունդս աշխարհ գալուց եւ չեմ տեսնի եւ չեմ լսի չեմ զգա հեռանալս աշխարհից, եւ չի հիշվի, կմոռացվի բարի հոգուս տանջանքներս աշխարհում, որը նման էր կարճ երազի, երազի, երազի պես շուտ անցավ:

Հայացք գերեզմանատնից

Մանուկ հասակիս միշտ անցնում էի գերեզմանատուն տանող ճանապարհի կողքով եւ միշտ վախում էի հայացքս ուղեի շիրմաքարերից կառուցված այս փոքրիկ քաղաքի վրա եւ միշտ հայացքս ուղղում էի գերեզմանատան դիմացում գտնվող այգիների վրա, որտեղ միշտ զբոսնում են սիրահար զույգերը: Հասուն տարիքիս նույնպես միշտ անցնում էի գերեզմանատուն տանող ճանապարհի կողքով, բայց արդեն չէի վախում հայացքս ուղղել գերեզմանատան շիրմաքարերից կառուցված այս փոքրիկ քաղաքի վրա, այլ հակառակը բազմաթիվ շիրմաքարերի միջից փնտրում էի իմ հարազատ բարեկամների շիրմաքարերը: Բայց երբեք մտքովս չէր անցնում, որ շուտով ես էլ կդառնամ այս շիրմաքարերից կառուցված փոքրիկ քաղաքի հավերժ բնակիչը, եւ իմ արդեն վաղուց մոռացված շիրմաքարիս վրա պատկերված կերպարիս հայացքը միշտ ուղղված կլինի գերեզմանատան կողքով անցնող ճանապարհի վրա, որտեղից միշտ անցնում է ինձ նմանվող մի փոքրիկ մանուկ, որը նույնպես միշտ հայացքը ուղղում է գերեզմանատան դիմացի այգիների վրա, որտեղ միշտ զբոսնում են ձեռք ձեռքի տված սիրահար զույգերը: Իսկ արդեն ավերված իմ շիրմաքարի վրա գայլերի մի ոհմակ հովիվից գողացած գառնուկին ազահորեն պատառոտելով հոշոտում են նրան, հագեցնելով իրանց քաղցը գիշատիչի, իսկ մեկ ուրիշ ավերված շիրմաքարի հետեւից գլուխը հանած երկար դունչը լպստելով հետեւում էր մի քաղցած խորամանկ աղվես: Երբ գիշատիչ գայլերը հագեցած հեռացան, խորամանկ քաղցած աղվեսը արագորեն քաշելով փոստը գառան իր մնացորդներով տարավ իր թաքստոցը գոնե մնացորդներով հագեցնի իր քաղցը գիշատիչի: Իսկ քաշած փոստի տակից իմ ավիրված շիրմաքարի վրա երեւաց փորագրված այս տողերը: Որն է իմաստը այս անիմաստ կյանքի, երբ գլուխներս առաջ աշխարհ են բերում, ոտքերներս առաջ տանում են աշխարհից:

Առավոտյան արթնանալիս թող արեւը ինձ արթնացնի, դրախտային չքնաղ պարտեզից թող մերկ դուրս ինձ կանչի, ես սիրածս յարիս հետ միասին թավալվեմ աշնան խոտերի վրա, իսկ աշնան խենթ քամին թող պոկի արդեն դեղնած տերեւները ծառից եւ թափի սիրո զգացմունքներով գրգռված մեր մերկ մարմինի վրա: Ես սիրածս յարիս հետ առավոտյան արթնանալիս ինձ միշտ զմայլված զգամ:

Հանցագործը

Անցնում էի հանելուկային աշխարհի կարճ ճանապարհով, անմեղ հայացքով նայում էի բնության գեղեցիկ գույներին, հանկարծ հայտնվեցի թագավորական շքեղ ամրոցի դիմաց, երկաթե բարձր ցանկապատների ճաղերի անցքերից երեւում էր թագավորական ամրոցի բակը իր բազմաթիվ շատրվաններով, լողավազաններով, որոնց շրջապատում էին բազմաթիվ վարդագույն վարդերը, չքնաղ դրախտային այգու ծառերը: Այդ հեքիաթային ամրոցի բակում շատրվանների մոտ կանգնած էր մի չքնաղ աղջիկ, մի փունջ վարդագույն վարդերը ձեռքին, նրա մերկ գրգռիչ մարմինը երեւում էր կապտագույն թափանցիկ շորի տակից, որը գրգռեց իմ սիրո բոլոր զգացմունքները, նրա գրավիչ հրաշք աչքերը, որոնց մեջ կար բնության բոլոր գեղեցիկ գույները, որ մի ակնթարթում իր սիրո նետը խոցեց իմ սիրտը, ինձ դարձնելով իր սիրո հավիտյան գերին, նա ձեռքի շարժումով ինձ կանչեց, առանց մի պահ մտածելու անցա երկաթե ճաղերից եւ հայտնվեցի թագավորական ամրոցի բակում, բայց չքնաղ աղջիկը անհետացել էր: Ես սկսեցի փնտրել նրան ամրոցի բակում, բայց չգտնելով նրան մոտեցա հեքիաթային ամրոցի պատուհաններին, որտեղից երեւում էր պալատներում լեփլեցուն թանկարժեք զարդեր: Ես զարմացած էի այդ անսպասելի տեսարանից, թե ոնց հայտնվեցի ամրոցի ներսում չեմ հիշում: Իսկ երբ ուշքի եկա, աչքերս բացեցի տեսա որ ես գտնվում եմ դժոխքի նմանվող մի սարսափելի վայրում, կիսախավար մթության ներսում երեւում էին բետոնյա խոնավ պատերը, երկաթե սեւ բազմաթիվ դռները: Ես սարսափահար եղած նման դժոխքային տեսարանից սկսեցի փնտրել այն մուտքը, որտեղից հայտնվեցի ներսում, բայց չգտա: Բաց անելով երկաթե սեւ դուռը, այնտեղ տեսա երկաթե նառեր, որոնց վրա դրված էր դահիճի բոլոր տանջամահ անելու բոլոր գործիքները, կար երկաթե աթոռներ, որոնց վրա երկաթե շղթաներով գամված էին արդեն տանջամահ եղած մարդիկ: Ես ավելի սարսափեցի այդ տեսարանից: Ես որոշեցի փախչեմ գտնեմ ելքը այդ դժոխքից: Բացելով մեկ ուրիշ երկաթե սեւ կիսաբաց դուռը տեսա ավելի սարսափելի տեսարան: Բետոնե խոնավ հատակի վրա, ոտքերը ձեռքերը կտրված պառկած էին բազմաթիվ մարդիկ, որոնք արյունաքամ էին եղնում: Ես նրանց ասացի, ցույց տվեք ելքը այս մարդկանց կենդանի գերեզմանատանից, ես ձեզ իմ ձեռքերի

վրա դուրս կհանեմ այս դժոխքից: Նրանք ինձ ասացին չգիտենք ելքը այս դժոխքի, մենք քեզ հետ խոսում ենք վերջին շնչով, դեռ դու ջահել ես, ինքդ փնտրի այս դժոխքից եւ կփրկվես թե չէ ուր որ է կհայտնվեն դահիճները եւ քեզ նույն տանջանքների կենթարկեն: Այդ պահին փլուզվեց բետոնե ամրացված պատը եւ լուսավորվեց խավար մռայլ միջանցքը, աստիճանների վրա հայտնվեց այն չքնաղ աղջիկը, որի ձեռքում կար յոթը ծայրամաս ունեցող մոմակալ, յոթը վառ վառվող մոմեր, որոնք լուսավորում էին ամբողջ միջանցքը: Նա նույն թափանցիկ զգեստով էր, որի տակից երեւում էր իմ սիրո զգացմունքները գրգռող մերկ մարմինը: Նա մեկնեց ինձ իր սպիտակ փրկիչի ձեռքը: Մենք ձեռք ձեռքի տված դուրս եկանք այդ կենդանի մարդկանց գերեզմանատնից եւ մենք միասին հայտնվեցինք թագավորական ամրոցի դրախտային չքնաղ պարտեզում, իսկ այդ ընթացքում պարտեզում տիրում էր ոսկե աշունը, հնչում էր սիրո մի քնքուշ մեղեդի: Մենք դաշտային ծաղիկներից հյուսում էինք ծաղկեպսակներ գարդարելով իրար, մենք ձեռք ձեռքի տված, իրար սիրով պտտվում ենք խենթի պես շարունակ, թավալվելով խոտերի վրա իրար փոխանցելով մեր սիրո ջերմ զգացմունքները, իսկ այդ ընթացքում մոլեգնած աշնան քամին, պոկում էր աշնան արդեն հոգնած դեղնած տերեւները թափվելով հավիտյան քուն մտած մեր մերկ մարմինների վրա:

«Ճշմարտությունը քնած առյուծ է,
կինոյի աշխարհ ես ուշ եմ գալիս, բայց ոչ ուշացած...»

Անեծք կինոպատմվածք

հարգելի ընթերցող, կուզենայի, որ ընթերցելիս ձեր
տպավորությունը մթության մեջ տեսնեիք Էկրանի վրա

Տագնապահար երաժշտություն... Ժամացույցի թխկթխկոց: Ա-
դոտ լույսի ներքո տեսանելի է երկաթյա պահարանը եւ նրա
վրայի կաշվե պայուսակը: Երեւում է մարդու ձեռքերը պահա-
րանի բանալիի անցքի մոտ, ձեռքի դանդաղ շարժումով բաց-
վում է դուռը երկաթյա: Ներսում հազիվ նշմարվում է մի կավե
սափոր, կողքին՝ թեյի բաժակ, հաց ու պանիր, մի քանի հաստ
հայկական դրամներ:

Մարդու ծանր շնչառությունը, բաժակի մեջ լցվող գինու կլկլո-
ցը, թույլ չեն տալիս, որ լսվի երաժշտությունը:

Մարդու ձեռքերը եւ գլուխը երեւում են կողքից: Նա գինին խմե-
լուց հետո ձեռքով սրբում է մորուքը:

- Ուխա՛յ, աշխարհն աղո՛վ, աղն էլ համո՛վ, դե Պողոս ջան, անցի
գործի,- մի փոքր հաց ու պանիր է դնում բերանը: Լսվում է չաչ-
պացող բերանի ոչ հաճելի ձայնը:

- Քիչ էր մնում մոռանայի...,- ձեռքը մեկնում է երկաթյա պահա-
րանի խորքը, որտեղից դուրս է հանում փոքր արծաթյա խաչը՝
կտակարանի վրա դրած: Ծածկում է պահարանը, վերցնում է
ճմրթված կաշվե պայուսակը:

Պայուսակի հետեւում երեւում է սեղանի ժամացույցը:

Տերտերը եկեղեցում քայլելով փորձում է ձայնը, աղոթքի խոս-
քեր է կրկնում, կարճ եկեղեցական երգ ասում: Դուրս գալով
բակ, կանգնում-նայում է շուրջը եւ ձայն տալիս:

- Փառանձե՛մ...

- Հա՛... Հավերի տակն եմ մաքրում:

Սեղանի ճռճոցի, բներում փակված աղավնիների ձայների մեջ
լսվում է եկեղեցու պահակի կրքոտ հեւքը, որի ձեռքերը գրկում
են Փառանձեմի մերկ կոնքերը:

- Փառանձեմ ջան, չչարժվես, քարի վրայից կընկնեմ, ազիզ
ջան, էսա կպրծնեմ:

- Դե, շուտ արա, անտեր շուն,- երկուսով էլ ցանկանում են շուտ վերջացնել: Պահակի փրչոտ ոտքերը աղաքարի մեծ կտորի վրա համաչափ շարժվում են, դիպչում Փառանձեմի ազդրերի վերելի փափուկ մասին, Փառանձեմն էլ իր կոնքն էր համաչափ շարժում:

- Փառանձեմ ջան, չասես, որ ես ըստեղ եմ, որ հարցնի՝ գնացել եմ սղոցի հետեւից,- այս բոլոր խոսքերը հեւքով էին դուրս գալիս նրա բերանից՝ դողդողացող շրթունքների օգնությամբ,- մի հատ, որ ինձ ձեռ տաս, շուտ կհանգստանամ, ազիզ ջան...

- Դե, պրծի՛...,- Փառանձեմը միայն կոնքն էր կարողանում շարժել. տեղը շատ անհարմար էր երկուսի համար էլ,- ձեռներով ինձ պահեմ, թե՞ քեզ ձեռ տամ, արա՛, արա՛, արա՛, թափո՛վ արա, որ շուտ հանգստանաս, մի՛ կանգնի, արա՛, արա՛... Ինձ ասա, ե՞րբ եմ փետուս ուղարկում կարի մեքենայի հետեւից:

- Վա՛խ, վա՛խ... Եսա կլինի, Փառանձեմ ջան, մենակ մի շտապի, հլա երկու անգամ էլ ունեմ, եղաա՛վ-եղաա՛վ...ջա՛ն...վա՛խ...վա՛խ...ջա՛ն...ջա՛ն...

Պահակի՝ ճմրթված կնճիռներով պատված, դեմքը քրտնած էր, լեզուն պտտվում էր ջրոտ շրթունքների բոլորը, ձեռները թուլացած էին: ...Երանելի պահը անցել էր:

- Պրծա՞ր, անտեր շուն, դե շուտ իջի ցած, մեջքս կոտրիիր, քո համար ջահել աղջիկ չեմ,- Փառանձեմը ուղղվեց, մաքրեց իրեն, իջեցրեց կոնքերի վերելի մասում հավաքված խալաթը: Պահակը նստել էր կոճղի վրա, վրայից հանած շորերով ծածկել էր մերկ ազդրերը, ուզում էր հանգստանալ:

- Այ տղա, քեզ տեսնողը կասի՞, որ մեջդ Էդքան բան կա, հոգիս բերանս բերիր:

- Փառանձեմ ջան, ինչ կա չկա տանս մեջ, քոնս Է: Լվացքի մեքենան իմպրոտնի Է՝ ուպակովկի մեջ... դրա համար էլ առանձին կպայմանավորվենք:

- Ա՛խ, գիտեմ-գիտեմ, մինչեւ աղջկաս օժիտը դգելը, դու ինձ կմեռցնես, քո տղեն այդքան տարի Հայկոոպի ռեվիզոր էր, Էդ ապրանքները հո իմ տանը չէր լինի...

- ԷԷ՛հ, Հռիփսիկիս մեռնելուց հետո, աչքիս բան չի երեւում:

- Եղածներիդ պինդ պահի, քաչալ գլխիդ դուրբան,- Փառանձեմը ափով թխկթխկացրեց պահակի գլխին,- կստես ըստեղ մինչեւ Պողոսը գնա:

Փառանձեմը դուրս եկավ հավանոցի դռնից, վերցրեց դուլլն ու ավելը, ծառերի միջեւ եղած ճանապարհով գնաց եկեղեցու սա-

լապատված բակի կողմը, տերտերի մոտ:

- Ծերտերի մեջ կորած էր բունը, Պողոս ջան, հազիվ մաքրեցի, հիմա ասա՝ ինչ անեմ:

- Փակի եղածդ, ի՞նչ պիտի անես, փառավորվես քո ձցումներով: Չկոճկված խալաթի տակից դուրս պրծած կուրծքը ստիպեց Պողոսի աչքերին բնի մեջ պտտվել: Փառանձեմը դույլն ու ավելը զցեց գետին:

- Վա՛յ, յա՛, քեզ ի՞նչ պատահեց Պողոս ջան...խալաթիս կոճակների տեղերը մաշվել են, հենց կռանում եմ, ես անտերները դուրս են ընկնում, ինձ մի լավ խալաթ առ, քո պահած փողերով:

- Եսա, գնում եմ, Եսորվա խաչհամբույրից մի բան կտամ քեզ, խալաթ կառնես, մենակ ես հավերին հետեւի, քիչ են ձու ածում, կարո՞ղ է ուտում են իրենց ածած ձվերը, բա քեզ ինչի՞ համար եմ պահում:

- Ուզո՞ւմ ես ասեմ, ինչի համար ես պահում...,- Փառանձեմը կռանում է, դույլն ու ավելը վերցնում՝ մի ձեռքով ծածկելով կուրծքը:

- Պա՛հ, պա՛հ... շա՛ն կնիկ, իմ վրա թանգ ես նստում, լեզուդ գունե քեզ քաշի, դու մոռանում ես, որտեղ ես աշխատում, փողը երկնքից չի թափվում: Պողոսը խաչակնքում է: Զսանվեց հավից օրը տասը ձու ես հավաքում:

- Կեր չես տալի, ու ձո՞ւ ես ուզում հավաքեմ,- Փառանձեմը գնում բացում է եկեղեցու բակի աղբյուրը եւ ջուր է լցնում դուլի մեջ:

Լսվում է մոտեցող մեքենայի շարժիչի ձայնը: Պողոսը քայլում է դեպի եկեղեցու բակի մեծ փայտյա դռան կողմը:

- Որ ըտեսց է, ինձ բինոկլ առ, որ նստեմ եւ քարին, նայեմ քո հավերի ոռներին...

- Ասա՛, մոռացել էի, որ քո բերանը փակել չի լինում, տեղում մնա, որ շատ մոմ ծախվի, ես գնացի:

Տերտերը ծանր քայլելով դուրս եկավ եկեղեցու բակի դռնից: Վիլիս մակնիշի՝ փոշոտ, կեղտոտ մեքենան կանգնեց, իր հետ բերած փոշին համարյա ծածկեց մեքենային:

Տերտերը ձեռքով մաքրում էր իր կողմը եկող փոշին: Մեքենայի միջից դուրս եկավ կարճահասակ մի զինվոր, արագ շարժումներով մոտեցավ տերտերին:

- Ներող եղիր, տեր հայր, ուշանալու համար:

- Ներում եմ, որոյակս, բայց ձեր մեքենան իմ չափ է, ոնց եմ նստելու, մի կարգին մեքենա չունեի՞ք, ի՞նչ է քո անունը:

- Երջանի՛կ, բայց բոլորը Երջո են ասում:
- Մի նեղացի ասողներից, երջանիկ մարդ չի լինո՛ւմ:
Երջանիկ ջան, ուրեմն պետք է ինձ օգնես, ոոսս մեքենայի մեջ դնեմ:
- Յա՛, տեր հայր, ի՞նչը ոտդ քո վրեն չէ:
- Չհասկացա՞ր, պրոտեզ է:
Երջանիկը՝ Նշանի մեքենայի տիրոջ հետ չարչարվելով մի կերպ տերտերին նստեցրին մեքենայի առջեւի մասում:
Եկեղեցու բակում Փառանձեմը հավերի մեջ տեսավ աքլորին՝ հավի վրա թւերը թափահարելիս ու ոտքով հարվածեց աքլորին:
- Ո՛ւո՛ւշ, թաղեմ ձեր տիրոջը, անտեր մնաք:
Մեքենայի շարժիչը աշխատեց նորից, Փառանձեմը վազեց եւ բարձրացավ հավաբնի մոտ գտնվող աստիճանով:
- Զյաչալ, դուրս արի,- կատակեց Փառանձեմը:
Եկեղեցու բակի պատի հետեւից երեւում է Փառանձեմի գլուխը՝ ստուգող հայացքով:
Մեքենան գնալով հեռանում էր եկեղեցուց: Աստիճանը դրված էր հավանոցի դռան մոտ, երբ պահակը կասկածելով, լսելով գնացող մեքենայի ձայնը, գլուխը դուրս հանեց, արդեն մոտակա ծառի ճյուղը Փառանձեմի խալաթը վեր էր բարձրացրել, սրունքները՝ ազդրերի վերեւի մասով, կախվել էին պահակի գլխավերեւում, ծաղկավոր բամբակյա ներքնաշորը թաքցրել էր նրա ամոթալի տեղերը: Պահակը չդիմանալով կանգնեց աստիճանի տակ, ձեռքերը վեր պարզեց ու սկսեց երգել.
- Համ կաքավ ես, համ էլ լո՛ր... ինչ լավ ոռ ունես, ինչ լավ ո՛ր...
Փառանձեմը հավերի համար դրած ջուրը հավանոցի կտուրից լցրեց պահակի երեսին:

Մեքենան շարժվում է ճանապարհով:

- Տղեք, որտեղացի՞ եք,- տերտերը հարցուփորձ է անում:
- Նշանը Երեւանից է: Ֆիզիկ տղա է, ես էլ տեր հայր, դու հո գիտես, մարդը որտեղից կըլնի:
- Խոսքերիցդ երեւում է: Ես կռիվը վերջ ունենալո՞ւ է, թե՛չէ: Իմացեք, կռիվը զցում են աշխարհի հարուստները, նրանք էլ վերջացնում են, տուժվում են կռվող ժողովուրդները, մարդիկ սովորական:
- Ինչը չկռվենք տերհայր, ես ու Նշանը կոտորածից մի կերպ փախած, գաղթականների թռռներ ենք:
- Ճիշտն ասած, ես էլ կկռվեմ, մերոնք էլ Ղարսից են գաղթել էս

կողմերը:

- Ամոթ չլինի, ինչի՞ց ոտդ եղպես եղավ,- հարցրեց Նշանը:

- Իմ խելքից: Գայում էի աշխատում, մատացիկլետով ընկա մի խմածի հետեւից: Ավարյա տվեցի, մեքենայի տերը մահացավ, իմ ոտն էլ կտրեցին: Հետո մահացողի հարազատները բողոքեցին, պաշտոնավոր էին, ինձ էլ գործից հանեցին:

- Ցավալի է,- ցավակցում է Նշանը:

- Տեր հայր, դե ասա թամախ ես էրել տասը մանեթին, եղ մեկն էլ թող պլստար:

- Տեր հայր,- Նշանը դիմեց տերտերին,- մի նեղացի մի բան էլ հարցնեմ, գայում աշխատելն ու տերտեր լինելը տարբեր բանե՞ր չեն:

- Մեր մեջ մնա ես խոսքը, ջահել եք, որ լավ մտածեք, տարբերություն չկա իմ համար: Հայրս ես գյուղի տերտերն էր, իմ ոտքս կտրելը, գայից հեռացնելը ու հորս մահը համընկան: Ես էլ որոշեցի հորս գործը շարունակել: Ես լավ ձայն ունեմ, գերեզմանոցում կլսեք:

Գերեզմանոցում դուդուկի սրտնեղող նվագի տակ քայլում, տարբեր կողմերից տապանաքարերի վրայով Մուշեղի գերեզմանին են մոտենում նրան ցավակցող բարեկամները, հարազատները, ընկերները: Մահացածի մորեղբայրը՝ տարեց մարդ, ճանապարհին հոգնած, ձեռնափայտի վրա հենված նայում է Մուշեղի գերեզմանին մոտեցողներին.

- Է՛հ, մի օր էլ, իմ գերեզմանաքարի վրայով են գնալու:

- Պապի, արի օգնենք, թեւերիդ տակ մտնենք, քեզ տանենք,- նրան մոտեցան թռռները:

- Բալա ջան, ես էն տեղը չի, ես մենակ կգնամ Մուշեղիս մոտ: Կարա՞ք, օգնեք, որ ես կռիվը շուտ վերջանա, ջահելները մեղք են, կոտորվում են...

Ծաղիկներով ծածկված գերեզմանաթմբի գլխավերելում երեւում է Մուշեղի նկարը՝ գինվորական համազգեստով, ավտոմատը կրծքին: Մորը ուղեկցող կանայք այլեւս չկարողացան պահել ուժասպառ տարեց կնոջը: Նա արդեն գրկել էր ծաղիկների մեջ ծածկված հողաթումբը:

- Մուշեղ ջա՛ն, բալա ջա՛ն, սիրտս ու հոգիս հետդ տարար, մեզ չխղճացիր, միշտ ասում էիր. «Մեր ջան, Հայրենիքը ուրիշ բան է», Մուշեղ ջա՛ն, Մուշեղ ջա՛ն... Բալա ջա՛ն...

Դե, տղամարդ, դիմացի: Այս աշխարհում ինչն է շատ, կարեկցանքի քիչն է շատ: Մուշեղի սեւ շոր հագած կնոջ, գրկի եւ փեշից բռնած տղայի եւ աղջկա տարիքը նրանց թույլ չէր տալիս ի-

մանալ, թե ինչի համար են լացում մարդիկ: Նրանք էլ կիմանան, երբ որ մեծանան: Պատերազմում հաղթող չկա, ցավ ու վիշտ կա...

Վիլիս մակնիշի մեքենան գնում էր գերեզմանների միջեւ եղած ճանապարհով: Մեքենայի դիմացի ապակուց երեւում են մի քանի գերեզմաններ:

- Մեր գերեզմաններն էլ ուրիշ են, աշխարհում ո՞վ է այսքան ծախս անում մեռած մարդու վրա,- դժգոհեց տերտերը,- դե՛, տղեք ջան ինձ նորից պետք է օգնեք մեքենայից դուրս գամ:

Մեքենան կանգնեց Մուշեղի գերեզմանից քիչ հեռու, հավաքված մարդիկ տեսան ինչպիսի դժվարությամբ են դուրս հանում տերտերին: Սկզբից տերտերի պրոտեզը հանեցին, դրեցին գետին, հետո տերտերին օգնեցին՝ դուրս քաշելով մեքենայից: Երջոյի համար հաճելի չէր այդ տեսարանը, որը կատարում էր իր կռվող ընկերների ներկայությամբ՝ իմանալով, որ հետո մի բան հորինելու են իր վրա:

- Մեռնողի անունը ի՞նչ էր...

Երջանիկը չոքել էր տերտերի առաջ, հարմարացնում էր պրոտեզը. «Էդքան հարցնելուց հետո, ինչը շուտ կմոռնաս, Մուշե՛ղ է»: Տերտերը՝ ձեռքով հարթեցրեց մորուքը, վերցրեց խաչն ու կտակարանը, սկսեց արարողությունը՝ երբեմն ընդհատելով եկեղեցական երգերով, որ երգում էր հաստ, բայց հաճելի ձայնով:

Երբ ինկամանը դրեցին գերեզմանաթմբի վրա, տերտերը դրա կողքին փռեց գրպանից հանած թաշկինակը: Հավաքված մարդիկ հերթով մոտենում, խունկ էին գցում ինկամանի մեջ, փող դնում թաշկինակի մեջ, կռանում էին ու համբուրում կտակարանի վրա դրված խաչը: Մահացողի հայրը մոտեցավ, վերցրեց մի բաժակ օղի, չոքեց, համբուրեց տղայի նկարը, Մուշեղի ընկերների օգնությամբ վեր կացավ:

- Մուշեղ ջան, հողդ թեթեւ լինի, ինչ էլ ասեմ, մեկ է, տղա ջան, ինձ ու մորդ, կնոջդ ու երեխեքիդ անտեր թողեցիր:

Արցունքները խեղդում էին ամբողջ կյանքը քրտինքով աշխատած, տուն ու տեղ դրած տղամարդու ձայնը:

- Ժողովուրդ ջան, Աստված ողորմած է, Մուշեղիս մի մոռացեք, եկեք գնանք տուն, տղուս քառասունքի հացը ուտենք:

Տեր հայրը դեռ կատարում էր արարողությունը, երգում ու միաժամանակ թաշկինակի միջի հավաքված գումարի հազարանոց դրամները, ծալում, դնում էր կտակարանի էջերի մեջ:

Նկատելով իրեն մոտեցող Երջոյին, ցածր ձայնով ասաց.

- Իմ բաժին հոգեհացը, թե որ կարաս, դիր իմ հետ տանեմ:
- Էն եղած ուտելի՞քը,- Երջոն ձեռքով ցույց է տալի սեղանի վրա-
յի դրածը,- արաղի՞ հետ վերջում կոնեմ քո չամադանի մեջ, որ
մնաց ստեղ գիշերը գերեզմանի շները կուտեն:
- Երջո՛, ինձ էլ օղի լցրու, որ ցավակցական խոսքս ասեմ,- տեր-
տերի խոսքերը հայհոյանքի էր նման:
- Երջոն մեծ բաժակով օղին տալիս է տերտերին:
- Սիրեցյալ իմ ժողովուրդ,- սկսում է տերտերը,- Մուշեղը մահա-
ցել է Հայրենիքի համար: Նրա հոգին փառավորվեց, հավիտե-
նական կյանք ստացավ... Աշխարհին խաղաղություն, մեզ բոլո-
րին համբերություն, համբերություն եւ կրկին համբերություն...
Տեր հայրը մի թեթեւ կռացավ գերեզմանաթմբի վրա.
- Ես օղի լցնելը ճիշտ չէ, ես կիսմեմ Մուշեղի հոգու հանգստու-
յան համար: Հողդ թեթեւ լինի...
- Տեր հայր, մինչեւ վերջ իսմե, մեր տեղն էլ իսմե, ես էլ քեզ զա-
կուսկի,- հրամցնողը Երջոն էր:
- Մի քիչ ավելի մեծ սարքեիր:
- Տեր հայր ջան, ամեն մարդու՝ իրա չափ:
- Կատակդ տեղին չէ՛, որ տվել ես, կուտեմ: Տես, հա, ավտոյի
մեջ դու ես մտցնելու:
- Տեր հայրը վերցնում է լավաշով սարքած բուռումը եւ սկսում է
ախորժակով ուտել:

Մուշեղի ընկերների խնդրանքով Նշանը կարդում է գոհվելուց
հետո Մուշեղի գրպանում գտնված բանաստեղծությունը, որ
գրված է ծխախոտի տուփի վրա:

Ծնվելը՝ մեղք չէ՞...

Ունենալ թշվառ Հայրենիքն է՛ մեղք...

Աշխարհի որ տեղում էլ լինես, դո՛ւ պատերազմ,
Քո սեւ դրոշի վրա՛ անեծքն է ծածանվելու...

Իսկ դո՛ւ, արդարությո՛ւն, լռելու ես կրկին
տապանաքարի պես:

Չարիք՝ ասեմ, թե՛ բարիք, անգոր, թե՛ գորավոր,
Միաբանությունների, շնորհների ծածկույթ,
Մարդկության գոհար, չմարվող կրակ,
Մեջս ձուլված բարեշուք մի բառ,
Արցունքներիցս առաջացած մի քար,
Չղջմանս գեղեցկություն՝ ընկած իմ ճանապարհին.
Օ՛, դժվարանում եմ... ասել՝ արդարություն:

Նշանը շարունակում էր արտասանել, իսկ տեր հայրը տարված էր իր ստամոքսով:

Լուսազգեստդ՝ սրբության նժարի կշռաքար,
հրավունքի թիկնոց, կուզեի գցեի հոգևած
մարմնիս,

Տառապած, մոլորյալ հոգիս՝ կրթելով...

Կշռեի իմ անմեղությունը,
Տենչացող առաքինությունս:

Պահեի գաղտնիք սրտիս գանձարանում,

Որտեղ մահվան հոտն եմ... ես առնում,

Որտեղ ես մերկ եմ, ստրուկ եւ մենակ

Աստծո տված շնորհով:

- Երջո, տվել-տվել ես, մի հատ էլ ջուր տուր,- շրջապատին անտարբեր՝ ասաց տերտերը:

- Զիչքմ, սպասի, Տեր հայր, քո աֆիցիանտը հո չե՞մ, հեսա, հմիգ կուդամ:

Կռվող տղաներից մեկը մոտենում է Նշանին:

- Մեռածը լավ էլ սպասարկում է, կարո՞ղ ա տերտերի հավաքած խաչհամբույրի գլխին մի բան ա ուզում սարքի:

- Դու կարող է անեիր, Երջոն կատակ է անում:

- Սո՛ւս, սո՛ւս, ես մտածում եմ դրան ոնց ենք ավտոյի մեջ նորից մտցնելու:

Տեր հայրը բաժակի միջի հանքային ջուրը խմում էր ազահաբար, իսկ երկինքը անձրեաբեր ամպերի հետ կարծես պատրաստվում էր իր ցավակցական խոսքը ասելու հանգուցյալի հարազատներին:

Ամպերի գոռգոռոցը, կայծակի որոտալը ուղեկցում էին եկած ճանապարհով հետ գնացող Վիլիսին:

Նշանը եւ Երջոն ցանկանում էին տերտերին շուտ տեղ հասցնել եւ վերադառնալ Մուշեղենց տուն, որտեղ սպասում էին իրենց զինակից ընկերները: Մեքենայի դիմացի ապակու վրա երեւում են անձրեւի կաթիլներ, որոնք գնալով շատանում էին: Ճանապարհին, մեքենայի միջից երեւում է մի մարդ՝ թերթը գլխին պահած:

- Տղեք, կանգնեք թրջվող հոգուն վերցնենք:

Մեքենան առաջանալով թրջվող մարդուն, կանգնում է, մարդը վազում է, նստում հետեւի նստարանին, Երջոյի կողքին:

- Ես ինչ լավ բան արիք, տղեք, ինձ մինչեւ Կաքավաձոր որ հասցնեք լավ կլինի, ես էդ գյուղի անասնաբույժն եմ:

- Սաքոն դո՞ւ ես,- հարցրեց տեր հայրը:

- Ես եմ, ի՞նչ կա:

- Ես Պողոսն եմ: Էդ դո՞ւ ես մարդկանց քարոզում, թե մարդու մարմինը եկեղեցի էլ է՛, հոգու տաճար է՛լ: Գյուղի անասունները սեփականացրիր-կերար պրծար, հիմա էլ խեղճ մարդկանց հոգիներն ես սեփականացնում քո սուտ աղանդով: Իմանայի, չէի կանգնացնի ավտոն:

- Այդ դուք չեք որոշողը, մարդը կրոնական որ հավատքին լինի, մարդը ազատ պետք է լինի հավատքի ընտրության հարցում: Սուտը դու ես քո եկեղեցով ու քո նման հաստավզերը, որոնք կրոնից Էնքան հեռու են, ինչքան խոզը տուրնիկից:

Տերհայրը առանց շրջվելու Սաքոյին է ցույց տալիս բութ մատը երկու մատների արանքում:

- Առ ձեզ, երկնային արքայություն... Ես քո խոզ մերը քուն՛ն՛ն...,-Տեր հայրը այլեւս չէր կարողանում խոսել, քանի որ հետեւից Սաքոն տերտերի խաչի ցեփը ձգում էր պոկելու համար: Երջանիկը ձեռքերով ուզեց բաժանել կռվողներին:

- Ծո, Նշա՛ն մի բան ըսե, ըսոնք ի՞նչ գուզեն իրարից:

Տերհայրը արդեն հասցրել էր իր գրպանից հանել մեծ խաչը: Նշանը ստիպված արգելակեց մեքենան, քիչ էր մնում շրջվեին: Դրսում անձրեւը շատացել էր: Խաչի շղթան հայտնվեց Սաքոյի ձեռքի մեջ, Տերհայրը մի քիչ շրջվելով, սկսեց հարվածել Սաքոյի ձեռքերին մեծ խաչով, ավելացնելով կիսատ մնացած հայիռյանքը՝ ...նեմ,...նեմ, ...նեմ, ...նեմ, տո հլա բոզ կնգա նման ճանգռում ես:

Երջոն իր փոքր մարմինը խցկել էր նրանց արանքը, բայց անօգուտ:

- Յա՛, ո՛ւՖֆ, խաչդ աչքս կոխիր, տերհայր,- ցավից բղավեց Երջոն:

- Վերջապես Նշանը նույնպես գայրացավ:

- Ախպեր, թող ռադ էլի, գնա, հո դու փորձա՞նք չես:

Երջոն բացեց հետեւի դուռը, կռվող կողմերը դեռ չէին հանդարտվել, իրար ինչ ասես ասում էին, բայց ուժը չպատեց Սաքոյին դուրս նետելու համար:

- Ախպերներ չե՞ք դուք,- դիմադրում էր Սաքոն,- դուք մարդ չե՛ք, անիծվե՛ք:

- Տո ծո՛, կդորըմ ազգ ենք մնացել, ըդիկ էլ կանիծե՞ս... դե թռի դուրս,- Երջոյի մի ոտքի հարվածով Եհովաջին հայտնվեց անձ-

րեւի տակ, ճամփեզրի ցեխերի մեջ:

Մեքենան շարժվում է տեղից, անիվի տակից ցեխոտ ջուրը լցվում է Եհովաջու հեմքին եւ նա բղավում է մեքենայի հետեւից:

- Անիծվե՛ք դուք..., անիծվե՛ք...

Մեքենայի հայելու մեջ երեւում է տեր հայրի արյունոտված երեսը: Նա թաշկինակով մաքրում է դեմքը:

- Ես դրա... հլա տես Է՛... դրսում լինեիք խաչը դրա փորը կկոխեի...

- Դե լա՛վ, տեր հայր, խաչը ի՞նչը կուղայիր, ըդոր մատների, ոսկրների կտկտոցը գուկար գը:

Տեր հայրը բացում է ծնկներին դրված իր պայուսակը, որի մեջ երեւում է գերեզմանից վերցրած ուտելիքը, որի վրա դրված էր մի քանի շիշ օդի՝ Աշոտ Ղազարյանի նկարով: Կիսատ շիշը վերցնում է, որպեսզի օդով մաքրի երեսի արյունը: Նշանը չի համբերում, դիմում է տերտերին:

- Ախր, տեր հայր, ոնց որ ինքն էլ էր ճիշտ բան ասում, դուք էլ մարդու հոգում ինչ կա-չկա, ձեզ եք վերագրում, հո մենակ դուք չե՞ք:

- Ձախել ես, չես հասկանում, ճիշտը քոն է, ուրիշ ճիշտ չկա: Յույց տուր մի պետություն, կայսրություն, կուսակցություն, որ երկու հազար տարի դիմացել է: Էդ մենք ենք, մեր եկեղեցին, մենք որ չպայքարենք, էդ աղանդավորները սաղ-սաղ մեզ կուտեն:

- Ես խաչմերուկից, Նշան ջան, թեքվի աջ: Ես գիշեր Փառանձեմի մոտ գևամ-մևամ: Ի՞նչ մարմար մարմին ունի շան կնիկը:

Անձրեւը վերջացել էր: Մեքենան թեքվեց խաչմերուկից, մի քանի տուն անցնելուց հետո, կանգնեց մի տան դարպասի առաջ: Երջանիկը դուրս եկավ մեքենայից, նույն արարողությամբ տերտերին մի կերպ հանեց մեքենայից: Նշանն էլ պայուսակը տվեց տերտերի ձեռքը:

- Դե, տղեք ջան, շառից-փորձանքից հեռու մնաք, Աստված ձեր հետ:

- Քո հետ էլ, քո հետ էլ, տեր հայր...,- Երջոն ձեռքով օդային հրաժեշտի շարժում արեց, հոգոց քաշելով տերտերի հետեւից: Չայրացած Երջոն նստեց մեքենայի առջևի նստատեղին, մեքենան շարժվեց տեղից:

- Այ քեզ տերտեր, ըդոր պետլավատ էրած պրոտեզը, ինքը՛..., խեղճ Փառանձեմ, ի՞նչ պիտի էնե ըդոր պրոտեզը..., տեղով կին էր...քշե՛, քշե՛, տեղ հասնինք, վա՛յ աշխարհ, աշխարհ, ընչի՞՞

Ես ըդոնց համար կլոր...

Տան դուռը բացում է Փառանձեմն ու զարմանքն արտահայտում կատակելով:

- Աչքս լուս, եդ ո՞ւմ հետ ես կռվել, Պողոս ջան:
- Սո՛ւս, սո՛ւս, թող մարդ չիմանա, սումկեն վերցրու, մի հաս ջուր տուր խմեմ:
- Բերանիցդ ջան հոտ է գալիս, եդ որտե՞ղ ես խմել:
- Որ ասեմ Լաս Վեգասում, կհավատա՞ս: Զիչ խոսի, Էսօր քո մոտ եմ մնալու... Սաքոյի հետ եմ կռվել, ափսոս, տղեքը չթողին, գլուխը ջարդելու էի: Եդ աղանդավորներին սպանել է պետք:

Տեր հայրը գրպանից հանեց թաշկինակը, դրեց սեղանին:

- Փառանձեմ ջան, Էս էլ քեզ Աստծո տվածը:
- Փառանձեմը շուռումուռ տվեց փողերն ու նայեց տերտերի երեսին՝ սպասելով ջուրը խմի վերջացնի:

- Անո՛ւո՛ւշ, Պողոս ջան, Էս հենց աղքատ մեռել է լինում, նոր ես ինձ հիշում, ո՞ւր են մեջի մեծ փողերը, հազարանոցները...
- Է՛, Փառանձեմ ջան, Աստծո տվածից մի հրաժարվիր, Էս ուտելիքները դիր խալադելնիկի մեջ, գիշերը քե՛ֆ ենք անելու, քե՛ֆ... Տերտերը ձեռքը դնում է Փառանձեմի նստատեղին՝ շոյելու ցանկությամբ:

- Ձեռիցս բռնի, մի վեր կենամ, ոոս տեղը լավ չի գցել:
- Փառանձեմն օգնում է, քաշելով նստած տեղից բարձրացնում տերտերին, կանգնեցնում իր դիմաց: Տերտերը չի կորցնում իրեն, մռնչոցով համբուրում է Փառանձեմի կուրծքը:

- Այ, հիմա, անուշ եղավ, Փառանձեմ ջան:
- Հասցրեցիր հա՞, տերդ թաղեմ, այ սրա համար ես ինձ պահում, տվածդ էլ մի բան չի:
- Էս բանալիները տար-տուր պահակին, ասա թող խունկ ու մոմ ծախի, մեկ էլ ասա, որ մութն ընկնի, գա ըստեղ, բան եմ ասելու:

Մեքենան դանդաղ գնում է մառախլապատ ճանապարհով, Նշանն ու Երջոն անհանգստացած են ուշանալու համար: Հանկարծ մեքենայի առջեւ, մառախուղի մեջ տեսիլք է երեւում: Նշանը դանդաղեցնում է մեքենան:

- Աչքիս ոնց որ թե բան երեւաց, Նշան:
- Շուն հո չե՞ր:
- Մարդ որ չէր, Նշան ջան, դանդաղ քշի:
- Թողնում են, որ, տեսա՞ր ինչ տներ են սարքում, ոնց որ պատե-

րագվ չլինի, ըստեղ մարդիկ իրենց գրպանի ու հաճույքի մասին են մտածում, իսկ մենք կռվում ու ընկերներ ենք թաղում:

Այլեւս մառախուղ չկար, ճանապարհը երեւում էր իր երկարութամբ:

Հանկարծ Նշանը նկատեց իր կողմից զուգահեռ ընթացող մի սեւ Մերսեդես, որի պատուհանից սպորտային հագուստով ինչոր մի անձնավորություն ատրճանակը ձեռքին թափահարում է:

- Է՞ս որտեղից հայտնվեց:

- Նշան ջան խմած կլինես, հետները չդնես, տեսեսնք ովքե՞ր են, ի՞նչ են ուզում:

Մերսեդեսը կտրեց Վիլիսի ճանապարհն ու կանգնեց: Նշանն արգելակեց մեքենան ու կանգնեց ճամփեզրին: Մոտեցողը Վլեն էր՝ ատրճանակը ձեռքին:

- Արա, շանս ավտոյի տակ եք քցել ու արխաղիտ եք ըլնում, եղ ոնց կըլնի, հլա շուռ եկեք, ֆռացեք, շանս մի բան պատահի, ինձնից չնեղանաք:

- Ախպեր ջան, մենք կռվող տղեք ենք, Մուշեղի քառասունքին ենք եկել, ի՞նչ շուն, ի՞նչ բան:

- Ոնց թե՛ ի՞նչ շուն: Մեր շունն էլ Է՛ կռվող: Ողորմի Մուշեղին, մենք հարգում էինք եղ տղուն, բայց չճշտե՞նք, ճշտի ցավը տանեմ, քեք հետեւիցս:

Վիլիսը շրջվեց Մերսեդեսի հետեւից եւ գնացին հակառակ ուղղությամբ:

- Նշան ջան, ըղոնք թռչող տղոնցից են, մե քիչըմ նեռվերդ խնայի, հանգիստ խոսի, էս օրով կռիվ չսարքեսք, տեղով շառ են: Դու տեսե՞լ ես շանը, չէ՛, ե՛ս էլ չեմ տեսել:

Մեքենաները ճանապարհից դուրս գալով, մտնում են մի փողոց, որտեղի տները մեկը մյուսից լավ սարքած էին: Մեքենաները կանգնում են այն տան առջեւ, որտեղ տղաներ էին խմբված, որոնք հետաքրքրության համար էին հավաքվել: Վլեն թաղի լավ տղերքից էր:

Նշանն ու Երջոն՝ Վլեի ատրճանակի տակ քայլում էին դեպի տուն: Տան սրահում Վլեի պապը՝ տեսնելով գինվորական համազգեստով տղաներին, չդիմացավ:

- Այ տղա՛, ամիթ է շան համար կռիվ չեն անի, շան տեղը դու ընկնեիր ավտոյի տակ, ես պրծնեի:

- Որ ես տունը մնա քե՞զ, բիձա... մի կտոր հացդ կեր, վեր ընկի տեղդ: Շան բժիշկը որ գա, դուռը կբացես:

Նշանի ներվերը չդիմացան: Նա մի ձեռքով բռնեց Վլեի ձեռքի

ատրճանակը, մյուսով ուրրեց գլուխն ու կանչեց Երջոյին:

Վլեն ձիգ տղա էր, դժվար էր հանձնվում եւ այդ պահին լսվեց կրակոց, գնդակը կոտրեց չինական սափորը, որ դրված էր Վլեի մահացած հոր ու մոր նկարների տակ:

Նշանն ու Երջոն՝ անկախ իրենցից բաց թողին Վլեին:

- Արա, տանս մեջ իմ վրա ձեռ եք բարձրացնո՞ւմ, ես ձեր մե-
րը... հլա մի հատ շուտ կանգնեք պատի տակ:

- Չակո՛, Չակո՛, բիճա հլա շանը բա՛ց թող շուտ:

Չակոն իրոք եկավ, տղաներից մի քիչ հեռու նստեց: Շան հետե-
լից սենյակ մտավ Վլեի գործընկերը՝ «Չեղած» մականունով,
ստրագաչ տղա էր, իրենց ախպերական լեզվով ասած, կյանքի
մեծ մասը գաղութներում էր անցկացրել:

- Ախպեր, լսել եմ շունդ ընկել է ավտոյի տակ: Վաղը իմ հարուր
դուլարը ո՞վ է տալու: Ցավակցում եմ, ախպեր:

Չեղածը ձեռքը մեկնեց, որ ախպերավարի ցավակցի, այդ պա-
հին շունը թռավ Չեղածի վրա եւ նա ընկավ հատակին:

- Վլե՛, փրկի՛, կարող ա կծի,- բղավում է Չեղածը:

- Արա, կարող ա մի հատ էլ կգացնի, քեզ չեմ ասել, իմ շան մոտ,
իմ հետ ձեռով մի խոսա,- Վլեն շանը հեռացրեց Չեղածից:

- Վլե ջան, հարուր դուլար բեյ եմ տվել Բանգլադեշի Տիկոյին, բա
ոնց ա ըլնելու:

- Արա, ես պրիչում, ես եմ, սրանք են շանը ավտոյի տակ քցել:

Չեղածը շրջվեց: Դռան հետեւում, պատի տակ կանգնած էին
Նշանն ու Երջոն՝ մոլորված ու զարմացած, չհասկանալով, թե
ուր են ընկել, վերջն ի՞նչ է լինելու:

- Ախպեր, էսի արդեն բազառ ա, Վլե՛... Թե քցել եք, լիչնը դուք
պետք ա պլատիտ ըլնեք: Լավ էլ կռվող տղեք եք: Հինգհարուր
դուլարանոց իմ ազավոռկեն ջրվավ: Հա, ախպեր, ձեզ սռոկ եմ
տալի, որ փակվեք:

- Ախպեր ջան, մենք չենք իմանում ընկել է, թե՛ չէ, որ չենք իմա-
նում ոնց ասենք ընկել է:

Այդ պահին լսվեց բժշկի ձայնը: Նա Վլեի պապին բարեւելով
ներս մտավ: Բժիշկը Սաքոն էր, որը ցույց չտվեց, որ կես ժամ ա-
ռաջ Նշանն ու Երջոն իրեն մեքենայից դուրս են գցել:

Բժիշկը գննեց շանը:

- Մի քիչ մեջքն է քերծվել, մեկ էլ վախեցած է, չի կարա կռվի, ես
վաղը կգամ, դեղ կբերեմ:

- Դե հիմա ի՞նչ կասեք, ընկել է, թե՛ չէ: Չեղածի ձեռից հլա մարդ
չի պրծել, դե ասչոտ տվեք ախպերիկներ:

Չեղածը բժշկին ուղեկցեց մինչև սենյակի դուռը:

- Բժիշկ ջան, ինչ որ պետք է, արա, Վլեն քեզի պլատիտ կըլնի, մենք քեզ ըտենց չենք թողի, քեզ տանող տղերը վաղը կգան:

Բժիշկը նույնիսկ չնայեց Նշանի ու Երջոյի կողմը:

Չեղածը դռան մոտից շրջվեց եւ իրեն հատուկ շարժումներով մոտեցավ Նշանին ու Երջոյին:

- Ախպեր, էս որդեղի՞ց փաթե՞վաք, մեր գործին խփիք, ի՞նչ դակումենտ ունեք, հանք-դրեք սեղանին, լավ է, որ հլը մարդ չեք քցել, շունն էլ կենդանի է մնացել: Միլիցու ձեռը որ ընկնեիք, գործ կբացեին, բայց հո մենք միլիցա չենք, հը՞: Վլե ջան մեր վաղվա թավանը փակեք: Էս դակումենտները կմնա մեր մոտ, մինչև հինգ հարուր դոլարի փակվելը:

- Ախպրդիք, ձեր հոգուն դուրբան, մեզիկ որդիան հինգ հարուր դոլար: Ծո՛ր, հո խիղճն էլ չմեռա՞վ, թողեք երթանք, հետո կհանդիպինք, մի բան կենինք, մենք թասիբի մեռած մարդիկ ենք... շարժման ակտիվ տղեքից ենք էլե, բա եղա՞վ:

- Էդ թե՞ված էրեսներով մեզ չնայեք... Սկզբից մենք էլ ենք կռվել: Կարո՞ղ ա, էրեկ եմ վառանյուկից իջե: Դուք հարի՛Ֆ էլ չեք, հավ եք, հա՛վ... ընենց շարժում արեցիք, որ մինչև հիմա մարդիկ իրանց Հայրենիքից փախնում են, սուտ կռվող-յախշվատ ըլնող տղեքին ձեր նմանները բերին վլաստի, բեսպրեդելնիկ են դառնե, բացի իրանցից բոլորին նստացնում են, ժողովրդին արիժնիկ են դարձրել, չե՞ն վախենում, վաղը գալու են, հո չմեռան լավ տղեքը, ատչոտ են ուզելու: Էդ մենք հո գիտենք, ում համար էր էդ շարժումը, աչքներիս լուսը չեք, ուզենանք, տղեքով շանստակ կանենք ձեզ: Բայց տեսա՞ք, ձեր խաթրին ոչ ոք չկպավ: Իմ շունը տանող շուն էր, Տիկոյի շունը մի ամիս է լումկի մեջ է, մինչև Տիկոյին համոզել ենք..., էսօր մենք ընկանք թավանի տակ: Զյասար, պտի փակվեք:

Վլեն ամբողջ խոսակցության ժամանակ ձեռքից ատրճանակը չզցեց: Մեկ Նշանի վրա էր պահում, մեկ էլ Երջոյի: Նշանը չկարողացավ տանել Վլեի եւ Չեղածի նսեմացումները, գայրույթը իր մեջ մահացնելով՝ ճարահատյալ համաձայնվեց:

- Մեզ օր տվեք, մի 10 օրից կփակվենք, մենակ թող մարդ չիմանա, բացի մեզանից, ես կլուծեմ էդ հարցը, մենակ թողեք գնանք, մեզ են սպասում, ամոթ է, ոնց ուզում եք, ըտենց էլ կըլնի:

- Վլե ջան, քեզ ձեռ տալի՞ս է 10 օրից խաչմերուկի վետերուկում ժամը վեցին:

- Հինգ օր էլ ես եմ ավելացնում, ամսի 25-ին ժամը վեցին, դե

գնացեք:

Նշանն ու Երջոն քայլերն ուղղեցին դեպի սենյակի դուռը:

- Նայեք, - ավելացրեց Չեղածը, - հանգարծ Խաչատուր Արույան չդառնաք, ձեզ ման գանք:

Նշանն ու Երջոն դուրս եկան սենյակից:

- Ախպեր, ցինգ էր, - Չեղածը շունչ քաշելով սստեց բազմոցին: Նա երանության մեջ էր:

- Արա, դու Տիկոյի՞ն չես տեսել:

- Տերեկը գնացի տունը չէր, որ իմացա ըտեսց բան է եղել, ասի ցինգ անեմ, կանցնի-կանցնի, չի անցնի, ի՞նչ ունենք կորցնելու, Վլե ջան: Ու ձեռքերի մատներով սեղանին կտտացնելով սկսում է երգել. «Թագավոր լինելո՛ւց լավ բան, կեր, խմի, քեֆ արա՛, Վլե ջան»:

- Արա իսկականից դու չեղած տեղից բան սարքող ես: Չակո, արի մի հատ պռոշտի ըլնենք:

Շունը երկու թաթերը դնում է Վլեի կրծքին: Վլեն փաթաթվում է սիրած շանը եւ սրտանց համբուրում: Չեղածը պարելով վեր է թռնում տեղից, միացնում մագնիտաֆոնը եւ Արամ Ասատրյանի երգի տակ երկուսով շան թաթերից բռնած հայկական շուրջ պար են պարում: Շունը, հավատացեք, Վլեից ու Չեղածից ավելի լավ է պարում ու մեկ-մեկ ցածր հաչոցով մասնակցում երգին: Բակում, երբ արդեն Նշանն ու Երջոն ուզում էին մեքենա սստել Վլեի պապը ձեռքը դնելով նրանց ուսին, ասաց. «Բալա ջան, դուք լավ պրծաք, իրա հերն ու մերը իրա դարդից են աշխարհ գնացին»:

Վիլիս մեքենան փողոցի խաչմերուկում հանդիպեց Ջիպ մակկի-շի մեքենային, որն արգելակելուց քիչ էր մնում կպներ Վիլիսին:

- Ես քնձռոտները որտեղի՞ց, ախպեր, չհասկացա: Արա կաշկեղ բրդեմ մի կողմի վրա:

Նշանը մի կերպ գործի գցեց Վիլիսը՝ չպատասխանելով Ջիպի վարորդին: Վիլիսի շարժվելուց հետո Ջիպը արագություն վերցրեց ու կանգնեց Վլեենց տան դիմաց եւ միացրեց մեքենայի վրայի կովի ձայն հանող բոլոր սարքերը: Բացվեց Վլեի տան դուռը: Վլեն ու Չեղածը լակեյի շարժումներ անելով մոտեցան Ջիպին: Ջիպի դեկին ժոժոն էր, թաղի հեղինակություն ունեցող տղեն, իսկ կողքին նստած էր մի պաշտոնավոր, որին Վլեն ու Չեղածը տեսնելով, գինվորական պատիվ տալով բարեւեցին՝ վա՛յ բարեւ Ձեզ ընկեր Մարտիրոսյան:

- Ընկեր Մարտիրոսյանին լա՞վ եք ճանաչում, - հրամայական

տոնով խոսեց ժոժոն, - Մարտիրոսյանի ախպերը պտի դեպուտատ դառնա, մեր մայլեքի ձայն հավաքելը ձեր վրա:

- Հարց չկա, ժոժո ջան, որ ասում ես ...

- Վերելից լափ դաբռն կա, էն ասածիս, - ժոժոն աչքով է անում Վլեին, - գործերը ջրեք:

- ժոժո ջան կարա՞մ քեզ առանձին մի բան ասեմ:

ժոժոն դուրս է գալիս մեքենայից, անցնում է մեքենայի հետեւը, որպեսզի Մարտիրոսյանը չլսի:

- ժոժո ջան, բա Ծպլի ախպերը չի՞ անցնելու:

- Ծպլը ֆուֆլություն անելով ուզում է ախպերը անցնի, պլատիտ չի ըլնում: Մարտիրոսյանը համ տվող է, համ էլ փողոցները ասֆալտ կանի: Վաղվանից Ծպլի ախպոր նկարները պոկեք, Մարտիրոսյանի ախպոր նկարները ասեք տղերքին թող իրանց օբյեկտներում կայցեն, փողի հարցով, իրիկունը կգամ կխոսանք:

Ճանապարհին Նշանը Երջոյից մի հատ ծխախոտ խնդրեց:

- Նշան ջան, ըդոր համար մի ծխի, ինֆակտ տարած մարդ ես, ըդոնք փոքրոզի մարդիկ են, ըդոնց շունը իրանցից խելոք է:

Արցունքները եւ ծխախոտի ծուխը շնչահեղձ էին անում Նշանին:

- Ես հորս կովը կծախեմ, կբերեմ 500 դոլարը կտամ, մենակ տղերքին չասես, թող ոչ ոք չիմանա ես խայտառակությունը:

Երջոն Նշանի ձեռից վերցնում է ծխախոտը:

- Քեզ չի սագում ծխել, Նշան ջան, մի բան կուզեմ քեզիզ ըսեմ, համա վախենամ գը, կարողա ըդոր անե՞ծքն էր:

- Չգիտեմ, կարողա, բայց ես մի բան իմացա, որ ես աշխարհում սուտն ու սուրբը նույն բանն է, իմ ու քո նման մարդիկ իրար հարգում են մեկ ահից, մեկ էլ շահից, Երջո՛, Երջանի՛կ ...

Արցունքները լցվել էին Նշանի կոկորդը: Այդ բուժիչ խոսքերը պոռթկում էին նրա հոգուց, որը միգուցե տեսանելի է Աստծո կողմից բոլոր մոլորյալների համար:

Մղձավանջներ, որ աշխարհի պատկերն են

Կալանատանը արտախցային բանավոր ու գրավոր հաղորդակցության բոլոր միջոցները արգելված են՝ կալանվածների միջանցքային հաղորդակցությունը հետապնդվում է, քննչական մեկուսարանում Սահմանադրությամբ անմեղ համարվող անձը երկարատեւ մեկուսացված է ոչ միայն ազատության մեջ գտնվողներից, այլև քննչական մեկուսարանի իր բախտակիցներից ... Անազատության մեջ հայտնվածների այս, իբր, «օրինավոր անհաղորդությունը» ոչ միայն հակաբնական է, այլև հակառակ՝ մարդու սահմանադրական իրավունքներին ու հիմնարար ազատություններին եւ արդարադատության իրականացմանը չի ծառայում...

...«Ինչու՞ եք ինձ զրկել ազատությունից, ինձ հետ ձեզ ազատ չե՞ք զգում: Բա չե՞ք վախենում, որ բանաստեղծություն կգրեմ», - կալանքի մեջ, բանաստեղծական հարցադրում է անում բժիշկ Վահան Յարությունյանը, որ հիմա արդեն ազատության մեջ է: Հասարակությունը, եթե առաջադիմող է ու ապագա ունի, պարտավոր է պատասխան պահանջել բոլոր նրանցից, ում հակաիրավական գործողությունների արդյունքում բժիշկ-բանաստեղծ անմեղ անձը մեկ տարի ութ ամիս գտնվեց կալանավայրում...

Երբեք այդքան նամակ չեմ ստացել ու չեմ գրել, այդքան «քսիֆ» չեմ ստացել ու պատասխանել, որքան իմ կալանքի 800 օրում: Այս գրքով կարելորել է նաեւ իմ կալանքի ընթացքում պահպանված վավերագրությունը ու խնդրեմ՝ հարգելի ընթերցող, քո սեղանին է կալանքի իմ բախտակիցների այս չափածո ժողովածուն... Ամիսների հեռվից, արդեն որպես տպագիր ժողովածուի էջեր նորից ընթերցում եմ դրանք ու... Վահան Յարությունյանի ապրումն ունեմ.

«Որեւէ հնարք, որ խուզարկողը առգրավեր իմ ուղեղից բոլոր մղձավանջերը, քնելուց առաջ, քնած ժամանակ մղձավանջերը, որոնք հենց նույն աշխարհի պատկերն են կազմում»:

Ինչպե՞ս ազատվեմ ինձ նորից այցելած բանտային մղձավանջներից... Չէ՞ որ բանաստեղծությունը բանաստեղծություն, բայց դրանց հեղինակները՝ բոլորը, մինչեւ կալանքը ինձ անծանոթ ու նեղության մեջ ինձ հարազատ դարձած մարդիկ, համատեղ ապրած զրկանքներով, իմս դարձած իրենց ճակատագրերով... Իսկ նրանցից շատերը շարունակում են գտնվել անազատության մեջ՝ անարդարացի ու դաժան...

Ու կանչում են, ձայնում ինձ: Իմ ականջին նորից կյանքի հատակ նետված, Սերգեյի աղիողորմ ճիչն է դատարանում՝ իր մանկահասակ աղջնակի ու անզոր մոր առաջ, ճիչ, որն ասի բանաստեղծության ձեւ է առնում՝ «Աչք են դրել ոսկուն, փողին: Կուզեն մեզնով հարստանան: Բայց ինչ անենք աղքատներս: Աստված գիտի ու մենք գիտենք»:

Գյումրեցի զինծառայող Արմեն Մուրադյանի շփոթված ու ինձ, որպես միակ փրկչի, ուղղված հայացքն է հառում. «Մտածում եմ ինչ անեմ, ո՞նց եղ դատից ազատվեմ: Իրոք չկա ճշտություն, եթե լիներ ճշտություն, կլիներ նաեւ փրկություն»: Փիլիսոփայությունը՝ փիլիսոփայություն՝ սովորական թե՛ զարմացնող, ի՞նչ սպեղանի է այս ժողովածուն Արմենի ցավին, երբ նա անիրավ, բողոքարկման համար անենթակա դատավճռով ինը տարի ժամանակով ազատագրկվել է...

«Այնպես կուզեի հավերժ քնով ես քուն մտնեի քո գրկում եւ չարթնանայի կյանքում երբեք, որ չտեսնեի մղձավանջները այս կյանքի»... Ի՞նչ են ասում քեզ, ընթերցող, Գորիսի բերդից տրանզիտկայով Սեւանի գաղութի ճանապարհին, քննչական մեկուսարանի 36 խցում հանգրվանած Մանվելի այս տողերը... Իսկ ինձ նորից համակել են առողջությունը բանտում կորցրած երիտասարդի մղձավանջները. Ինչպե՞ս օգնենք բանաստեղծփիլիսոփային, որ իր արժանապատվությունը պաշտպանելու համար թողել էր սուրճ խմելն ու ծխելը («անընդհատ հո չես մուրա»), որ Գորիսի բանտի մենության մեջ կուտակել էր այնքան խոհ, որ Մանվելի գրուցակից Աշոտ Բլեյան, միայն գրիչ ու տետր հասցրու ... Իմ կնոջից ու եղբորից ես շարունակ պահանջում էի թուղթ, գրիչ, նաեւ հրահրում-նպաստում, որ դժբախտության մեջ, անհուսության պահին կալանվածը հանձնվի մաքուր թղթի ու արտահայտվի, որ այդպես հայտնաբերի ինձ՝ որպես բախտակից ընկեր, որ մենակ չմնա ինչպես Սարգիս Շահմուրադյանն է իր բանաստեղծությունում ասում, «անաստված դատարանի թե՛ մեղավորության կանխավարկածի» առաջ... Ահա այսպիսի պահի ես բացահայտեցի ինձ համար 57 խցի Գոռիկի Էության երկվությունը՝ առերեսույթ անհոգ, իսկ բանաստեղծելիս ...«Ներկան կալանք է, ապագան անհայտ»: Իմ դավանած լիարժեք ու բնական հաղորդակցության մանկավարժությունը օգտակար եղավ նաեւ Սովետաշենի բերդում, որ հնարավոր դարձրեց անզամ ինքնամփոփ ու լռակյաց, 15 տարի ազատագրկման դատապարտված Ստեփանակերտցի ապա Զրայրի հետ հուզիչ ու երկարատեւ նամակագրությունը: Նախածեռնեցի կալանատան ձեռագիր ամսագրի ստեղծումը,

«Գեղարվեստը կփրկի մեզ մենության անհուսությունից» մրցույթը... «Պրիզը շահած լինելու հույսը» ծնել է Ռոբերտ Թամոյան բանաստեղծությունների շարքը...

«Դատավոր, դատախազ, ամբաստանյալ եւ բոլորը հայ: Բերմուդյան եռանկյունի... Երեք քար ընկավ վերից՝ որպես դատավճիռ. մեկը՝ դատավորի, մեկը՝ դատախազի, մեկն էլ՝ ամբաստանյալի գլխին»:

Կօզնի՞ այս ժողովածուն հայ արդարադատությունում հաստատված Բերմուդյան եռանկյունին բացելու: Այս ժողովածուի քանի՞ ընթերցող «Տանիք» իրավապաշտպան հասարակական կազմակերպության կամ «Յետաքննող լրագրողների» ընկերակցության հետ անիրավ կալանվածների ազատության համար միասնական ճակատ կկազմի, կօզնի՞ ինձ համակած գոնե մեկ մղձավանջից ազատվելու:

Աշոտ Բլեյան



Փերման Ավագյան

մ տ ո ռ ու մ ն ե ռ ու ղ ղ ի չ տ ն ի ց

ԵՐԵՎԱՆԻ ՈՒՂՂԻՉ ՏՆԻՑ

Իրերի դժբախտ բերումով ես առիթ ունեցա մոտ վեց ամսվա ընթացքում բավականին ծանոթանալու Երեւանի Ուղղիչ Տան կյանքին, եւ այժմ ես ուզում եմ նկարագրել այդ հետաքրքիր վայրը, որը թեկուզ կա, գոյություն ունի եւ ապրում է մեր աչքի առաջ իր յուրօրինակ կյանքով, սակայն - ես համոզված կարող եմ ասել - ոչ միայն լայն մասսաները, այլեւ հասարակական կյանքով ապրող մահկանացուներիս գերազանց տոկոսը ոչ մի հասկացողություն չունի այդ աշխարհի մասին: Իմ ստացած տպավորությունները ես այժմ գրի եմ առնում «հիշողությամբ», որովհետեւ, դժբախտաբար, ժամանակին հնարավորություն չեմ ունեցել գրավոր «նյութեր հավաքելու», ինչպես այդ անում են հմուտ գրականագետները, երբ ընկնում են որեւէ արտասովոր աշխարհ: Անհրաժեշտ է ասել նաեւ, որ ես այստեղ պատմելու եմ միմիայն «տպավորություններ» եւ բնավ հավակնություն չունեմ զբաղվելու խորհրդային կյանքի այդ, ես կասեի՝ զարմանալի անկյան ուսումնասիրությամբ: Այս իմաստով իմ դիտողությունները կունենան անշուշտ բավականին սուբյեկտիվ բնույթ, սակայն ես մխիթարում եմ ինձ այն հույսով, որ դրանք զուրկ չեն լինի որոշ «մարդկային» հետաքրքրությունից: Բացի այս՝ իմ տպավորությունները ես գրի եմ առնում այժմ սեփական հաճույքի համար, քանի որ ինձ քաղցր տխրություն է պատում յուրաքանչյուր անգամ, երբ ես հիշում եմ Երեւանի Ուղղիչ Տունը եւ այն հասարակ մարդկանց, որոնք բավական ժամանակ ինձ ընկերներ եղան այդ թեկուզեւ զարմանալի ու յուրօրինակ, բայց այնուամենայնիվ փակ աշխարհում...

1927թ.

**XVIII ԴՐԱՄԱԽԱՂԸ ՈՒՂՂԻՉ ՏԱՆԸ, ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ
ԴԵՊԻ ՄԱՏՆԻՉՆԵՐԸ ԵՒ ԲԱՂԴԱՍԱՐԸ՝ ԻԲՐԵՒ ԼՅՈՒՄՊԵՆ
ԿԱԼԱՆԱՎՈՐՆԵՐԻ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍ ՈՒ ՏԵՍԱԲԱՆ**

Մի անգամ ցերեկը ես մտա մեր կամերան՝ տեսնեմ Բաղդասարը ծալապատիկ նստած է իր կոյկայի վրա, դեմն էլ ինձ անծանոթ մի թուրք կալանավոր՝ գար են գցում: Նախ մեկն էր գցում, հետո մյուսը: Խաղը կոչվում էր «բայթուրդ»:

Յետաքրքիր էր նրանց զար գցելու ձեւը: Չարը գցում էին մի փոքր ցած կռացած, հետո ետ շրջվում, բարձրաձայն տնքում ու աջ բռունցքը խփում կրծքներին, կամ բաց ձեռքը՝ ծնկներին: Ստացվում էր մի տեսակ շախսեյ-վախսեի տպավորություն:

Դրամ խաղալը խստիվ արգելվում էր Ուղղիչ Տանը, սակայն կալանավորները, գլխավորապես լյումպենները, խաղում էին գաղտնի: Ինչ միջոցների էլ վարչությունը դիմեր՝ անհնարին էր միանգամայն արմատախիլ անել այն: Հանրակեցության բոլոր օրենքները պարտադիր են բոլոր պայմաններում: Եթե ապրում ես մի կամերայում, որոշ հասարակության մեջ՝ ապա ուրեմն չպետք է դավաճանես նրանց տարրական շահերին: Մատնիչությունը մահացու մեղք է համարվում բոլոր կալանավորների մեջ անխտիր. նրանք ունեն իրենց չգրված բարոյական օրենքները - եւ վա՛յ նրանց, ովքեր կխախտեն այդ օրենքները: - Նրանք կդառնան կալանավորական հասարակության պարիանները, չանդալաները, եւ, ինչպես հնդկական Մանուն է ասել իր հռչակավոր օրենսգրքում, թե «չանդալան չպետք է խմե աղբյուրների ջրից» - այնպես էլ յուրաքանչյուր կալանավոր ձեզ կասի, որ «մատնիչը չպետք է նստի ա՛յն սեղանի շուրջը, ուր նստում են մյուսները, չպետք է ուտի ընկերական հացը եւ խմի ընկերական ջուրը»: Անխոս, առանց այլեւայլության, նա կենթարկվի բոլորի ատելությանը եւ արհամարհանքին, այնպես որ ինքն իր աչքին անգամ կդառնա, որպես շունը:

Կալանավորական բարոյականության այս նորմերը առանձնապես անխախտ էին պահվում լյումպենների շրջանում, քանի որ սրանք մի տեսակ «պրոֆեսիոնալ» կալանավորներ էին, որոնց համար կյանքի ու մահու ինդիք էր վարչության հետ ունեցած փոխհարաբերությունը: Սրանք առանձին կաստա էին, մի ինքնամփոփ կաստա, որ իրեն հակադրում էր վարչությանը, եւ ով ընկնում էր նրանց շրջանը՝ կա՛մ պիտի ենթարկվեր նրանց բարոյական նորմերին, կա՛մ հեռանար: Ծայրահեղ դեպքում նրանից պահանջվում էր խիստ «չեզոքություն» - այս իմաստով

Եր ահա որ Բաղդասարը մեր կամերայի թուրքերին համարում էր «անշառ մարդիկ»:

Հարկավոր է ասել սակայն, որ նույն այդ լյուժպենների շարքում կային մարդիկ, որ մի անգամ քաղաք գնալու համար իրենց բոլոր ընկերներին կծախեին: Վատն այստեղ այն էր, որ դրանք հայտնում էին վարչությանը իրենց ընկերների այս կամ այն անթույլատրելի արարքը ո՛չ թե քաղաքացիական գիտակցությունից դրդված, ելնելով բարոյական ուրիշ, ավելի բարձր նորմերից, այլ անձնական ամենամանր օգուտի համար, մի թաս «ոսպե ապուրի» ակնկալությամբ: Բայց վա՛յ նրանց, եթե նրանց արարքն իմացվեր: - Այդպիսիների թիվը սակայն այնքան էլ շատ չէր: Եթե անողներ էլ կային - անում էին գաղտնի այնպես որ չէր իմացվում:

Մտում էին հսկիչները: Նրանք էլ հո չէ՞ին կարող միեւնույն ժամանակ բոլոր կամերաներում լինել. հինգ կամերային մի հսկիչ կար միայն, որ շրջում էր միջանցքում, այնպես որ դրամ խաղացող կալանավորները, որոնք, ի միջի այլոց, այնքան էլ շատ չէին, այսպես թե այնպես, գտնում էին հնարավորություն՝ քիչ թե շատ խաղալու:

Երբ ես ներս մտա՝ խաղացողները կասկածոտ ինձ նայեցին. միայն այն, որ ես «ինտելիգենտ էի», արդեն կասկած էր ներշնչում: Սակայն ինձ ճանաչող կալանավորները վստահեցրին նրանց խիստ արտահայտիչ նշաններով ու հայացքներով - եւ խաղը շարունակվեց:

Քանի որ ես մտել էի նրանց շրջանը եւ ցանկություն ունեի շահելու նրանց վստահությունը՝ ինձ մտում էր առնվազն «չեզոքություն պահել» - եւ ես պահեցի:

Ընդամենը տաս րոպե տեւեց նրանց խաղը: Հետո թուրք կալանավորը վեր կացավ, ձեռքերը ծափ տալու նման իրար խփեց եւ հեռացավ: Հարցրի Բաղդասարին.

- Որքա՞ն տարար:

- Խաղացողին չէ՞ն հարցնի, թե որքան տարար. դա խոսք չի՛, - դաստիարակի տոնով պատասխանեց Բաղդասարը ու քաշվեց մի կողմ: Նա տարել էր եւ հուզված էր երեւում: Աչքերը փայլում էին, ռունգերը դողում: Շնչում էր ծանր ու ընդհատ:

Հետո ես շատ անգամ տեսա Բաղդասարին խաղալիս. տանելիս նա ավելի էր հուզվում, քան տարվելիս: Տարվելիս, օրվա որ ժամին էլ դա լիներ, հանում էր շորերը, մտնում անկողին, գլուխը ծածկում վերմակով ու քնում: Գուցե եւ չէր քնում, այլ տառապում էր անհանգիստ, ու ծածկում էր գլուխը, որ չնկատեն հուզմունքը: - Ո՛վ իմանա:

Մի անգամ երեկոյան, երբ ես վերցրել էի մի գիրք եւ ուզում էի կարդալ, - ութերորդ կամերան տեղափոխվելուս երրորդ թե չորրորդ օրն էր, - հանկարծ ինձ մոտեցավ Բաղդասարը:

- Ընկե՛ր Չարյանց, եկեք խելք մրցենք:

- Ո՞նց թե «խելք մրցենք». ո՞նց մրցենք, Բաղդասա՛ր:

- Ա՛յ, ձեզ ասեմ: Ուզո՞ւմ եք՝ հետաքրքիր հանելուկներով:

- Լա՛վ, տո՛ւր:

Նա ասաց մի քանի հանելուկներ, որոնցից ոչ մեկը ես չկարողացա գուշակել: Նա խիստ գոհ, համարյա արհամարհանքով, սեփական գերազանցության խոր գիտակցությամբ ժպտաց եւ գնաց իր տեղը: Ես պարտված էի եւ գիտեի, թե դա ինչ է նշանակում նրանց շրջանում: Ինչ գնով էլ լիներ հարկավոր էր փրկել համարումս: Ուստի ես մոտ կանչեցի նրան եւ առաջարկեցի, որ լուծի մի հասարակ երկրաչափական խնդիր: Նա իսկի չուզեց էլ մտածել:

- Դա ի՞նչ բան է, որ դրա վրա մարդ մտածի ... Դա սովորելու բան է. ով սովորել է - կարող է... Դուք էնպես բան ասեք, որ խելքի բան լինի եւ ոչ թե սովորելու: Այ, օրինակ ասեմ՝ *железо, пузо...*

Կարո՞ղ եք ռուսերեն մի բառ էլ գտնեք, որ «зо»-ով վերջանա...

Ձեզ երեք ամիս ժամանակ:

Մտածեցինք թե՛ ես, թե՛ Եփրեմը, թե՛ Բենժամենը: Չգտանք ... Բաղդասարը, գոհ, գնաց պառկեց իր տեղը, միանգամայն համոզված, որ հողին հավասարեցրեց մեզ՝ ինտելիգենտներին: Ու տեղից մեզ ասաց.

- Ձեր այդ կարդացած ու գրած գրքերը հենց մի կոպեկի էլ որ տաք՝ չե՛մ գնի ... Դուք խե՛լք ասեք:

Պարզ էր, Բաղդասարին հարկավոր էր իր գեներով խորտակել: Հարկավոր էր գտնել մի այնպիսի հանելուկ, որ նա չկարողանար գուշակել,- բայց ո՞ր տեղից գտնեինք մի այդպիսի հանելուկ:

Տարօրինակ ամբողջական տիպ էր Բաղդասարը եւ իր տեսակում՝ կատարյալ: Հզոր մկաններ ուներ եւ շատ էր պարծենում դրանցով: Կյանքի մեջ դրանք նրա միակ գեներն էին եղել գոյության պայքարում, եւ նա, դրանց վրա հենվելով՝ ստեղծել էր իր սեփական գերազանցության տեսությունը: Հպարտ էր, որ դեռ ոչ մի կալանավոր չէր համարձակվել դիպչել իրեն եւ համոզված էր, որ ինչ շրջան էլ ընկնի՝ դրանցով կնվաճի իր տեղը: Այս դեռ մենք, իբրեւ ինտելիգենտներ, որ ա՛յլ պատկերացում ունեինք կյանքի ու պայքարի մասին, կարող էինք ներել: Սակայն նա բնագործ հասկանում էր, որ մենք կարող ենք այլ գեներով պարծենալ ու մրցել - եւ ահա նա այստեղ էլ ամեն կերպ ձգ-

տում էր ապացուցել իր գերազանցությունը՝ միանգամայն անկեղծ համոզված, որ կյանքում, որը նրա համար սոսկ կենդանական պայքար էր եղել, ոչինչ չի կարող տրված լինել մարդկանց, որոնք զուրկ են մետաղյա մկաններից ու երկաթյա բռունցքներից: Այս վերջիններս էին Բաղդասարի աչքին Homo Sapiens տեսակի գլխավոր հատկանիշները ...

Եւ երբ մենք, ինտելիգենտներս, նրան մի անգամ ասացինք, թե այն կյանքում, որով մենք ենք ապրում, շատ քիչ նշանակություն ունեն բռունցքներն ու մկանները - նա համոզված պատասխանեց.

- Գիտե՞ք ինչ. ես ձեզ կասեմ հետեւյալը... նույնիսկ էն շրջանում, որտեղ դուք եք ապրում - դուք չեք կարող լինել առաջինները ... իսկ ես իմ շրջանում՝ կլինեմ:

- Ինչո՞ւ, Բաղդասար:

- Որովհետեւ, - ասաց նա կուրծքն ուռեցնելով եւ մկանները լարելով,- որովհետեւ բռունցքներ չունեք:

Ձեկ Լոնդոնի հերոսներից էր Բաղդասարը: Այնասկայում իր ժամանակին նա կարող էր լավ «ոսկի որոնող» լինել, վերածնության շրջանում՝ կոնկվիստադոր, կամ կոնդոտյեր ... Իսկ հիմա ... հիմա մեր աշխարհում Բաղդասարը շատ-շատ կարող էր լլումպենների տեսաբան լինել, քաղաքի «մութ անկյունների» եւ Ուղղիչ Տների մեկուսացման կամերաների հերոս: Որովհետեւ՝ չնայած կամքին, որոշ խելքին եւ հզոր մկաններին՝ մանկական էր նրա հոգեբանությունը եւ տարրական էր նրա այն միակ զենքը, որ նա ուներ բանեցնելու գոյության պայքարում:

- Լսո՞ւմ ես, Բաղդասար,- այն աշխարհում, ուր մենք ենք ապրում ու պայքարում, ո՛չ մի նշանակություն չունի առանձին անհատի մարմնական ուժը. ա՛յլ օրենքներ կան այստեղ եւ պայքարի ավելի անշոշափելի ու նուրբ զենքեր, որոնք սակայն շատ ավելի են մահացու ու հատու, քան քո մետաղյա մկանները եւ բրոնզյա բռունցքները...

Այսպե՛ս է, սիրելի՛ Բաղդասար:

Մի անգամ կամերայում նստած ես միտք էի անում, թե ի՞նչ է լինելու իմ քաղաքացիական դրությունը, երբ ես դուրս գամ Ուղղիչ Տնից. յուրաքանչյուր հիմնարկության հետ գործ ունենալիս պետք է հայտնե՞մ արդյոք, թե կալանավոր եմ եղել. դա պարտադիր է արդյոք, թե ոչ: Մոտեցավ Բաղդասարը: Յետաքրքրվեցի իմանալ նրա կարծիքը, բայց ոչ թե ուղղակի հարցով, այլ կողմնակի ճանապարհով:

- Բաղդասար,- ասի ես միամտաբար,- որ դուրս գաս այստեղից՝ ինչո՞վ ես զբաղվելու:

Չարմացած նայեց երեսիս եւ ժպտաց ներողամտաբար, ինչպես մեծերն են ժպտում երեխաների միամիտ հարցերին:

- Ինչո՞ւ եք հարցնում:

- Հենց այնպես...

Ու գգացի, որ սխալ է մոտեցումս: Ուզեցի շտկել սխալս, բայց, ինչպես ասում են, հոնքը շինելու փոխարեն աչքն էլ հանեցի: Հարցրի պարզապես.

- Եթե, ազատվելուց հետո, գործ ունենալու լինես որեւէ հիմնարկության հետ՝ պիտի հայտնե՞ս, որ կալանավոր ես եղել:

Նա ավելի եւս զարմացած, համարյա ապշած, երկար նայեց երեսիս, գննող հայացքով տնտղեց դեմքս, ժպտաց ու կամացուկ ասաց.

- Լրտես հո չե՞ք...

Թեկուզ գիտեի կալանավորների, մասնավորապես Բաղդասարի, ծայր աստիճանի կասկածոտ լինելը՝ այնուամենայնիվ նրա այդ խոսքերը ծայր աստիճանի ծանր տպավորություն թողին իմ վրա:

- Չե՞ս ամաչում, Բաղդասար՝, - ասի ես Բաղդասարին, - պատվաբեր չի տղամարդուն այդքան կասկածոտ լինելը:

- Ո՞նց չլինեմ, ընկե՛ր Չարյանց, - առանց զղջալու պատասխանեց Բաղդասարը. - կյանքումս հենց ո՛ւմ որ հավատացել եմ՝ զղջացել եմ... Մա՛րդ էլ մարդու հավտա... Հարազատ հո՛րս չեմ հավատա, էլ ո՛ր մնաց ընկերոջս... Հենց ո՛վ ուզում է լինի:

Իր ապրած կենդանական կյանքի դառն փորձն էր խոսում Բաղդասարի շրթունքներով - եւ նրան դժվար էր հակառակը համոզել: Ես այդտեղ նկատեցի մի հետաքրքիր գիծ եւս նրա հոգեբանության մեջ, որ ընդհանրապես հատուկ էր բոլոր կալանավորներին, իսկ, իհարկե, գերազանց չափերով՝ յուրմայեններին: Նրանք չէին հասկանում զուտ տեսական, սկզբունքային հետաքրքրությունը որեւէ հարցով: Մի բան, որ բխում էր, իհարկե, նույն կասկածամտությունից: Հեռավոր աստղերի մասին էլ հարցնելու լինեիր նրանց, նրանք կաշխատեին դրա ետեւը թաքցրած որեւէ գործնական, կոնկրետ նպատակի հետապնդում տեսնել, մի նպատակի, որը կարող է օգուտ տալ նրանց, կամ վնասել: Լինեին կարծես որսորդական շներով շրջապատված գազաներ, որ յուրաքանչյուր կողմից սպասում են վտանգի: Եւ այս տեսակետից էլ ամենաարտահայտված տիպը - Բաղդասարն էր:

Այդ օրը, երբ Բաղդասարը ցույց տվեց դեպի ինձ այդքան կասկածոտ վերաբերմունք՝ ես որոշեցի «վրեժխնդիր» լինել - իհարկե, փորձելու համար նրա բնավորության մի այն կողմը՝ ինք-

նասիրությունը: Այդ նպատակով ես որոշեցի դիպչել նրա ամենանուրբ տեղին՝ «տղամարդ», «քաջ» մարդ լինելու համարումին:

Երեկոյան ժամը տասնմեկին կամ տասներկուսին, երբ բոլորն արդեն պառկել էին տեղերում եւ պատրաստվում էին քնելու - ես հանկարծ ասացի Բաղդասարին՝ բարձրաձայն, որպեսզի լսի ամբողջ կամերան.

- Բաղդասար, ա՛յ, դու ամենաքաջ մարդն ես համարում քեզ ամբողջ Ուղղիչ Տանը, այնինչ այսօր մի քանիսն ինձ ասացին, որ քեզանից վախկոտն ամբողջ Ուղղիչ Տանը չկա... Որ դու հերոս ես միայն ռեցիդիվիստ լակոտների շրջանում...

Այսպիսի մի միտք մի քանի օր առաջ ճիշտ որ ինձ հայտնել էին լենինականցի կալանավորները, որոնք առհասարակ, որպես տոհմային լենինականցիներ՝ տառապում էին պարծենկոտությամբ, - բայց նրանց չէի հավատում: Իսկ Բաղդասարին ես այդ հայտնեցի վերացական ձեւով, իբր «ոմանց» կարծիք՝ նախ՝ մի փոքր նրան «խոցելու» եւ ապա՝ նրա վերաբերմունքն իմանալու համար: Եւ ես ափսոսացի ու զղջացի, որ արի այդ փորձը... Իժի կծածի նման վեր թռավ իր տեղից, հենց որ իմ ասածի իմաստն ըմբռնեց, Բաղդասարը, եւ ամենից առաջ, որպես նախերգանք՝ մի հիսուն հարկանոց հայիոյանք ուղարկեց ասողների հասցեին: Աչքերը ոխով լցվեցին, թույնով ու անհանգստությամբ:

- Ո՞վ է ասում, - հարցրեց խռպոտ ձայնով, - ե՛ս նրանց - եւ այլն, եւ այլն: Չէ՛, մի դուք ասեք, ընկե՛ր Չարյանց, թե ո՞վ է եղ ասել, որ նրա՛ հետ ես խոսեմ, եւ ո՛չ թե ձեզ...

Ու դարձավ կամերային.

- Ո՞ր մեկի տակին է մինչեւ օրս պառկել Բաղդասարը. ո՞ւմ ճանապարհից մի կողմ քաշվել, որպեսզի նա անցնի... Ո՞ւմ առաջ է խեղճացել կամ ստորացել... Էն ո՞ր կալանավորն է, որ մի փոքր դիպել է Բաղդասարին ու պատասխան չի ստացել... Չէ՛, մի ասե՛ք, ընկե՛ր Չարյանց, թե ո՞վ է եղ ասող լածիրակը... Եւ հանկարծ բարկացավ ինձ վրա.

- Գիտե՞ք ինչ, ընկե՛ր Չարյանց, եղ խոսքը հե՛ջ ասելու խոսք չէր, որ դուք ինձ ասիք... Իսկի՛ տղամարդու խոսք չէր եղ խոսքը:

- Ես իմ խոսքը չեմ ասում, Բաղդասար, ուրիշներինն եմ ասում:

- Եղ ուրիշները թող գան ի՛նձ ասեն, ինչո՞ւ են ձեզ ասում: Թող Բաղդասարին ասեն, որ իմանան պատասխանը... Իսկի՛ տղամարդու բան չի ուրիշի կռնակին բամբասելը...

- Ինչո՞ւ բամբասել, - ավելի տաքացրի ես նրան. - մարդիկ մասնավոր խոսակցության ժամանակ իրենց կարծիքն են հայտնել:

Չունե՞ն իրավունք:

Բաղդասարը խեղդվում էր բարկությունից, ուտում իրեն: Կատաղությունից քաշեց՝ քիչ մնաց ճղեր իր շապիկը: Հետո հանկարծ իբրեւ թե խեղճացավ, բայց էապես փոխեց իր գործելակերպը:

- Լա՛վ, ընկե՛ր Չարյանց,- Էն վերջին, հետին կալանավորից էլ հետին է Բաղդասարը: - Էն Ազա՛տն էլ (այսինքն մեր կամերան մաքրողը, նախկին որբը) - ասլան է Բաղդասարից ... Ուզո՛ւմ եք՝ կռանամ, թող Ազատը խփի...

Մի-երկու վայրկյան պառնկեց, գլուխը ծածկեց վերմակով, իբրեւ վերջացած է համարում գրույցը, սակայն չհամբերեց, կրկին նստեղ անկողնում: Կրկին ինձ դիմեց, բայց այնպես, որ լսեն բոլորը.

- Գիտե՞ք ինչ, ընկե՛ր Չարյանց. Ուղղիչ Տունը քաջության տեղ չի. Էստեղ քաջության տեղ չի՛: Ի՞նչ է, ուզում էիք, որ Բաղդասարն Էստեղ փահլվանությո՞ւն աներ, դրչի՞ խաղար, որ քաջ մարդ դառնար ձեր աչքին...

- Ես ոչինչ չեմ ուզում, Բաղդասա՛ր, հանգստացի՛ր:

Ուշադրություն չդարձրեց խոսքիս, շարունակեց.

- Տղամարդը սարումը ցույց կտա իր քաջությունը, կամ քուչումը ... Էստեղ մարդիկ կտեսնեք, գյուղացիներ՝ խեղճից էլ խեղճ ... Էնպե՛ս սեֆիլ՝ գառից էլ գառը... Էդ մեր Ազատն էլ որ խփի՝ ձայն չեն հանի: Բայց հապա մի դրանց սարում ռաստ եկեք ... Ինձ պես տասին կուտեն ու անուս էլ չեն հարցնի՝ Բաղդասա՞ր է, թե Կարապետ... Գնացե՛ք Էդ ձեր ասողներին ասեք, որ խեղճից էլ խեղճ է Բաղդասարը, Բաղդասարը հե՛ջ: - Իսկի՛ ասելու խոսք չէր Էդ ձեր ասած խոսքը, ընկե՛ր Չարյանց, իսկի՛ ասելու խոսք չէր...

Եւ այսպես՝ համարյա մինչեւ լույս բորբոքվեց ու անհանգստացավ այդ գիշեր Բաղդասարը, իսկ երբ քնեց՝ քնի մեջ անգամ անհանգիստ շուռումուռ էր գալիս, ոտները դուրս հանում վերմակից, շրթունքները շարժում...

Առհասարակ հանգիստ բնավորություն ուներ՝ աշխատում էր պահել իրեն, որպես Ուղղիչ Տան ոլիմպացի: Հաճույքով հովանավորում էր Նորեկ ռեցիդիվիստներին՝ եթե իր հովանավորությանն էին դիմում: Առհասարակ պահում էր իրեն, որպես լյումպենական պարագլուխ, ժիգանային ղեկավար: Եւ պարզ էր, որ խոր էր իմ խոսքերով հասցրած վերքը. այդ խոսքերից հետո Բաղդասարը շուտ չէր կարող հանգստանալ:

Եւ ես այդ գիշեր համոզվեցի, որ եթե նախկին բանտերում լիներ՝ Բաղդասարը կա՛մ կխեղդեր ինձ տեղնուտեղը կամ կիմանար իրեն գրպարտողների անունները: Սակայն նա լավ էր

հասկանում, որ ո՛չ Ուղղիչ Տունն է նախկին բանտը, ոչ էլ ես՝ նրանից վախեցողը: Ուղղիչ Տունը նպաստավոր վայր չէր ժիգանական հերոսությունների ու սիրագործությունների համար, յուրաքանչյուր այդպիսի փորձ կարող էր նետել հերոսին մի հեռու մեկուսարան, ուր ո՛չ Ուղղիչ Տան քնքուշ ռեժիմը կլիներ, ո՛չ էլ վարչության ավելի քան քնքուշ վերաբերմունքը: Մեզ մոտ ոչ միայն խստիվ արգելված էր մարմնական պատիժը, այլև հասարակ հայիոյանքի համար կարող էր դուրս թռչել պաշտոնից վարչության որեւէ ներկայացուցիչ: Էլ ես չեմ խոսում մշտապես բաց կամերաների, քաղաք գնալու հնարավորության, արձակուրդների եւ այլ սքանչելի բաների մասին, որոնցից կարող էր լիովին օգտվել յուրաքանչյուր կալանավոր: Բաղդասարն այդ բանն ինձանից լավ էր հասկանում եւ ամեն կերպ աշխատում էր զսպել իր ժիգանական բնագղները:

Վերջին ժամանակներում իրեն միանգամայն հանգիստ էր պահում Բաղդասարը եւ ամեն կերպ աշխատում էր ուղղված կալանավոր երեւալ: Ուզում էր նույնիսկ վերելի կամերաներից իջնել ներքեւ, ուր տեղավորված էին մեծ մասամբ աշխատավոր, պատահական, ոչ «պրոֆեսիոնալ» կալանավորները: Անգամ խնդրում էր, որ իրեն գործ տան կուլտրաժնում, բայց երբ առաջարկեցին մի տեխնիկական գործ՝ հրաժարվեց: Այստեղ էլ, ինչպես «բռունցքային» գործերում, ուզում էր եթե ոչ առաջինը, գոնե վերջինը եւս չլինել:

Այսպես էր Բաղդասարը:

Ուղղիչ Տնից դուրս գալուց հետո ես տեղեկացա որ նա, այնուամենայնիվ, ինչ որ հանցանքի համար ուղարկվել է մեկուսարան: Նայես ի՞նչ է անում հիմա, ի՞նչ ժիգանական սիրագործություններ, Նոր-Բայազեդի մեկուսարանում Բաղդասարը ...

Ինչպես այս գլուխը, այնպես էլ ընդհանրապես Բաղդասարի մասին գրելիս, միշտ ծակում է ուղեղս այն միտքը, թե ինչ պիտի մտածի Բաղդասարը՝ իր մասին գրածներս կարդալիս: Երեւի նրա մեջ պիտի ամրանա այն համոզմունքը, թե ես «լրտես» եմ եղել եւ այժմ էլ մատնում եմ իրեն հրապարակորեն... Ու է՛լ ավելի պիտի ամրանա Բաղդասարի սրտում առանց այդ էլ չափազանց խոր նստած անվստահությունը դեպի ինտելիգենտները ...

Լսո՞ւմ ես, սիրելի՛ Բաղդասար.- իզո՛ւր ես կասկածում: Քո մասին իմ տպավորությունների գրքում արված այս գրույցները տեսական գրույցներ են միայն, ուրիշ ոչինչ: Եւ միանգամայն վստահ եղիր, որ սրանից չի գա քեզ եւ ո՛չ մի վնաս:

Ազնի՛վ խոսք, Բաղդասար՛:

ՄՈԳԱԿԱՆ ՇՐՋԱՆ

- Չոպար, եղ ճի՞շտ ա, որ դուրսը սով ա,- հարցրեց ամրակազմ երիտասարդը՝ ազահորեն կրծոտելով տապակած հավի ոտքը: Տասնմեկ բանտարկյալներից մեկը թե.

- Բարի տեսանք, Նստի, հաց կե մեր հետ:

Ընթրիքի ժամ էր: Նստելով սեղանի մոտ՝ սկսեցի պատասխանել Ախպերության հարցերին:

«Բերդի» բոլոր խցերը գրեթե միանման են, միաչափ՝ քսան-հինգ քառ. մետր մակերեսով եւ երեք մետր բարձրությամբ, երկու կողմերում՝ զինվորական երկհարկանիկների նմանությամբ պատին ու հատակին ամրացված մահճակներ՝ տասներկու մարդու համար: Դռան մոտ՝ զուգարանը լվացարանով, մասամբ առանձնացված պատով, որը մինչեւ առաստաղ լրացված է բրեզենտով կամ քաթանով: Բանտախցի կենտրոնում մեխված երկար սեղան է, երկու կողմերում՝ իշոտնուկ Նստարաններ: Մի անկյունում հարմարեցված է գունավոր հեռուստացույցը: Ինչպես խցի, այնպես էլ ամբողջ բանտի խորհրդանիշը երկաթե վանդակաճաղով պատուհանն է, որն այստեղ կրճատ կոչվում է ռեշ:

Բանտարկյալների հետ ծանոթությունն սկսվում է աստիճանաբար՝ Նախ սեփական «գործը» ներկայացնելով, հետո, առանց ձանձրացնելու, հարցուփորձ է արվում մյուսների մասին: Չատուկ շեշտվում է սեփական «գործի» անարդարացիությունը եւ անսքող ըմբռնում ու կարեկցանք դրսեւորվում խցակիցների բախտի նկատմամբ:

Անորոշ բանտախցում բոլորն էլ անփորձ Նորեկներ էին՝ հսկիչի «առաջին փոր» ժարգնով: Մի քանի անհամբերներ փութացին դատարկել սրտները, մանավանդ որ «թարմ ականջ» էր հայտնվել: Պատեհ առիթ՝ մարզվելու առաջիկա դատավարության եւ հանդիպումների համար, որոնք սպասվում են քննիչների, դատախազի, դատավորի, վերջնարդյունքում՝ ճակատագրի հետ: Նման վարքը հոգեբանորեն բացատրելի է. որքան շատ են այդպիսի զրույցները, այնքան ինքնավստահ ես դառնում: Իրավաբանական աննշան սողանցքներ գտնելով քո

«գործում»՝ կարող ես եականորեն փոխել նախաքննության ու դատավարության ընթացքը: Երբեմն այդպես է լինում: Մուլեն ընկնելուն պես բանտը կենդանանում է: Գործի է գցվում բանտային «փոստը», պատերը, հատակը, առաստաղն օգտագործվում են դեռևս քարանձավային ժամանակներից հայտնի մորզեի հաղորդակցության նպատակով: Լինելով Ախպերության անդամ՝ չեմ ընկնում տեխնիկական մանրամասների հետեւից (կարելի է բերանից թռցնել հսկիչներին դեռևս անհայտ հնարքներ): Առավելագույնս խելամիտ են օգտագործվում շենքի ճարտարապետությունը, ծառայողական անձնակազմը, հսկիչի հոգեբանությունը, իհարկե՝ ռեժը եւ պարանիկից ամրացված փոստային պայուսակը, որն այստեղ կոն են անվանում: Նորեկներն Ախպերության ամենախայտաբղետ մասն են. թթու դրած վարունգի երեք բանկայից (մեկն օղու հետ համտեսել էր, մյուս երկուսը փչացած էին եղել, եւ հաջորդել էր երեքուկես տարվա ընդհանուր ռեժիմը) մինչեւ հայրասպան (վեց տարվա ուժեղացված ռեժիմ): Հագվադեպ է մեկնումեկը իրեն մեղավոր համարում եւ լիովին մեղանչում, ինչ իմանա՝ ում հետ է նստած բանտախցում: Բացատրությունները կարող են տարբեր լինել: Նախ՝ «մեղավոր չեմ, եւ վերջ»: Սա սովորական առօրյա է: Ապա՝ «ով կարողանում է՝ գողանում»: Այնտեղ շատ բան գիտեն. Ազատ Անկախության մեջ ով եւ իշխանավորիկներից ո՞ր փողավորի օբյեկտները ինչպես եւ ինչքան են գռվում: Երրորդ՝ շատ դեպքերում բացարձակ անպատժելիություն է տիրում: Ճամփեզրին ընկած, ոչ մեկին չպատկանող էլեկտրաշարժիչից հանված 1,2 կգ պղնձե մետաղալարի համար երիտասարդը ստացել էր ընդհանուր ռեժիմի մեկ տարի: «Էլեկտրահաստոցները շարասյուներով էին դուրս հանում որպես ջարդոն: Ինձ ինչու՞ պիտի պատժեն, եթե նրանց չպատժեցին»: Չորրորդ՝ դժբախտաբար, շատ կան փուչիկ գործեր, որտեղ միակողմանիորեն է կիրառվում օրենքի տառը: Նպատակը թղթի մի անկյունում սրանկյուն նշում կատարե՞լն է, կաշառք վերցնե՞լը, թե տղամարդկանց ակտիվ զանգվածներին մեկուսացնելու պրոֆիլակտիկ ենթադրությունը, հատկապես՝ դժգոհներին: Ցավոք, ասվածը հաստատող շատ փաստեր կան: Պաշտոնական տվյալներով՝ մենք քաղաքական բանտարկյալներ չունենք, բայց... Երբ ինձ ձերբակալում էին, ակնարկում էին, որ ես Գերագույն խորհրդի պատգամավորության թեկնածու եմ եղել, լրագրող եմ եւ այլն:

Անորոշ բանտախցում սնունդը լավ է: Շաբաթական մեկ անգամ՝ հարազատների կողմից տուլիկ. ծխախոտ, հաց, մսով ինչ-որ բան, ձուկ, քաղցրավենիք, միրգ, բանջարեղեն: Զանի դեռ հարազատները հնարավորություն, այսինքն՝ փող ունեն, ոչինչ չեն խնայում: Դա իրականանալի է խցում գտնվողներից կեսի՝ քաղաքում ապրողների եւ թանկ հաճույք է շրջաններից ետապով եկածների համար: Կան այնպիսիք, որոնց մոտ ընդհանրապես մարդ չի գալիս, որովհետեւ հնարավորություն չունեն: Լիներ՝ չէր գողանա, մայրը հաշմանդամ է, եղբայրը ութ տարեկան, հայրը գոհվել է ավտովթարից: Աշխատանք չկա, իսկ ուտել պետք է: Ընկերոջ հետ 20 լ օղի գողացան, վաճառեցին, բռնվեցին: Ինքը չի ծխում, չի խմում: Դետո՝ ընդհանուր ռեժիմի չորսուկես տարի:

Ուրիշ մի կատեգորիա էլ կա, որի մոտ ոչ ոք չի գալիս, ոչ ոք չի ուզում օգնել... այնպես են բեռնել յուրայիններին ատելութամբ: Նրանց մեկուսացումը հարազատների համար Աստծո պարգև է: Այդպես էլ է լինում:

Պետական օրապահիկը լրիվ տանելի է, երբեմն նույնիսկ շոգեխաշած մսի պահածո են տալիս: Շատերի համար այդպիսի սնունդը՝ օրը երեք անգամ, վաղուց մոռացված շքեղություն է, սոցիալիզմի երանելի մնացուկ: Բանտում առավել պարզորոշ են զգում, թե ինչ աղքատիկ օրապահիկով են դիմանում այնտեղ՝ Ազատ Անկախության մեջ:

Առաջին շաբաթը ցնցակաթվածային է: Տեղի է ունենում համակողմանի հարմարեցում երկու չափումների միջև՝ մաքսատան նման մի բան: Բնավորության եւ կենսագրության ո՞ր գիծն է նախընտրելի: Նայած սոցիալական ո՞ր խմբին են պատկանում՝ ունենո՞ր, թե ունեզուրկ, քո հանդեպ վերաբերմունքը հիմնականում դրանից է կախված: Բանտում դա շատ էական է: Դեկավարությունը սիրում է հարուստներին: Անձնական հատկանիշները՝ ավելորդ հարցեր չտալ, լինել հավաք, զուսպ, չափավոր հպարտ,- այդ ամենը չափազանց կարելոր է: Նորեկներն այդ ամենը դրսից լսելով գիտեն, առաջին ցուցումներն ավելի փորձվածներից նրանք ստանում են կարանտինի խցում: Առանձնահատուկ ուշադրություն է հատկացվում անձնական հիգիենային: Բոլոր վիճելի հարցերով կարելի է դիմել պալատենի նայողին կամ էլ օրենքով գողին, որն անպայման ամեն բանտում կա՝ գոնե մեկը: Նա, իր հերթին, արդարադատորեն, կարող է լուծել ցանկացած հակասական իրավիճակ ոչ միայն Ախ-

պերության մեջ ծագած վեճերում, այլև հազվադեպ՝ բանտարկյալների ու հսկիչների: Անկեղծ ասած՝ առանց նրանց միջամտության հարկ կլինե՞ր հսկիչների հաստիքը մեծացնել երկու, նույնիսկ երեք անգամ:

Ֆինանսատնտեսական տեսանկյունից բանտը մի մեծ ինդուստրիա է, որտեղ ղեկավարության, հսկիչների եւ բանտարկյալների հարաբերությունը արտացոլում է երկրի տնտեսական եւ օրենսդրական վիճակը: Հարցուփորձելով կալանավոր ցմփոր «Էկոնոմիստներին»՝ կարելի է շատ բան ասել տնտեսության, իշխանավորների մասին. ով ինչ բնագավառ է հսկում, ով ում բարեկամն է եւ շատ այլ բաներ:

Գյումրիից մի տղա չորսուկես տարի ստացավ, քանի որ քաղցը հագեցնելու համար խորովածանոցից բուտերբրոդ էր գողացել: Ասում են՝ նույն Գյումրիում մանուկ հասակում Հովհ. Շիրազն էլ է բոքոն գողացել: Ի դեպ, թե բանտում, թե զոնայում Գյումրիի բանտարկյալները մեծ տոկոս են կազմում, եւ դա կապվում է սոցիալական անտանելի պայմանների հետ:

Ուրախությունը մտնում է բանտախուց տուլիկի գալստյան հետ, երբեմն՝ օրը մի քանի անգամ: Բանտարկյալ-խոհարարը ստացականի հետ համեմատում է ցուցակը եւ մթերքի քանակը, արդյո՞ք ամեն ինչ տեղ է հասել, ոչինչ չի կորել: Որպես կանոն՝ ցուցակում գրանցված 3 կգ խնձորին համապատասխանում է հինգ-վեց հատ 100 գրամանոց խնձոր (բանտախցում կշեռք չկա), բայց ինչը հատով է, տեղ է հասնում անկորուստ: Ներքին կարգուկանոնը շատ խիստ է (երբեմն աբսուրդի հասնող, ասենք՝ ցերեկը չի կարելի մահճակալի վրա պառկել), խախտելու դեպքում կարելի է պատժախուց ընկնել:

Բանտարկյալի ու հսկիչի պատշաճ գոյատեւման համար, ինչպես եւ սովորական կյանքում, գոյություն ունի ֆինանսական հաշվեկշիռ, ամեն բան իր գինն ունի, թե հեռուստացույցը խցում, թե ամենօրյա բաղնիքը (իսկ սովորաբար՝ շաբաթը մեկ), թե շատ այլ արտոնություններ: Ես միայն մի հսկիչի եմ հանդիպել, որն իր աշխատանքային երկար տարիների ընթացքում ոչ մի բանտարկյալից ոչինչ չի խնդրել, ոչինչ չի պահանջել, ոչ մեկին չի հայհոյել: Այդպիսիք հազվագյուտ, բայց լինում են: Որպես հարգանքի տուրք՝ մենք նրան ծննդյան օրվա առթիվ նվեր էինք պատրաստել՝ նկարագարոված թաշկինակ՝ «Հարգելի Մույին՝ խցի տղեքից որպես հիշատակ» մակագրությամբ: Վերցնելով նվերը մի բաժակ սուրճի եւ կոնֆետների

հետ, նա շատ հուզվեց, թերեւս կյանքում առաջին անգամ երևկեր ստանում:

Առավոտյան սովորական ստուգում է. հերթապահը կատարում է բանտարկյալների հաշվառում, դուրս է տանում օրվա աղբը, հայտնում է հիվանդների մասին, եթե կան: Հետո մետաղյա դուռը բնորոշ շփնդով փակվում է: Ժամանակավորապես բանտախուց է մտնում Լուսինը: Ապա ամեն մարդ զբաղվում է իր գործով, մեկը զրուցում է, մյուսը՝ լվանում, երրորդը շախմատ կամ շաշկի խաղում: Այդպես պատրաստվում ենք զբոսանքի:

Մեր բանտի ճարտարապետությունը յուրահատուկ է: Սովորաբար հպարտանում ենք թատրոնի շենքով, օպերայով, մարզահամերգային համալիրով, երիտասարդական պալատով եւ այլն, անուշադրության մատնելով ճարտարապետական ինքնատիպ կառույց «բերդը», ուր սովորաբար գտնվում է հազարից ավելի բանտարկյալ: Գլանագլխարկ վեցհարկանի՝ նկուղային հարկերով: Բանտախցերը վերին հարկերում առանց առաստաղի են, ավելի ճիշտ առանց սովորական առաստաղի, երկաթյա ցանցեր են եւ փշալարեր: Ճիշտ նմանակը վարի խցերի, բայց առանց զուգարանի եւ ջրի: Հսկիչը, վերահաշվելով բանտարկյալներին, ուղեկցում է մինչեւ զբոսանքի խուցը իծաշարուկ, ձեռքները՝ մեջքներին: Թարմ օդում զբոսնելուց հետո մեկ ժամից նույն ձեռով ետդարձ՝ դեպի հարազատ խուցը: 3-5 րոպեի ընթացքում կարելի է անցնել բոլոր խցերով, ըստ հարկերի, սակայն բացառվում է փաստացի շփումը՝ մի խցի բնակիչների հանդիպումը մեկ ուրիշի հետ: Սովորաբար, զբոսանքը դրական ազդեցություն է թողնում՝ ի վերջո, փոփոխություն է: Խեղդուկ զգացումը, որ պարուրում է քեզ բանտախցի ծանր քարե պահարանի մեջ, ցանցապատ երկնքի տակ այլեւս ճնշող չի թվում: Այդպես էլ պետք է լինի: Չբոսանքից հետո ժամանակն ավելի արագ է անցնում: Երբեմն, եթե որեւէ մեկի ծննդյան օրն է, բոլորը միասին նստում են տոնական սեղանի շուրջ. սուրճ, հյութ, կոնֆետներ, միրգ եւ այլն, որ հոգաձությամբ բերում են այդ օրը հոբելյարի հարազատները: Եթե նրան այս կամ այն պատճառով չեն այցելել, դժբախտություն է: Խցակիցները կարող են ամեն բան կազմակերպել ըստ պատշաճի: Ոգելից չկա: Հարեւան խցում մի քանի անգամ բավական հաջող գինի էին պատրաստել, ափսոս, բռնվեցին: Ես երբեք ավելի սրտառուչ մաղթանքներ չեմ լսել, թեւեւ ոչ այնքան գրագետ,

որոնք սովորաբար ավարտվում էին բարի ազատում, ծնողներին համբերություն, ապրեն բերողները խոսքերով: Ամեն ոք, անշուշտ, նույնը իրեն է մաղթում:

Առանց բացառության, բոլոր խցերին բնորոշ է սրբապատկերների անկյունը: Սովորաբար դա ոչ մեծ ստվարաթղթե պատվանդան է՝ պատին փակցված, որի վրա լուցկու եւ ծխախոտի դատարկ տուփերից հավաքած-ներկած փոքրիկ եկեղեցու գեղեցիկ մանրակերտ կա, մի քանի մոմ՝ հացից պատրաստված մոմակալների մեջ: Կտավի վրա նկարված է Աստվածամայրը, կողքը՝ աստվածաշնչյան պատկերների բազմաթիվ գունավոր վերատպուրյուններ: Շատերը շաբաթը մեկ անգամ կամ ավելի հաճախ մոմ են վառում եւ լուռ աղոթում: Հավատացյալին ոչ ոք չի անհանգստացնում, չի շեղում խոսակցություններով: Աստվածանարգության չես հանդիպի բանտում: Մի քանի խցերում նույնիսկ Աստվածաշունչ կա:

Սովորաբար 1-1,5 ամիս անց հետաքննությունն ավարտվում է, ստացվում է մեղադրական եզրակացությունը, ճշտվում է դատավարության օրը: Բայց երբեմն այդ սպասումը կարող է տարուց ավելի ձգվել՝ կախված հողվածից եւ քննության ընթացքից: Դատարան գնացողին խցակիցները ջանում են ոգեւորել, խելք, խելոքություն սովորեցնել, թե ինչպես պահի իրեն, ինչ ժխտի, ինչ հանձն առնի, բայց ամենակարեւորը՝ պաշտպանի իրեն այնպես, որ չտուժի գործընկերը: Երբեմն հարցուպատասխանի հանկարծաստեղծ թատրոն է անցկացվում, ինչպես դատավարության ժամանակ: Նախ՝ օգնելու, երկրորդ՝ ինչ-որ բան սովորեցնելու, ինքնավստահություն ձեռք բերելու եւ վերջապես՝ զվարճանալու համար: Հիմնականում այդ ներկայացումներն ավարտվում են բոլոր ժամանակներին եւ ժողովուրդներին բնորոշ միակ անխուսափելի հարցով. «Ձերոնք ինչքա՞ն փող կարող են տալ»: Հեղափոխության նվաճումներից մեկը արդարությունից Ազատ Անկախ օրենքներն են. ոչնչից մինչեւ հինգ տարի, նույն հողվածի նույն կետով... Շուկայական պարզ հարաբերություններ: Յուրաքանչյուրը, դատավարության ներկայանալով առաջին անգամ, անկեղծորեն հավատում է, որ իրեն կարդարացնեն: Վորոնյոկ կոչվող մեքենայով կալանավորներին բաժանելիս, ուղեկցող-նստիկանը, որ ինձ առաջին անգամ էր տեսնում, գիտեր իմ հողվածը եւ գիտեր, թե ինչքան կտան ինձ: Այդպես էլ եղավ:

Դատավարության ընթացքը եւ դրան առնչվող տպավորութ-

յունները չեմ ուզում նկարագրել: Այն հիշեցնում է պատգամավորների կամ նախագահի ընտրությունները, նախապես ամեն բան հայտնի է: Ինչ որոշվել է վերելներում, այդ էլ կլինի: Պարտադիր է մինչև դատավարությունը դրամական ներդրում կատարել. ինչպես ընտրություններում՝ գրավը: Պարտադիր է նաև «հերթապահ» դատապաշտպան վարձել, որ 50 դոլարով ի լուր ամենքի կհայտարարի, թե դու գրեթե անմեղ ես: Ես դրանից հրաժարվեցի, այլապես ինչ միտք ուներ նստելը:

Բանտում մթնոլորտի փոփոխությունն ընդունվում է իբրև կարեւոր իրադարձություն: Սովորաբար մեկ օրում ես իմանում է տապի մասին: Միանգամից բազմաթիվ հարցեր են ծագում, ինչպե՞ս է այնտեղ, ի՞նչ կարգեր են, ի՞նչ կգա գլխիդ: Ընդհանրապես, դա անձնական հարց է եւ կախված է երեք հիմնական գործոններից: Առաջինը հոդվածն է, որով քեզ դատապարտել են. եւ ժամկետը, ամեն դեպքում այն ինչ-որ չափով բնորոշում է բանտարկյալին: Ախպերությունը միշտ զգոն է եւ որեւէ մեկին մոլորության մեջ գցել այնտեղ՝ զոնայում, փաստորեն հնարավոր չէ: Երկրորդն անձնական հատկանիշներն են՝ բանտարկյալի բնավորությունը, ընկերականությունը, կամեցողությունը եւ այլն: Երրորդը, որ շատ կարեւոր է, ապահովվածության աստիճանն է: Դրանից է կախված, թե բանտարկյալը որքան կուշտ կարող է ապրել զոնայում: Միանգամից ասեմ, որ այնտեղ «նստելն» ավելի հեշտ է, քան բանտում: Քարե պահարանի փոխարեն՝ լեռնային թարմ օդ, հարազատների, ընկերների հետ շփումներ, անձնական հանդիպումներ 2-3 օրով, եթե ռեժիմի խախտումներ չկան (տեսակցություններն ամիսը երկու անգամ են. կարճատեւ եւ երկարատեւ): Հարազատների հետ հեռախոսագրույցներ, թեկուզ ամեն օր՝ ընդհանուր սիմվոլիկ 10 դրամ վճարով: 50 կգ մթերքի փոխանցում մեկ ամսվա ընթացքում, եթե կարող ես նման շռայլություն թույլ տալ քեզ: Շատ բանտարկյալների ընդհանրապես չեն այցելում, հնարավորություն չունեն: Հատկապես՝ աղետի գոտուց. այնտեղ՝ Ազատ Անկախության մեջ գոյատեւման պայմաններն անտանելի են, աշխատանք չկա: Ինչպե՞ս են ապրում, անհասկանալի է: Չունայում գոնե օրը երեք անգամ սնվում են:

Կոշը բավական մեծ գյուղ է, այդտեղ էլ հենց գտնվում է զոնան՝ ուղղիչ աշխատանքային գաղութ՝ ընդհանուր եւ ուժեղացված ռեժիմներով: Ունի, հանրակացարաններից ցանկապատով առանձնացված, իր փոքրիկ գործարանները: Նախկինում բան-

տարկյալներն աշխատում էին, նույնիսկ լավ վարձատրվում, փողը տուն էին ուղարկում, իրենց հաշվին կրպակից սևվում էին: Հանրակրթական դպրոց կար, տեխնիկում: Հիմա անգործ են, եւ ժամանակը տանջալիորեն երկար է ձգվում: Այն բաժանվում է նախաճաշի, ճաշի եւ ընթրիքի, ապա համաստուգում, հանգիստ: Այդ ընթացակարգերի արանքում ժամանակն անցնում է գրույցներով, հիշողություններով եւ, իհարկե, համաներման մասին խոսակցություններով, որը, ուր որ է, պետք է հրապարակվի:

Բարձր պարիսպներով փշալարե ցանկապատը զապրետկան է: Պատերին ազդու չափերի «Կանգնիր, կկրակեմ» գրություններ են: Անկյուններում՝ հսկիչ աշտարակներ՝ ավտոմատավորներով: Գիշերաժամին, ամեն 10-15 րոպե մեկ, բարձրախոսով իրար են ձայնում պահպանության կենտրոնական պահակակետն ու աշտարակավորները: Բանտարկյալներն ապրում են զորանոցներ հիշեցնող հանրակացարաններում, երկհարկանի մահճակալներ, երկու մահճակալների միջեւ լայնշի պահարաններ, եւ այդ ամենը կոչվում է պրոխոդ: Որպես կանոն՝ մաքուր, կոկիկ, յուրաքանչյուրը մաքրում է իր պրոխոդը՝ իր տունը: Այն ավելի հարգի է, երբ գտնվում է մուտքի հարմար անկյունում կամ գոնե մոտակայքում: Հարգի է նաեւ ներքեւի մահճակալը: Պահարանների վրա, սովորաբար, հարազատների լուսանկարներն են, սրբապատկերներ, մոմակալներ: Չոնայում ունեն նաեւ իրենց եկեղեցին, 3-4 սենյակ՝ նկարազարդ պատերով, գրադարան՝ կրոնական գրականությամբ: Ունեն իրենց հավատացյալները, որոնք կարող են ծնկի եկած ժամերով աղոթել: Աղոթքների միտքը մեկն է. «Աստված իմ, ինձ շուտ այստեղից դուրս բեր»: Կան նաեւ աղանդներ՝ Եհովայի վկաներ, նույնիսկ կրիշնայականներ, որ կարող են ութ ժամ անընդհատ նույնն ասել՝ «Հարե Կրիշնա»: Մի խոսքով՝ ինչպես Ազատ Անկախության մեջ:

Բարաքների շուրջը շատ գեղեցիկ, հարմարավետ տաղավարներ կան՝ միմյանց կիպ կպած, ծիրանենիներ եւ մրգատու այլ ծառեր:

Ինչպես եւ բանտում, կա բաղնիք: Ծաբաթական մեկ անգամ լողանքի օր է: Լողացիր, մաքրվիր: Բարոյական նկատառումներով լողանում են վարտիքներով:

Չոնայում ավելի լավ են կերակրում, քան բանտում: Պատմում էին, որ ձմռանը նույնիսկ խաշ են տվել:

Մեր բիբլիական լեռն այդքան գեղեցիկ չէի տեսել: Առավոտյան, արեւի ծագելուն պես, նա էլ էր արթնանում իր անկրկնելի վեհությանմբ: Լեռան համայնապատկերն այնտեղից շատ գեղեցիկ էր: Հատկապես արեւածագին եւ մայրամուտին:

Կարդացողները շատ են: Սովորաբար հարազատները տեսակցությունների ժամանակ նոր գրքեր են բերում եւ տանում հետը: Չոնան ունի գրադարան, ակումբ՝ կինոսրահով: Երբեմն դերասաններ են գալիս: Այստեղ անձնակազմը բազմազան է. գողեր, հանցագործներ, մարդասպաններ, խուլիգաններ, դասալիքներ, ավանտյուրիստներ եւ այլն: Կան նաեւ բանտարկյալներ, որոնք, անկեղծ ասած, իրենք էլ չգիտեն, թե ինչու են նստած: Կարծես օրինախախտ են, այսինքն՝ հողվածը կա, բայց... կարելի էր բավարարվել 15 օրով կամ, ինչպես առաջ, ընկերական-կոմերիտական դատով: Ցավոք, այդպիսիք շատ են:

Գողերն Ախպերության ամենահարգված մասն են, եթե, իհարկե, չեն թալանել սեփական տատին կամ թե գերեզմանոցից չուզունե ճաղեր չեն թռցրել: Գողական օրենքներով սպանությունն արդարացվում է երկու դեպքում՝ հարկադրված ինքնապաշտպանության եւ վիրավորված պատվի դեպքում, որն, ըստ էության, նույնպես ինքնապաշտպանությունն է: Հանուն փողի, հարբած ծեծկռտուքների ժամանակ կատարված սպանությունները հարգի չեն ինչպես Ախպերության, այնպես էլ ղեկավարության շրջանում: Մի Սիրուն Սերյոգա սպանել էր իր հարսնացուին (ի ծնե համր), երբ վերջինիս բռնեցրել էր ուրիշի հետ համբուրվելիս: Մի Արո կյանքից զրկել էր իր վրա հարձակված տասը զինված թալանչիներից մեկին եւ ստացել 9 տարի, քանի որ ողջ էր մնացել ու համարձակվել պաշտպանել իրեն: Երրորդը սպանել էր կնոջը: Գուցե պատճառն էր եղել (այստեղ ավելորդ հարցեր չեն տալիս, հարկ լինի՝ ինքը կասի): Օրինավոր անձինք իրենց ճակատագիրը կրում են հանգիստ, առանց իրարանցման: Էկոնոմիստներն ու բանկիրներն աչքի են ընկնում զարգացածությամբ: Նախկինում կամ ինչ-որ բան չեն կիսել գործատիրոջ հետ, կամ «զցել» են նրանց, ի՞նչ իմանաս, ծածկամիտ ժողովուրդ են:

Հարգանք չեն վայելում թմրադեղերի առետրականները: Ի դեպ, շատ թմրամուլներ այստեղ ետ են վարժվում՝ թմրադեղերի բացակայության պատճառով: Ինչպես ցանկացած կոլեկտիվում, լինի զոնա, օրինապահ ատյան կամ նույնիսկ Մատենադարան, այստեղ էլ յուրաքանչյուր տասներորդը ի ծնե պորտա-

բույժ է, արդյունքում՝ տականք:

Մեծ տոկոս են կազմում դասալիքները: Նրանցից շատերին կարելի էր չնստեցնել. զինկոմիսարիատների, զինվորական ոստիկանության անփույթ աշխատանքի զոհեր: Իսկական դասալիքները ծայրահեղ քիչ են:

Չունայում ես հասկացա, թե մենք՝ լեռների գավակներս, ինչքան ետ ենք մնում «քաղաքակիրթ» Արեւմուտքից, հատկապես Իսրայելից, նրանց բնորոշ Սոդոմ-Գոմորոմ եւ այլնով: 1600 բանտարկյալին՝ մոտ 20 հոմոսեքսուալիստ: Իսկ արեւմտյան աշխարհում ընդունված է նորմալ համարել յուրաքանչյուր սեռից 5 տոկոսի՝ սեռական փոքրամասնությանը պատկանելը: Ռմանք, չգիտես ինչու, խոսում էին եզդիերեն:

Շատ են երիտասարդները, կան միջին տարիքի տղամարդիկ, նաեւ տարեցներ:

Չունայում հատուկ հասկացություն կա՝ հացընկեր: Ազատ Անկախության մեջ այն կարելի է համեմատել ամենամտերիմ ընկերոջ կամ կաթնախայր հետ: Նրա հետ է կիսվում վերջին ծխախոտը, հացի վերջին պատառը, ինչպես նաեւ պարտքը, եթե լինում է: Սովորաբար նրանք երկուսով, երեքով են, երբեմն ավելի: Կարելու է հոգեբանական համատեղելիությունը: Ես տեսել եմ հարազատ եղբայրների, որոնք տարբեր հացընկերներ ունեին, թեեւ միմյանց հետ հաշտ էին: Հիմնականում ընկերանում են ըստ աշխարհագրական պատկանելության՝ նույն գյուղից, շրջանից, քաղաքից, բայց դա պարտադիր չէ:

Այդքան գեղեցիկ, փափկամազիկ կատու երբեք չէի տեսել: Փռված տիրոջ ոտքերի մոտ խաղաղ քնած էր: Տերը երիտասարդ էր, նիհարակազմ, նուրբ դիմագծերով: Ռուբոն՝ զոնայի ընտրված հեղինակավորը: Նրա խոսքը, որոշումը բոլորի համար օրենք է: Ընդունում է, լսում, էտապայիններին տեղաբաշխում հանրակացարաններում: Փաստորեն, բոլորին գիտի դեմքով, անունով, կենսագրությամբ: Ախպերության մեջ եղած վիճահարույց հարցերը վճռվում են նրա միջոցով, դժգոհներ չեն լինում: Ծննդյան օր է կամ առանձնահատուկ ինչ-որ գործ, նույնիսկ դեկավարության հետ կապված, կարելի է նրան դիմել եւ վստահ լինել, որ արդարացի լուծում կստանա: Ինձ, որպես լրագրողի, կտրականապես մերժեց հարցազրույց տալ: Ինչ էլ լինի, Ախպերության օրենք է: Նստած է սպանության (ինքնապաշտպանություն) համար, պատվի հարց է, ժամկետը՝ տասը տարի: Այդ ժամանակ ճարտարագիտական ինստիտուտի հինգերորդ կուր-

սում էր: Արտասովոր անձնավորություն է, լիդեր կլիներ ցանկացած սոցիալական խմբում: Վստահորեն կողմնորոշվում է քաղաքականության եւ տնտեսության բավիղներում:

Չոնան արտացոլում է երկրի տնտեսական եւ ներքաղաքական իրավիճակը: Այնտեղ ամեն տեսակ մարդ կա՝ տնօրեններ, պրոֆեսորներ (լավ, ազնիվ մարդիկ): Ախպերության հեղինակավորի առանձնահատկությունը նրա... անկաշառելի լինելն է: Նրան պարզապես հնարավոր չէ կաշառել. պատիվ հասկացությունը եւ գողական օրենքների կանոնները ամեն ինչից, անգամ կյանքից թանկ են: Այ թե հեղինակավորի նման ընտրություններ խորհրդարանում կարողանայինք կազմակերպել: Չոնայում լիդերը նա է, ում հետեւից գնում են: Ազատ Անկախության մեջ, հակառակն է. լիդերը նա է, ով տանում է իր հետեւից, խոստումներով եւ այլևով: Ըստ Ռուբոյի արգելքի՝ խստագույնս արգելված են կռիվները եւ թունդ հիշոցները: Յուրաքանչյուր նման սխալի համար հարկ է լինում հաշվետվություն տալ՝ մեղավորի համար տխուր հետեւանքներով: Մեր չափանիշներով՝ զոն նայողի գործը շատ պատասխանատու, ղեկավար աշխատանք է: Փաստորեն, Ռուբոն աշխատում էր օրական 12-15 ժամ, առանց հանգստի: Նրա իշխանության արժեքը մշտական զգոնությունն է: Ղեկավարությունը նույնպես ստիպված է հաշվի նստել հեղինակավորի հետ: Չոնայի կարգուկանոնից է կախված ղեկավարության անդորրը: Ժողովուրդն այնտեղ բռնկվող ու տաքարյուն է, եւ մի փոքր անարդարությունը կարող է ըմբոստության առիթ դառնալ: Անձնական պաշտպանվածության աստիճանը զոնայում... բազմակի մեծ է, քան Ազատ Անկախության մեջ: Նեղացնել թույլին կամ ինչ-որ մեկից ինչ-որ բան գողանալ, սովորաբար, այդպես չի լինում, իսկ եթե լինում է, հանցավորը ստիպված է դաժան պատասխանատվության ենթարկվել: Բանտարկյալների փոխհարաբերությունները հարգալից են: Ի՞նչը հատկապես ինձ դուր եկավ, միմյանց ընտանիքների, ծնողների, երեխաների նկատմամբ ընդգծված հարգանքը: Խոսքի մեջ, երբ հարկ է լինում, իր կամ զրուցակցի կնոջը հարս են անվանում: Ըստ լեգենդի՝ Մարիամ Մագթաղինացին Տիրոջ կարոտից երկու տարի մնացել էր անապատում, հետո, Փրկչի քարոզը հաստատելու համար, ինքնակամ զոհվել խաչի վրա: Ուզում եմ խոնարհվել մեր Ախպերության հարսների, մայրերի, քույրերի մեծամասնության առաջ, որոնք իրենց տերերի, հույսերի, փրկիչների համար տառապում են ձերբա-

կալման առաջին պահից սկսած, մինչև դատարաններ, բերդեր եւ զոնաներ, տարիներ շարունակ: Խաչին են ելնում ամեն անգամ՝ հայթայթում «եթիմ» երեխաների օրվա հացը: Չարչարանքի արդյունքում շահում են կարճատեւ հանդիպում եւ հուսավառ հրաժեշտ... մինչ ազատումը՝ կրելով Փրկչի «մեղքը»:

Կարճ տեսակցությունների օրերին՝ շաբաթ եւ կիրակի, համընդհանուր լարվածությունն է: Գրեթե բոլոր բանտարկյալներն ականջ են դնում բարձրախոսի ձայնին, ու՛մ ազգանունը կարտասանեն տեսակցության դուրս գալու համար: Հարազատների հետ հանդիպումը մեծ իրադարձությունն է: Ցրվում է մենության զգացումը, հառնում շուտափույթ ազատության պատրանքը: Գուցե ինչ-որ լավ լո՛ւր կասեն, կհաստատեն համաներման լուրը: Քի՞չ բան կարող է փոխվել: Շատերին չեն այցելում: Հնարավորությունն չկա: Տեսակցության օրերին զգում ես, թե ինչ ծանր է հարազատների համար այնտեղ՝ Անկախ Ազատության մեջ, թե ինչ արժե երեխաներից կտրած քո տուլիկը: Եւ հարց է՝ ու՛մ համար է ավելի դժվար, առանց կերակրողի ընտանիքի՞, թե բանտարկյալի: Ո՞վ է իրականում «նեղության մեջ»: «Բանկիրների» պարենահանձնումները ծանր են, ճոխ:

Իմ ոչ այնքան կարճ, մեղսավոր կյանքում շատ բանտարկյալների եմ հանդիպել, ինքնատիպ մարդիկ ակադեմիկոսից մինչև բանվոր: Ամենախելոքին, բոլոր առումներով կատարյալին, ես տեսա զոնայում: Նրա անունը նույնպես արտասովոր է՝ Սանթուր: Դեռ 23 տարեկան, բայց ճերմակած իմաստունի փորձ ուներ: Ամեն ինչ նրա ձեռքերում կենդանանում էր: Եթե պետք էր ճաշ պատրաստել՝ ոչ ոք չէր կարող գերազանցել, ընդունիչը կամ հեռուստացույցը նորոգել՝ նույնպես անթերի, բարոյակամային, ֆիզիկական տվյալները՝ բացառիկ: Կուզենայի այդպիսի որդի ունենալ:

Ամենանշանակալի իրադարձությունը բանտարկյալի կյանքում ազատվելն է: Դա ծավալուն հասկացությունն է. անցում մի զոնայից մյուսը, մեկ չափումից մի ուրիշը: Եթե գաղութի զոնայում զապրետկան փշալարն ու բարձր պատն են՝ անկյուններում աշտարակավորներով, ապա այդ զոնայում... հստակ ու չինչ չկա: Ազատ Անկախության մեջ ո՞րն է զապրետկան: Եթե նրանց համար արգելքը միատեսակ է, բոլորի՞ ամեն տեսակ բանտարկյալից մինչև ղեկավարություն, ապա Անկախ Ազատության մեջ այդ պատն ունի բոլորովին այլ երկրաչափություն, նույնիսկ չես կարող կողմնորոշվել, թե զապրետկայի որ

կողմում ես տվյալ պահին: Փշալարն Ազատ Անկախության մեջ հավերժ փաթաթվում է ձեռքերիդ, ոտքերիդ, ու թե բարձրագույն ասեմ՝ հոգուդ վրա էլ է հետք թողնում, բարոյական ո՞ր արգելքներն են ճիշտ, որոնք՝ սխալ: Ի՞նչն է կարելի, ինչը՝ ոչ:

Տանը, հարմարավետ բազկաթոռի մեջ, հեռուստացույցի դիմաց կարող ես ավելի մենակ լինել, քան խցում: Այնտեղ մշտապես քո կողքին է նորին մեծությունն Յույսը: Այստեղ՝ Ազատ Անկախության մեջ միայն Յուսահատությունն է (խոսքը մտավորականության եւ հասարակ մարդկանց մասին է): Յուսահատությունն այնպիսի «աթոռանիստ» սրիկա է, կկողոպտի քո երեխաներին, դե, թեկուզ չի տա երկու տարվա օրինական աշխատավարձդ:

Եթե զոնայում արժանավոր գոյությունը հիմնվում է քրիստոնեական սկզբունքի վրա՝ «Ուրիշին մի ցանկանա այն, ինչ քեզ չես ցանկանա», ապա Ազատ Անկախության մեջ բարեկեցության, կուշտ կյանքի համար հնարավոր է ճիշտ հակառակը: Դատի օրը Չարիկ մայրիկը՝ իմ ընկեր Դուշման Վարդանի մայրը, իր զոհված որդու անունից դատարանին խնդրեց ազատել ինձ, չդատել տանը եղած, պատերազմից մնացած փամփուշտների համար:

Ես հաճախ էի մտածում. «Երբ ազատվեմ, նախքան տուն մտնելս, կբարձրանամ Եռաբլուր՝ մտովի հաշվետվություն տալու ընկերներին շիրիմներին»:

Այդպես էլ արեցի:

P.S. Ցանկանում եմ շնորհակալություն հայտնել այն տականքներին, Ազատ Անկախության պահպանիչներին՝ ներքեւից մինչեւ գագաթ, որոնց շնորհիվ ես ընկա զոնա, անցա իմաստուն դպրոց, փորձեցի ինքս ինձ: Թող այս հողվածն օգնի նրանց հասկանալու, թե ովքեր են քրեականները, որպեսզի բոլորին չչփոթեն հանցագործների հետ:

Երախտապարտ եմ ընկերներին եւ հարազատներին, որոնք նեղության մեջ ամեն կերպ օգնեցին ինձ ու երեխաներին:

Սիրեցեք զմիմեանս:

Մասնակի կրճատումներով արտատպված է «Գարուն» ամսագրի 1998 թ. 6-րդ համարից

ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼԻ ԱԶԵՐՈՎ

Ես՝ աշխարհից կտրված,
Գուցե նաեւ մոռացված,
Տիրոջ կամքին ենթարկված
Յուշի լույսով եմ տարված:

Պ. Սարգսյան

Յուրաքանչյուր մարդ աշխարհ է գալիս ապրելու իրավունքով եւ ոչ ոք իրավունք չունի խանգարելու կամ էլ իր կյանքի ուղին կառուցելու ուրիշի հաշվին անարդար ճանապարհով, քանզի ճշմարտությունը մեկն է եւ բոլոր բանիմաց եւ մարդասեր մարդիկ պարտավոր են այն հարգելու եւ ընդունելու որպես օրինավոր օրենք:

Բայց ինչո՞ւ է մարդը, արարածների վեհ պսակը, օժտված լինելով բանականությամբ, խախտում այդ օրենքը, պատճառելով մարդուն նյութական վնաս, բարոյական ընկճվածություն, անդառնալի վիշտ կամ կորցնելով խիղճը հովանավորում սուտը՝ դառնալով մի շարք չար գործերի պատճառ:

Տալով տողերիս ճշմարտություն ու համարձակություն, ակա-նատեսի աչքերով ուզում եմ ներկայացնել մի դատապարտյալի տեսածն ու պատմածը, որը նոր է վերադարձել ուղղիչ աշխատանքային հիմնարկությունից:

Կամա թե ականա մարդիկ խախտում են հասարակական կանոնները, կատարում հանցանք, պատժվում, հասարակությունից մեկուսացվում որոշակի ժամանակահատվածով եւ հայտնվում բանտերում ու ուղղիչ աշխատանքային հիմնարկություններում:

Ուղղիչ աշխատանքային հիմնարկությունը, կարծես, տղամարդկանց մի քաղաք լինի, որտեղ հավաքված են տարբեր հանցագործությունների համար դատապարտված, տարբեր բնավորության ու խառնվածքի, տարբեր տարիքային կազմով դատապարտյալներ:

Եւ ահա տարբեր կրթական մակարդակ ունեցող դատապարտյալներ, երկար ու ձիգ տարիների ընթացքում շփվելով միմյանց հետ, բացատրում են մեկը մյուսով իրենց կատարած հակահա-

սարակական արարքները, հանցանքները, մեղադրված պատժաչափերը եւ ինքնին զանազանվում՝ ով է հանցագործը, ով է մոլորյալը, ով է հանցագործության զոհը: Նայելով քրեական օրենսգրքին եւ պատժաչափերին, ակամայից թաքնված խռովք եւ ապրում վայ դատավորների հասցեին, որոնք խեղաթյուրում են արդարությունը եւ նեգատիվ երեւույթներով կամ էլ ստվերային հանելուկներով խաղում են հատկապես մոլորյալ դատապարտյալների բախտի հետ, որոնք այսօր հանցագործության զոհ են հիմնականում՝ սովի, աղքատության ու չքավորության պատճառով:

Եւ պատահական չի, որ հնչում են տողեր...

Արդարության ձայնն անուշ է բուրումնավետ ու զնգուն,
Բայց, երբ քամին սուտն է խառնում, դառնում թաքուն
մատնություն,
Ատյաններում խաղաղ մարդը փայլատակում
ու կորչում,
Իսկ մատնիչը, ուր է խիղճը, երբ խոսում է հոգու ճիչը:

Ճիչն ասում է, ոչ թե մեզ մի դատեք, այլ դատեք, բայց արդար դատեք, քանզի այն նայվում է արտաքինից հանգիստ, սահուն, ներսից հեղեղ փոթորկուն եւ լի անցանկալի վնասներով, որը մարդուն մղում է կրկնակի անգամ դիտավորյալ հանցագործության եւ դարձնում հանցագործ:

Ապրելով հակակրանք եւ կրելով հանցագործի պիտակ, մոլորյալ եւ հանցագործությանը զոհ դարձած դատապարտյալները կրկնակի մոլորության մեջ են ընկնում, երբ տեղափոխվում են ուղղիչ աշխատանքային հիմնարկություն եւ բառ են փոխանակում տարիներով մեկուսացված հանցագործների հետ:

Չունենալով հեռատեսություն, առանց երկար-բարակ մտածելու, տարվում կամ էլ ենթարկվում են նրանց թաքնված խոսքերին ու մեղսագործ նպատակներին, ընկնում են անասելի վիճակների մեջ, շեղվում ուղղման ճանապարհից, կորցնում ինքնատիրապետումը, դա էլ քիչ չէ, նեղության մեջ ներգրավում հարազատներին, որը հղի է ցնորալի ցնցումներով՝ ընտանիքների քայքայում եւ կործանում եւ ինչու չէ նաեւ ողբերգական ավարտ: Ինչքան էլ տխրահռչակ, բայց փաստ է, որը մեծ ուսումնասիրման եւ նոր մեթոդների մշակման կարիք ունի:

Իսկ հանցագործը, որը միանշանակ հասարակության համար չարիք է, ուրիշ ոչինչ, ամբողջովին ներծծված է նեգատիվ երեւույթներով եւ աշխարհը ընկալում է չար կողմերով: Ակամայից

մտածում ես, գուցե այդպես են ծնվել, միայն ու միայն շրջապատը արատավորելու համար:
Եւ ընդհանրապես...

Իսկ չարիքից կյանքում բարիք չի ծնվում,
Բայց դե թաքուն մարդու հոգում աղմկում:

Չունենալով զգոնություն եւ անտեղյակ լինելով դատապարտյալի իրավունքներից ու պարտականություններից, կարծես մոռացության է տրվում վերջնական նպատակը՝ վերադարձը դեպի հասարակություն: Դա հատկապես ցայտուն երեւում է երիտասարդ դատապարտյալների մոտ, որոնք դառնում են անցանկալի երեւույթների խաղալիքի առարկա եւ բնութագրվում անուղղելի, որը անխոս զրկում է նրանց վաղակետ պայմանական ազատման եւ գաղութ բնակավայր տեղափոխվելու իրավունքներից: Անխոսք իրեն բացասական ազդեցությունն է ունենում տարբեր ռեժիմային կարգավիճակով դատապարտված դատապարտյալների համատեղ կալանքը, հատկապես երբ առկա է կալանավայրում դատապարտյալների դաստիարակությանը նպաստող պայմանների բացակայությունը՝ ուսումնական պարապմունքներ, աշխատատեղեր, բանիմաց դաստիարակներ եւ այլն:

Այս բոլորը վկայում են, որ շատ քիչ մարդիկ են ուղղված վերադառնում հասարակություն: Մինչդեռ հանցագործության եւ հատկապես մոլորյալ հանցագործների համար իր մեղքը ունի նաեւ հասարակությունը, որը ժամանակին չի արձագանքում հասարակական կարգ ու կանոն խանգարողների եւ խախտողների վարքին եւ միայն զարմանք ապրում, երբ տեսնում է ատյանների վերաբերմունքը ամբաստանյալների նկատմամբ, երբ նրանց մեծ մասը ընդամենը հանցագործության զոհեր են: Այդ զարմանքը փոքր ինչ փարատվեց նրանով, որ 1997-ից մինչ այսօր երեք անգամ վերաորակավորումներ եւ փոփոխություններ է կատարվում քրեական օրենսգրքի առանձին հոդվածներում, հօգուտ դատապարտյալի ազատագրկման ժամանակի կրճատման:

Անսխալական մարդ գոյություն չունի եւ հասարակությունը, որը հանդիսանում է անհատի ուսուցիչը՝ պետք է մարդուն գովաբանի, պարսավանքի ենթարկի կամ դատապարտի ոչ բացարձակ սանդղակով, այլ հարաբերական սանդղակով: Եւ որ հասարակության պարտքը հանցագործին միայն դատապարտելը չէ, այլ նաեւ կալանավայրում նրանց ուղղելը, նրանց իրա-

վունքների եւ պարտականությունների ճիշտ կատարմանը հետեւելը եւ ուղղված դատապարտյալին ըստ գործող օրենքի վաղաժամկետ վերադարձնելը հասարակություն եւ հետեւելը նրա հետագա ճակատագրին՝ ներգրավել համապատասխան աշխատանքներում, օգնել նրան ուրույն տեղն ունենալու համար: Դժբախտաբար մեր օրերում դատապարտյալի վերադարձը չի արձագանքվում բարենպաստ մղումներով՝ առանձին ընտանիքների, շրջապատի եւ որ ամենակարեւորն է հասարակության կողմից եւ նախկին թույլ դատապարտյալին արագորեն իր մեջ է կլանում հանցագործ շրջապատը եւ հիմնովին խորտակում մարդուն եւ նրա ապագան:

Եւ այսպէս առաջացած անդունդն էլ ավելի է խորանում դատապարտյալի եւ հասարակության միջեւ, որի բացակայությունը գուցե կտրվի ապագա հասարակության կառուցման ընթացքում՝ նոր վերափոխումների եւ քաղաքակիրթ հուշարարության օժանդակությամբ եւ հույսը կբացվի լույսով:

Բայց ինչո՞ւ...

Թե հասկանա մարդը ուրույն, որ գերին է բնության,
Նա չի գնա հազար ու մի չարության,
Երբ հասնում է ու մոտենում անցանկալի վախճանին,
Նոր է զգում, բայց ապարդյուն, անցած կյանքը մոլեգին:

Կրճատ տարբերակը տպագրվել է
«Հուսաստղ» պարբերաթերթում, 08.09.2001թ.

Առաջաբան

Օգնենք նրանց վերադառնալ հասարակություն

Եղիկ Բաղդասարյան, Վարդան Հարությունյան, Ավետիք Իշխանյան, Ռաֆայել Պապայան, Հրանուշ Խառատյան, Կարապետ ավագ քահանա Գըլնճյան

Բանաստեղծություն, արձակ

Վահան Հարությունյան, Սերգեյ Պողոսյան, Եղիկ Սիրադեղյան, Արա Գեւորգյան, Արմեն Մուրադյան, Գոռիկ, Կարեն, Արամ Սարիբեկյան, Ռոբերտ Թամոյան, անհայտ, Ա. Ղազարյան, Սարգիս Շահմուրադյան, Հրայր Նարիմանյան, Սերգեյ Մարտիրոսյան, Սամվել Խանադյան, Հակոբ Հակոբյան, Վալերի Պարանյան, Վլադիմիր Բայանդուրյան (Մախարաշվիլի), Աշոտ Չիթիրյան, Պավել Սարգսյան, Մանվել Գալստյան, Հարություն Գրիգորյան

Մտորումներ ուղղիչ տնից

Եղիշե Չարենց, Ռաֆիկ Դավթյան, Պավել Սարգսյան

Բանտարկյալների հետ վարվեցողության
նվազագույն ստանդարտ կանոններ



Օգնեք նրանց վերադառնալ հասարակություն